ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ
ԱՐԵՎԵԼՔԻ
ԵՐԿՐՆԵՐ
ԵՎ
ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ

XVII

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ

XVII

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1998

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

СТРАНЫ И НАРОДЫ БЛИЖНЕГО И СРЕДНЕГО ВОСТОКА
XVII

ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА
ЕРЕВАН 1998

NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

THE COUNTRIES AND PEOPLES OF THE NEAR AND MIDDLE EAST
XVII

«GITUTYUN» PUBLISHING HOUSE NAS RA
YEREVAN 1998

ԴՏՀ 930.9
ԳՄԴ 63.3(5)
Մ 633

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Հովհաննիսյան Ն. Հ. (նախագահ), Խալաթյան Մ. Հ., Սարգսյան Ն. Խ.,
Քոսյան Ա. Վ.

Մ 633 Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ.— Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1998.— պր. XVII.— 1998, 240 էջ:

Ժողովածուն ընդգրկում է Մերձավոր և Միջին Արևելքի երկրների և ժողովուրդների պատմության տարբեր խնդիրների նվիրված ուսումնասիրություններ:

Զգալի տեղ են զբաղեցնում արդիականության ժամանակակից խնդիրները, ինչպես նաև արևելյան քաղաքակրթության հարցերը:

Մ $\frac{0503030000}{703(2)-98}$ ԳՄԴ 63.3(5)

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 1998

ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Հայերը գուցե իրենց պատմության արշալույսից ամենաբազմազան շփումներ են ունեցել հարևան երկրների ու ժողովուրդների հետ։ Սակայն պատմականորեն ո՛չ մի երկիր և ո՛չ մի ժողովուրդ, աշխարհագրական, հոգևոր-մշակութային և այլ առումներով այնքան մոտ չի եղել հայ ժողովրդին, որքան Իրանն ու իրանական ժողովուրդը։ Հանդիսանալով մարդկային քաղաքակրթության օրրաններից մեկը, վաղնջական ժամանակներից սկսած Իրանը հանդիսացել է իշխանության, մշակույթի և առևտրության կենտրոն։ Կարելի է անվարան ասել, որ Միջագետք ու Միջին Արևելքը, Կովկասը ու Կենտրոնական Ասիայի ոչ մի ժողովուրդ անմասն չի մնացել իրանական քաղաքակրթության բարիքներից ու կենսատու ազդեցություններից։ Հայաստանը ևս հնագույն ժամանակներից սկսած մեծ չափով ստացել է Իրանից և, փոխադարձաբար, տվել է նրան մշակութային արժեքներ։

Երեք հազարամյակ շարունակ Հայաստանի պատմությունը սերտորեն շաղկապված է եղել Իրանի պատմական զարգացման հետ՝ տարբեր դարաշրջաններում ապրելով վերադասավորվող Իրանի քաղաքական և կուլտուրական շահերով։

Նորագույն ժամանակներում հայ-իրանական հարաբերությունները ապրեցին նոր զարգացում։ Դիմանալով պատմության բազում փորձություններին, նրանք արձանագրեցին բարեկամության ու փոխադարձ վստահության նոր էջեր։

Իրանն առաջին պետություններից մեկն էր, որ 1918 թ. պաշտոնապես ճանաչեց Հայաստանի առաջին Հանրապետության անկախությունը և դիվանագիտական, քաղաքական ու տնտեսական աջակցություն ցույց տվեց հայկական նորաստեղծ պետությանը։

Հայաստանում խորհրդային կարգերի ժամանակ երկու երկրների միջև առևտրական ու քաղաքական հարաբերությունները, ըստ էության, խզված են եղել։ Այդ տարիներին Արաքս գետը ոչ թե երկու ժողովուրդներին միացնող, այլ բաժանող գետ էր, որովհետև 70 տարի շարունակ՝ ապրելով կողք-կողքի, ունենալով ընդհանուր սահմաններ և լինելով դարավոր հարևաններ, Հայաստանն ու Իրանը գործնականում չեն ունեցել շփման եզրեր։ Թեև պետք է խոստովանել, որ այդ չոր տասնամյակների ընթացքում հայ ժողովրդի կողմից երբեք չէր դադարել հետաքրքրությունն Իրանի, նրա ժողովրդի ու մշակույթի նկատմամբ։

1991 թ. սեպտեմբերի 21-ը մեր պատմության մեջ կմտնի գրված բախտորոշ տարեթիվ։ Այդ օրը՝ հայ ժողովրդի կամքով, նրա հերոսական ջանքերով, Խորհրդային Միության փլատակների վրա հառնեց հայոց նոր պետականությունը։

Անկախության հռչակումից հետո Իրանի Իսլամական Հանրապետությունը դարձյալ առաջին պետություններից մեկն էր, որ պաշտոնապես ճանաչեց Հայաստանի նորոգ անկախությունը։ Դա տեղի ունեցավ 1991 թ. դեկտեմբերի 25-ին։

Ի սկզբանե նորանկախ Հայաստանի արտաքին քաղաքականությունը խարսխվեց հետևյալ կարևորագույն դրույթի վրա. պետության և ժողովրդի անվտանգությունը խարսխված է բոլոր հարևանների հետ հարաբերությունների նորմալացման սկզբունքի վրա։ Ելնելով այս հիմնադրույթից, Հայաստանը եռանդուն քայլեր ձեռնարկեց իր հարավային հարևանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու ուղղությամբ։

1992 թ. փետրվարի 8-ին պաշտոնական այցով Իրանի Իսլամական Հանրապետություն մեկնեց Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը՝ ՀՀ արտաքին գործերի նախարար Րաֆֆի Հովհաննիսյանի գլխավորությամբ։ Տեղի ունեցած բանակցությունների ավարտից հետո՝ փետրվարի 9-ին, հայկական պատվիրակության ղեկավարը և Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին գործերի նախարար դոկտոր Ալի Աքբար Վելայաթին ստորագրեցին Հայաստանի և Իրանի միջև լիարժեք դիվանագիտական հարաբերություններ հաստատելու վերաբերյալ հուշագիր։ Կողմերը համաձայնության եկան նաև այն մասին, որ վերոհիշյալ փաստաթղթի ստորագրման պահից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, Երևանում և Թեհրանում կբացվեն դեսպանությունները։ Հուշագրում

շեշտվում էր նաև սահմանային կետեր և միջազգային ճանապարհներ առնելու անհրաժեշտությունը: Կողմերը ստորագրեցին նաև համաձայնագրեր երկու երկրների միջև տրանսպորտային փոխադրումների, սահմանային Արաքս գետի վրա կամրջի կառուցման վերաբերյալ:

Նույն օրը ստորագրվեց նաև Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև հարաբերությունների սկզբունքների և նպատակների մասին հռչակագիրը, որով կողմերը հավաստում էին բարիդրացիական հարաբերություններ հաստատելու իրենց մտադրությունը, որպես գործունեության հիմնարար ընդունելով փոխադարձ տարածքային ամբողջականության նկատմամբ հարգանքի և միմյանց գործերին չմիջամտելու սկզբունքները:

1992 թ. փետրվարի 28-ին իր առաջին պաշտոնական այցով Երևան ժամանեց Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին գործերի նախարար, դոկտոր Ալի Աքբար Վելայաթին, որն ընդունվեց ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի կողմից: Հիրավի, այդ այցը նոր թափ հաղորդեց հայ-իրանական հարաբերություններին: Իրանի արտաքին քաղաքականության ղեկավարը կարևորեց Իրանի համար Հայաստանի՝ որպես իր անմիջական և հուսալի հարևաններից մեկի, հետ համակողմանի հարաբերություններ հաստատելու անհրաժեշտությունը: Նա հատկապես շեշտեց, որ այսուհետև Իրանը Հայաստանի համար կլինի աշխարհին հաղորդակցվելու ամենակարճ միջոցը և վերջինիս այլևս չեն սպառնա ցամաքային շրջափակումները:

Ի դեպ, Վելայաթիի այցի կարևորագույն նպատակներից մեկն էր նաև Իրանի միջնորդական առաքելության շրջանակներում ղարաբաղյան կոնֆլիկտի խաղաղ կարգավորման հնարավորություններն ուսումնասիրելու և քաղաքական նախաձեռնությունների շուրջ փոխըմբռնման եզրերի որոնումը:

Երկու երկրների հարաբերությունների հետագա զարգացման գործում շրջադարձային նշանակություն ունեցավ մայիսի 6-8-ին՝ ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի և նրան ուղեկցող պատվիրակության այցն ԻԻՀ: Այդ այցի ժամանակ ՀՀ նախագահի և ԻԻՀ նախագահ Աքբար Հաշեմի Ռաֆսանջանիի միջև ստորագրվեց համատեղ հայտարարություն համագործակցության, բարեկամության և բարիդրացիության մասին, որը դարձավ երկու երկրների միջպետական հարաբերությունների հիմքում ընկած կարևորագույն փաստա-

թուղթը։ Իրանով երկկողմ հարաբերությունները դրվում էին պետական բարձր մակարդակի վրա։

Փաստաթղթում նշվում էր, որ Հայաստանի Հանրապետությունը և Իրանի Իսլամական Հանրապետությունը՝ որպես իրավահավասար երկու բարեկամ և դրացի պետություններ, կզարգացնեն երկկողմանի հարաբերությունները։ Երկու պետությունները՝ ելնելով միմյանց ինքնիշխանության, տարածքային ամբողջականության, ներքին գործերին չմիջամտելու, ուժային սպառնալիքից ձեռնպահ մնալու, տարաձայնությունները խաղաղ ճանապարհով լուծելու, փոխադարձ շահերի, միջազգային պարտավորությունների նկատմամբ հարգանքի սկզբունքներից, ձեռնամուխ կլինեն իրենց հարաբերությունների զարգացմանը։

Համատեղ հայտարարության մեջ հատուկ ընդգծվում էր, որ երկու պետությունները միմյանց ընդհանուր սահմանները դիտում են որպես խաղաղության սահմաններ։ Հաշվի առնելով յուրաքանչյուր երկրում գոյություն ունեցող հնարավորությունները, երկկողմանի հարաբերություններն էլ ավելի զարգացնելու նպատակով, կողմերը համաձայնվում էին պատրաստել և կնքել համագործակցության երկարաժամկետ համաձայնագրեր և առավելագույնս օգտագործել միմյանց հնարավորությունները և ներուժը։

Նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության աշխարհաքաղաքական դիրքը, նրա ներքին իրողությունները, մասնավորապես՝ Ադրբեջանի և Թուրքիայի կողմից տրանսպորտային շրջափակումը, Ռուսաստանի հետ ընդհանուր սահմանի բացակայությունը, Վրաստանում այդ ժամանակաշրջանում տեղ գտած ժամանակավոր ապակայունացումը, որը գործնականում Ռուսաստանին զրկում էր վրացական երկաթուղիներից անարգել օգտվելու հնարավորությունից և մի շարք այլ գործոնների պատճառով, ի սկզբանե Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության մեջ Իրանի հետ հարաբերություններին տրվեցին առաջնայնություն և հույժ կարևորություն։ Դրա կենսական անհրաժեշտությունը մատաղ հանրապետության համար պայմանավորված էր նաև նրանով, որ գտնվելով Իրանի հետ միևնույն տարածաշրջանում և նրա անմիջական հարևանությամբ, բայց անկախություն չունենալով, Հայաստանը դուրս էր մնում տարածաշրջանից ու նրա տնտեսական-քաղաքական զարգացումներից։ Մինչդեռ անկախության ձեռքբերումով, Հայաստանն Իրանի հետ հայտնվեց նույն տարածաշրջանում,

Հետևաբար, արտակարգ հրատապ հարց էր դառնում եվրոպական պետության ընդգրկումը տարածաշրջանային քաղաքական կյանքում։ Իսկ դա, ինքնըստինքյան, նշանակում էր, որ այսուհետ Հայաստանն ու Իրանն ունենալու են բազմաթիվ ընդհանուր շահեր։

Պետք է նաև նկատի ունենալ հետևյալ կարևորագույն հանգամանքը. Իրանն՝ իր առանձնահատուկ դիրքով, վիթխարի տարածքով, համաշխարհային նշանակություն ունեցող կոմունիկացիաներով, նրա ափերը ողողող Պարսից ծոցի և Օմանի ծոցի առկայությամբ և այլն, մի յուրահատուկ կապող օղակ է ոչ միայն իր սահմանակից պետությունների, այլև ամբողջ տարածաշրջանների՝ Կովկասի, Միջին Ասիայի, Հնդկական թերակղզու, արաբական աշխարհի հետ։ Հիրավի, Իրանը համաշխարհային մասշտաբով մի տարանցիկ կամուրջ է, աշխարհի կարևորագույն ռազմավարական շրջաններից մեկը։ Այդ երկիրն ունի ոչ միայն պատկառելի բնական ու մարդկային ռեսուրսներ, այլև հսկայական տնտեսական ներուժ։ Նա իրենից ներկայացնում է Մերձավոր ու Միջին Արևելքում ռազմաքաղաքական հարաբերակցությունը հավասարակշռող ազդու ուժ։

Այս բոլորը բավական է հասկանալու համար, թե ո՞րն էր լինելու Իրանի դիրքն անկախ Հայաստանի կյանքում։ Իրանը նախ և առաջ պատուհան է Հայաստանի համար՝ բացված դեպի արտաքին աշխարհ։ Ընդ որում, դա մշտական, կայուն և անփոփոխելի արժեք է։ Անժխտելի է նաև այն հանգամանքը, որ Հայաստանն ու Իրանը ներկա աշխարհի իրողություններում ունեն բազմաթիվ ընդհանուր, այդ թվում նաև ռազմավարական շահեր, առանձին դեպքերում նույնիսկ համանման խնդիրներ, տարբեր տեսակի ընդհանրություններ, վերջապես պատմական ավանդական կապեր և այլն։ Անկասկած է նաև, որ Իրանի շահերը պահանջում են ամրապնդել Հայաստանի պետական անկախությունը, ընդգրկել այն իր տարածաշրջանային քաղաքականության ոլորտը, օգտագործել նրա ճյուղավորված կապերն ԱՊՀ երկրների, մասնավորապես Ռուսաստանի հետ, օգտվել հայ սփյուռքի աջակցությունից՝ Արևմուտքում իրանանպաստ իմիջ ստեղծելու համար, համագործակցել Հայաստանի հետ ՄԱԿ-ի և միջազգային այլ կազմակերպությունների շրջանակներում և այլն։

Վերոհիշյալ գործոնները խթան հանդիսացան Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև հարաբերությունների վերընթաց զարգացման համար։

1992 թ. ապրիլին, Երևանում՝ հանդիսավոր պայմաններում, տեղի ունեցավ Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանության պաշտոնական բացումը։ Գործերի ժամանակավոր հավատարմատարի պաշտոնը ստանձնեց իրանական փորձառու դիվանագետ Բահրամ Ղասեմին, որին հետագայում փոխարինեցին Ահմադ Սոբհանին և Հայաստանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետության առաջին արտակարգ և լիազոր դեսպան Համիդ Ռեզա Նիքքար Էսֆահանին։

1992 թ. սեպտեմբերի 23-ին իրանական «Ալբիրունի» օդային ընկերության ինքնաթիռով Թեհրան ժամանեց Իրանի Իսլամական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության գործերի ժամանակավոր հավատարմատար նշանակված տողերիս հեղինակը, որը երկու տարի այդ կարգավիճակով պաշտոնավարելուց հետո՝ 1994 թ. նոյեմբերի 9-ին նշանակվեց ԻԻՀ-ում ՀՀ առաջին արտակարգ և լիազոր դեսպան։

Թեհրանում Հայաստանի Հանրապետության դեսպանության պաշտոնական բացումը տեղի ունեցավ 1992 թ. դեկտեմբերի 22-ին։ Բացման արարողությանը մասնակցում էին ՀՀ փոխնախագահ Գագիկ Հարությունյանը՝ իրեն ուղեկցող պատվիրակության հետ, Իրանի արտգործնախարարության բարձրաստիճան դիվանագետներ՝ փոխնախարար Մահմուդ Վայեզիի գլխավորությամբ, Թեհրանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ, Իրանի հայ համայնքի հոգևոր և աշխարհիկ իշխանությունների ներկայացուցիչներ և բազմաթիվ հյուրեր։ Հայաստանի օրհներգի՝ «Մեր Հայրենիքի» հնչյունների ներքո Գագիկ Հարությունյանը և Վահան Բայբուրդյանը բարձրացրին Հայաստանի Հանրապետության պետական դրոշը՝ եռագույնը։

Բնավ պատահական չէ, որ հենց սկզբից հայ-իրանական համագործակցության ամենածավալուն ու ակտիվ բնագավառները էին դառնալու առևտուրն ու տնտեսությունը։ Հայաստանի շրջափակման և տնտեսական դժվարությունների պայմաններում Իրանի հետ համագործակցության մեջ Հայաստանի Հանրապետությունը տեսնում էր տնտեսական առկա խնդիրների լուծման կարևորագույն ուղիներից մեկը։ Այդ գործը կայուն հիմքերի վրա դնելու և արդյունավետ կերպով զարգացնելու նպատակով, 1992 թ. նոյեմբերին ՀՀ նախագահի հրամանագրով ստեղծվեց «Հայ-իրանական հարաբերությունները համակարգող պետական հանձնաժողով», որը

ղեկավարեց ՀՀ փոխնախագահ Գագիկ Հարությունյանը։ Այն իսկապես իր խոշոր լուման ներդրեց հայ-իրանական տնտեսական հարաբերությունների պատշաճական զարգացման ու ծավալման գործում։ Երկու երկրների միջև առևտրատնտեսական հարաբերությունները խթանելու նպատակով Թեհրանում ստեղծվեց նաև «Իրան-Հայաստան առևտրական պալատ»՝ իրանահայ ճանաչված գործարար, միջազգային բեռնափոխադրումների «Սաթիս» ընկերության ղեկավար Լևոն Ահարոնյանի ղեկավարությամբ։ Պալատի մեջ ընդգրկվեցին ինչպես հայ, այնպես էլ իրանցի մեծ թվով գործարարներ։

Միանգամայն ակնհայտ է, որ հայ-իրանական առևտրատնտեսական հարաբերությունների սկզբնավորման ու ծավալման համար անհրաժեշտ էր Արաքս գետի վրա կառուցել Հայաստանն Իրանին կապող կամուրջ։ Նրա գոյությունն անհրաժեշտ էր նաև Հայաստանի ցամաքային ճանապարհների շրջափակումը ճեղքելու և դեպի արտաքին աշխարհ դուրս գալու կենսական նշանակություն ունեցող խնդիրը լուծելու համար։ Այդ կարևորագույն հարցին ընթացք տալու նպատակով ստեղծվեց նախաձեռնող խումբ՝ Թելման Տեր-Պետրոսյանի (աշխատանքային խմբի ղեկավար), Ժորա Միրզաբեկյանի և Ալբերտ Ավետիսյանի ղեկավարությամբ, որն անմիջապես ձեռնամուխ եղավ աշխատանքներին։ Նախաձեռնող խմբին գործուն աջակցություն էին ցույց տալիս իրանահայ հայրենասեր գործիչ Լևոն Ահարոնյանը և ուրիշներ։

Հայաստանի Հանրապետության կառավարության գործուն աջակցությամբ՝ կարճ ժամանակամիջոցում հնարավոր եղավ Արաքսի վրա՝ Մեղրու Ագարակ ավանի դիմաց, տեղադրել ժամանակավոր նավակամուրջ (պոնտոնային կամուրջ), որի պաշտոնական բացումը տեղի ունեցավ 1992 թ. մայիսի 6-ին։ Կամրջի բացման արարողության ժամանակ ՀՀ փոխնախագահ Գագիկ Հարությունյանն իր ելույթում նշեց, որ Մեղրու նավակամրջի շահագործումը մեծ ծրագրի սկիզբն է, որով մշտական կապ է ստեղծվում հարևան և բարեկամ երկրի՝ Իրանի Իսլամական Հանրապետության հետ։

Հիրավի, այդ ժամանակավոր կամուրջը դարձավ «փրկության ուղի», «հույսի կամուրջ», «կյանքի ճանապարհ», «բարիքատար անոթ», որը կոչված էր սնել շրջափակման հետևանքով հեղհեղձ հյուծվող մարմինը՝ Հայաստանի Հանրապետությունը։ Այսպիսով,

Իրանը եղբայրական օգնության ձեռք մեկնեց մեր մանուկ Հանրապետությանը՝ ճեղքելու շրջափակման օղակը և դուրս գալու լայն աշխարհ։

Շուտով այդ կամուրջը դարձավ ուղևորների ու բեռների տեղափոխման բանուկ ճանապարհ։ Մեղրու շրջանում բացվեց սահմանային կետ, որն այնուհետև վերածվեց միջազգային անցումային կետի, սահմանագծում հիմնվեցին մաքսատներ և այլն։ Սկսվեց Իրանի տարածքով տարանցիկ բեռների փոխադրումը Հայաստան։ Թափ առավ նաև Հայաստանի տարածքով իրանական բեռնատար մեքենաների տրանզիտային անցումը դեպի Սև ծով և հակառակ ուղղությամբ։

Սակայն ժամանակավոր կամուրջն ի վիճակի չէր բավարարելու հարաճուն կերպով զարգացող հայ-իրանական առևտրատնտեսական հարաբերությունների պահանջները։ Ուստի ՀՀ և ԻԻՀ կառավարությունները՝ 1992 թ. մայիսի 14-ին կնքված միջպետական համաձայնագրի համաձայն, ձեռնամուխ եղան համատեղ մշտական կամրջի նախագծման և կառուցման աշխատանքներին։ Շնորհիվ Ավստրալիայի հայության դրամական աջակցության, հայկական կողմի համար գործնականում լուծվեց կամրջի շինարարության ֆինանսավորման խնդիրը։

Արաքսի վրա մշտական կամրջի շինարարությունն ավարտվեց 1995 թ. դեկտեմբերին, իսկ Հայաստանի և Իրանի կողմից պաշտոնական բացումը կատարվեց 1996 թ. հունվարի 9-ին։

Բացման արարողությանը մասնակցելու համար հայկական նորակառույց կամրջի վայրն էին ժամանել ՀՀ փոխնախագահ, հայ-իրանական կապերի համակարգման պետական հանձնաժողովի նախագահ Գագիկ Հարությունյանը, նշված հանձնաժողովի անդամները, ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ, Իրանի Իսլամական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Վահան Բայբուրդյանը, Մեղրու և Ղափանի շրջանների ղեկավարները։ Իրանական կողմից ժամանել էին ԻԻՀ էկոնոմիկայի և ֆինանսների նախարար, Իրան-Հայաստան կապերի կոորդինացման հանձնաժողովի նախագահ Մորթեզա Մոհամմադխանը, հաղորդակցության, ճանապարհների և փոխադրումների նախարար Թորքանը, ԻԻՀ խորհրդարանի (մեջլիսի) հայազգի պատգամավորներ Վարդան Վարդանյանը և Արտավազդ Բաղումյանը, Հայաստանի Հանրապետությունում ԻԻՀ արտակարգ և լիազոր

դեսպան Համիդ Ռեզա Նիքքար Էսֆահանին և պաշտոնատար այլ անձինք:

Մշտական կամրջի շահագործման հանձնումը նոր հզոր լիցք հաղորդեց հայ-իրանական առևտրատնտեսական հարաբերություններին: Երևանում բացվեց իրանական հայտնի բանկերից մեկի՝ «Բանկե Մելլաթի» բաժանմունքը, որը կոչված էր հեշտացնել երկու երկրների միջև առևտրական գործարքները, երկու երկրներում բացվեցին մասնավոր և պետական առևտրական ձեռնարկությունների մասնաճյուղեր, կազմակերպվեցին առևտրաարդյունաբերական ցուցահանդեսներ և այլն:

Անցած տարիների ընթացքում և՛ Հայաստանի, և՛ Իրանի մշտական ուշադրության կենտրոնում է եղել միմյանց միջև ցամաքային և օդային հաղորդակցության կատարելագործման ու զարգացման խնդիրը: Մինչև 1993 թ. երկու երկրների միջև օդային կապն իրականացնում էր իրանական «Իրանէյրթուր» ընկերությունը: Իսկ 1993 թվականից սկսեց գործել Երևան-Թեհրան-Երևան օդային կանոնավոր թռիչքը, որն իրագործում է «Հայկական ավիաուղիներ» ընկերությունը: 1996 թ. հոկտեմբերի 31-ից Թեհրան-Երևան-Թեհրան չվերթով շաբաթական մեկ թռիչք սկսեց կատարել նաև իրանական «Կասպիան էյրլայնզ» ավիաընկերությունը:

Երևանի և Թեհրանի միջև կանոնավոր ավտոբուսային երթևեկություն է իրագործվում հայկական և իրանական տրանսպորտային ընկերությունների կողմից: Երկու երկրների միջև տեղի են ունենում խոշոր ծավալներով ավտոմոբիլային բեռնափոխադրումներ, այդ թվում նաև տարանցիկ բեռների փոխադրում:

Հայաստանն ու Իրանը դարձել են միմյանց համար կարևորագույն առևտրական գործընկերներ: 1997 թվականին՝ 1994 թ. համեմատությամբ, Հայաստանի ապրանքաշրջանառությունն Իրանի հետ ավելացավ մոտ երեք անգամ: Իրանի Իսլամական Հանրապետությունը Հայաստանի-արտաքին առևտրի մեջ գրավեց առաջին տեղը: Երկու երկրների առևտրատնտեսական հարաբերությունների մեջ նորն այն էր, որ Իրանի մի շարք նահանգների (Ատրպատականի, Գիլյանի, Քերմանի, Սպահանի և այլնի) գործարար շրջանները ուղիղ չմիջնորդավորված կապերի մեջ մտան Հայաստանի հետ:

1997—1998 թվականներին Հայաստան-Իրան առևտրատնտեսական հարաբերությունները հասան մի հանգրվանի, երբ անհրաժեշտություն զգացվեց քանակական չափանիշներից անցում կատա-

րել գծալի ոլորտական չափանիշները։ Կյանքը հրամայական խնդիր էր դնում վերացարկվել պարզ առևտուր վարելու քաղաքականությունից՝ որպես համագործակցության գերազանց սկզբունք, և երկու երկրների կապերը դիտարկել տնտեսական ինտեգրացման տեսանկյունից՝ հենված փոխզարգացման վրա։ Այլ կերպ ասած, անհրաժեշտ էր տնտեսական հարաբերություններն առևտրի ոլորտից ավելի մեծ չափով տեղափոխել արտադրատնտեսական համագործակցության ոլորտ, արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության բնագավառներ, խորացնել համագործակցությունը գիտության, նորագույն տեխնոլոգիաների, արդյունաբերական սարքավորումների, տեխնիկական գիտելիքների փոխանակման և այլ բնագավառներում։

Նշված շրջանում ավելի մեծ կարևորություն ձեռք բերեցին և էլ ավելի հեռանկարային դարձան համագործակցության ծրագրերը էներգետիկայի և տրանսպորտի բնագավառներում։ 1995 թ. կնքվեցին համաձայնագրեր Իրան—Հայաստան գազամուղի (Թավրիզ—Մեղրի), բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծի, Արաքս գետի վրա համատեղ հիդրոէլեկտրակայանի կառուցման վերաբերյալ։ 1997 թվականից սկսած բարձրավոլտ էլեկտրահաղորդման գիծը շահագործման է հանձնվել, և Հայաստանը սկսել է ձեռնտու պայմաններով Իրանից ստանալ էլեկտրաէներգիա։ Ինչ վերաբերում է գազամուղին, ապա նրա նախագծային աշխատանքներն արդեն ավարտվել են, և առաջիկայում կսկսվի Հայաստանի համար այդ կարևորագույն խնդրի գործնական իրականացումը։ Արդեն մի քանի տարի է, ինչ գործում է Իրան-Հայաստան ավտոմատ հեռախոսային կապը, որը գնալով կատարելագործվում ու տեխնիկապես նորացվում է։ Նախագծեր կան Հայաստանն օպտիկա-թելային հեռախոսային գծով Իրանի տարածքի վրայով կապելու Եվրոպայի և Ասիայի հետ։ Իրանը մասնակցում է Մեղրի-Երևան ավտոմայրուղու վերակառուցման ու բարեկարգման աշխատանքներին։ Ակնառու հաջողություններ է ձեռք բերել նաև երկու երկրների արդյունաբերական հզորությունների կոոպերացումը, ստեղծվում են համատեղ ձեռնարկություններ և այլն։ Բավական է ասել, որ 1997 թ. տվյալներով Հայաստանում գործում էին 250 համատեղ հայ-իրանական ընկերություններ։ 1997 թ. Երևանում բացվեց իրանական ապրանքների բաշխման տերմինալ, որն ունի մեխանիկական բեռնավորման

բեռնաթափման կառամատույցներ և կապված է Հայկական երկաթուղային ցանցին։

1997 թ. Երևանում կազմակերպված իրանական արդյունաբերական և լայն սպառման ապրանքների խոշոր ցուցահանդեսը, որը վերստին եկավ վկայելու, որ հայ-իրանական առևտրատնտեսական հարաբերությունները թևակոխել են որակական զարգացման մի նոր փուլ։ Դժվար չէ նկատել նաև, որ երկու երկրների տնտեսական համագործակցությունն ընդգրկել է նաև ենթակառուցվածքների ստեղծման բնագավառը։

Պետք է նկատի ունենալ, որ Հայաստանի շուկան՝ իր սահմանափակ հնարավորություններով հանդերձ ԱՄՆ-ի կողմից տնտեսական շրջափակման մեջ գտնվող Իրանի համար քնայով ավելի ու ավելի է արժևորվում, մանավանդ, որ իրանական ներքին շուկան արդեն ձեռք է բերել կրիտիկական զանգված և կարիք ունի արտաքին նոր շուկաների։

Գաղտնիք չէ նաև, որ ներկայումս Հայաստանի տնտեսության զարգացման հաջողությունը մեծապես կախված է արտասահմանյան ներդրումներից։ Թեև Իրանը, կապիտալների ավելցուկի բացակայության պատճառով, խուսափում է արտասահմանում ներդրումներ կատարելուց, սակայն փոքր բիզնեսի բնագավառում ինքն է դրսևորում նախաձեռնություն։ Անկասկած, փոխշահավետության սկզբունքի վրա իրանական ներդրումների դեպքում երկու երկրներն էլ կարող են լավագույնս օգտվել այդ համագործակցության պտուղներից։

Հայ-իրանական համագործակցության հեռանկարային հնարավորություններ կան գիտության և մշակույթի բնագավառներում։ Հայերն ու իրանցիները հզոր մշակույթ ունեցող ժողովուրդներ են, և նրանց միջև մշակութային համագործակցությունը փոխադարձաբար կարող է հարստացնել երկու ժողովուրդներին և նպաստել ստեղծելու նոր որակներ ու արժեքներ։ Երկու երկրների միջև գիտական և մշակութային հարաբերությունների հիմքը դրվեց 1992 թ. մայիսի 7-ին՝ կողմերի միջև ստորագրված համաձայնագրով, որի շնորհիվ նրանց միջև այդ բնագավառներում ևս ծավալվեցին ակնառու հարաբերություններ։ Իրանը հատկապես մեծ հետաքրքրություն է դրսևորում Հայաստանի գիտատեխնիկական ներուժի, ինչպես նաև հիմնարար գիտությունների բնագավառում նրա ունեցած ձեռքբերումների նկատմամբ։ Այս բնագավառում կան համագործակցության անսպառ հնարավորություններ։ Ներկայումս հայ

և իրանցի գիտնականները սերտորեն համագործակցում են նաև սեյսմիկ պաշտպանության ոլորտում, որը երկուստեք ունի կենսական նշանակություն։

Հայաստանի և Իրանի միջև երկկողմ գիտամշակութային կապերը զարգանում են պայմանագրային հիմքի վրա, կատարվում են մշակույթի գործիչների փոխայցելություններ, կազմակերպվում են մշակութային բազմաթիվ միջոցառումներ, փառատոններ և այլն։ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ Թեհրանի իսլամական համալսարանում բացվել է հայագիտական բաժին, իսկ Երևանի Հրաչյա Աճառյանի անվան համալսարանում՝ իրանագիտական բաժին։

Գաղտնիք չէ, որ Հայաստանի Հանրապետությունը զուրկ է արտաքին աշխարհ դուրս գալու համար հարմար կոմունիկացիաներից։ Այդ բնական անհարմարությանն ավելանում է նաև նրա հարևանների կողմից քաղաքական նպատակներով իրագործվող տրանսպորտային արհեստական շրջափակման մշտական հավանականությունը։ Նման պայմաններում, անշուշտ, կենսական անհրաժեշտություն է դառնում Իրանը Հայաստանի հետ կապող երկաթուղագծի շինարարությունը, որն ի վիճակի կլինի Հայաստանի համար արտաքին աշխարհի հետ ապահովել հուսալի տրանսպորտային կապ։

Հիշյալ խնդիրը լուծելու համար դեռևս 1992 թվականից կատարվել են որոշակի քայլեր։ Այսպես, 1992 թ. մարտի 11-ին Երևան ժամանեց Իրանի հաղորդակցության, ճանապարհների և փոխադրումների նախարարության 14 հոգուց բաղկացած պատվիրակությունը՝ տրանսպորտի գծով փոխնախարար Մայիք Նեմաթի գլխավորությամբ։ Ի թիվս մի շարք այլ հարցերի, պատվիրակության խնդիրն էր զբաղվել Իրանը Հայաստանի հետ կապող երկաթգծի շինարարության հնարավորությունների ուսումնով։ Այդ հարցի լուծումը կենսական անհրաժեշտություն է Հայաստանի համար, որովհետև Երևան-Նախիջևան-Ջուլֆա-Թավրիզ երկաթգիծը՝ հայտնի իրադարձությունների պատճառով, փակվել է և չի գործում։ Միանգամայն ակնհայտ է, որ բացման հեռանկարները առ մոտ ապագայում չեն երևում։

Ուստի վերոհիշյալ իրանական պատվիրակությունը՝ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և հաղորդակցության նախարարության հետ համատեղ, սկսեց քննարկել Իրանը Հայաս-

տանի հետ կապող երկաթուղագծի մի շարք տարբերակներ։ Տարբերակներից մեկով նախատեսվում էր Մեղրիից երկաթգիծ կառուցել կամ դեպի Նորաշենական, կամ դեպի Ջերմուկ՝ հետագայում Մարտունի-Եարմա գծին միանալու պայմանով։ Ինչ վերաբերում է այդ երկաթգծի իրանական հատվածին, ապա՝ հայկական կողմի առաջարկած տարբերակով նպատակահարմար էր կառուցել Մեղրի-Ջուլֆա, կամ Մեղրի-Մարանդ հատվածը։ Մինչդեռ իրանական կողմը գտնում էր, որ Իրանի տարածքում երկաթգիծը պետք է կառուցվի ոչ թե Ջուլֆայից մինչև Մեղրի, որի հեռավորությունը 64 կմ է, այլ Ալամդար քաղաքից մինչև Մեղրի՝ 45 կմ երկարությամբ։ Այս տարբերակը հիմնավորվում էր ոչ թե տնտեսական նպատակահարմարությամբ, այլ գլխավորապես ռազմավարական նկատառումներով, գտնելով, որ երկաթգիծը Արաքսի ափերով անցնելու դեպքում՝ Նախիջևանի կողմից վտանգի ենթարկման հավանականությունը մեծանում է։ Մինչդեռ մյուս տարբերակի դեպքում, որը գալիս է երկրի խորքից և չի անցնում սահմանամերձ ճանապարհներով, այդ վտանգի հավանականությունը, ըստ էության, բացառվում էր։

Պետք է նշել, որ հարցի քննարկումը վերջնական եզրահանգումներ չունեցավ, չնայած որ այն շարունակվում է արծարծվել մինչև օրս։

Միանգամայն ակնհայտ է, որ երկաթուղային այդ ծրագրի իրականացման դեպքում Հայաստանը հնարավորություն կստանա իրանական երկաթուղային ցանցի օգնությամբ ոչ միայն մուտք գործել դեպի հուսալի կոմունիկացիաները և դուրս գալ ողջ աշխարհ, մասնավորապես դեպի Պարսից ծոց, Հնդկաստան, Միջին Ասիա, Չինաստան և այլն, այլև ընդհանրապես բացառել իր տրանսպորտային հավանական շրջափակումները։ Նույնիսկ Հայաստանի երկաթուղիների ապաշրջափակման դեպքում այդ երկաթուղագիծը կարող է դառնալ այլընտրանքային և ապահովել Ադրբեջանից ու Թուրքիայից Հայաստանի տրանսպորտային կախվածության վերացումը։

Նշված երկաթուղագծի շինարարությունը տնտեսական, քաղաքական և ռազմավարական առումով ձեռնտու է նաև Թեհրանին, որովհետև նա ձգտում է ստեղծել Իրանն Անկախ Պետությունների Համագործակցության երկրներին և Սև ծովի ավազանին կապող ցամաքային կոմունիկացիաների մի ցանց։ Այդ հարթության վրա

Հայաստանի դերն ու նշանակությունն Իրանի համար՝ որպես կամուրջ դեպի հյուսիս ու արևմուտք, կարող է էապես բարձրանալ և դառնալ որոշիչ գործոն երկու երկրների առևտրական և աշխարհա-քաղաքական համագործակցության ամրապնդման համար։

Պետք է նկատի ունենալ նաև հետևյալ հանգամանքը. ան-կասկած, կասպյան նավթը Վրաստանի տարածքով դեպի Թուրքա-կան Ջեյհան նավահանգիստը հասցնելու նախագիծը մի կողմ է թողնում Հայաստանին, ավելին՝ նրան դուրս է թողնում տարածաշրջանային իրողությունների շրջանակից, որի արդյունքում նա նշանակալիորեն կարող է զրկվել իր աշխարհա-քաղաքական կարևոր դերն օգտագործելու հնարավորությունից։ Ի դեպ, միանգամայն անհնար է, որ Թուրքիայի ակտիվ նախա-ձեռնությունները Կարս-Ախալքալաք-Մարաբդա երկաթուղու կառուց-ման ուղղությամբ նույնպես Հայաստանը և Իրանը շրջանցելու տարբերակ է։ Դա կարող է շատ բան փոխել տարածաշրջանի ուժերի դասավորության մեջ, թեև, անշուշտ, չի կարող ստեղծել ակնհայտո-րեն նոր իրավիճակ։

Այդ կապակցությամբ Հայաստանի համար առանձնապես կարևոր է դառնում միջազգային բեռնափոխադրումների այ-լընտրանքային մեկ այլ ուղու ստեղծումը, տվյալ դեպքում խոսքը վերաբերում է Թավրիզ-Մեղրի-Երևան-Բաթում (ԹՄԵԲ) ավտո-մայրուղուն, որն անկասկած հսկայական թափով կոչված է նաև Հայաստանի քաղաքական հնարավորությունների մեծացման ուղ-ղությամբ։

Ճիշտ է, Հայաստանի նյութական հնարավորությունները առայժմ խիստ սահմանափակ են նման խոշոր նախագծեր իրա-կանացնելու համար, սակայն նկատի ունենալով, որ խոսքը նը-րա քաղաքական ապագայի մասին է, անհրաժեշտ է ուղիներ որոնել այդ ծրագրերի իրականացման համար, ընդ որում մշտապես հիշելով, որ նման տրանսպորտային ցանցի ստեղծմամբ շահագրգռ-ված են նաև Իրանը և Ռուսաստանը, ասել և չի բացառվում նրանց մասնակցությունն այդ հարցի լուծմանը։

Ներկայումս Հայաստանի համար հույժ կարևոր է նաև Պարսից ծոցի Բանդար-Աբբաս նավահանգստի օգտագործման ծավալների մեծացումը։ Արդեն մի քանի տարի է, ինչ խոշոր մասշտաբներով իրականացվում է Պարսից ծոց-Իրան-Հայաստան սխեմայի օգտա-գործումն առևտրատնտեսական նպատակներով։

Բանդար-Աբբաս նավահանգիստը ծառայում է որպես փոխադրման կետ ծոցի ավազանի (հատկապես՝ Արաբական Միացյալ Էմիրությունների) և Հարավարևելյան Ասիայի երկրներից տարանցիկ բեռներ Հայաստան տեղափոխելու համար: Բանդար-Աբբասի վրայով Հայաստանը կապվում է նաև Հնդկական սուբկոնտինենտի խոշորագույն նավահանգիստներից մեկի՝ Կարաչիի հետ:

Մի խոսքով, Իրանի գլոբալ քաղաքական ծրագրերում գնալով ավելի հստակորեն է ուրվագծվում Հայաստանի դրական հանգուցային դերը, մանավանդ, եթե նկատի ունենանք Հյուսիս-Հարավ և Իրան-Սև ծով-Արևմուտք ճանապարհների վրա նրա խաչմերուկային նշանակությունը: Իրանի քաղաքական շրջանակների կարծիքով, Հայաստանն իր մտավորական կազմով, արդյունաբերական հնարավորություններով, գիտական ներուժով և այլն՝ հեռանկարային պետություն է:

Իրանի համար Հայաստանի հետ հարաբերությունների զարգացումը ձեռք է բերում խոշոր կարևորություն նաև այն առումով, որ Հայաստանը իր միակ սահմանակից քրիստոնյա պետությունն է, ուստի նրա հետ բարիդրացիական հարաբերությունները կարող են իսլամի և քրիստոնեության խաղաղ գոյակցության ցուցադրման մի օրինակելի նմուշ հանդիսանալ փարատելու համար Արևմուտքում լայնորեն տարածված այն տեսակետը, որ իրանական հեղափոխական բնույթի ֆունդամենտալիզմը տոգորված է կրոնական այլամերժության ու հարձակողական ռևանշիզմի ոգով:

Միանգամայն ակնհայտ է նաև, որ ներկայումս Իրանի Իսլամական Հանրապետությունը կենսականորեն շահագրգռված է Հայաստանին ավելի եռանդուն կերպով ընդգրկելու իր տարածաշրջանային քաղաքականության շրջանակների մեջ, ընդ որում ոչ միայն երկկողմ, այլև բազմակողմ հարաբերությունների հիմքի վրա: Այդ մասին է վկայում այն, որ արդեն գործող Իրան-Հայաստան-Թուրքմենստան եռակողմ համագործակցությունից բացի, վերջերս ձևավորվել է նաև Իրան-Հայաստան-Հունաստան համագործակցությունը:

Հանրագումարի բերելով վերևում ասվածը, անհրաժեշտ է շեշտել, որ Իրանի Իսլամական Հանրապետության հետ Հայաստանի Հանրապետության տնտեսական և քաղաքական հարաբերությունների զարգացումը հայ ժողովրդի ազգային ու պետական շահերի

տնտեսականից սկսի կենսական նշանակություն։ Այդ հարաբերություն-ները հնարավորություն են և խոստումնալից։ Ուստի անհրաժեշտ է ամեն կերպ ծավալել Հայաստանի Հանրապետության հետ ակ-տիվ կառուցողական քաղաքականություն։ Իրանն այսօր կարևոր գործոն է Հայաստանի առջև դրված բազմակողմ ազգային շահերի պաշտպանման գործընթացում և կարևոր է անվերապահ ասել, որ նրա այդ դերն ապագայում գնալով մեծանալու է։

VAHAN BAYBURTYAN

ARMENIAN-IRANIAN RELATIONS AFTER THE INDEPENDENCE OF ARMENIA

After the declaration of independence of the Republic of Armenia on September 21, 1991, the Islamic Republic of Iran was among the first to recognize officially Armenia's independence and to establish diplomatic relations. The development of interstate relations between two countries began to take shape steadfastly. Relations with Iran were given priorities and utmost importance in foreign policy of the Republic of Armenia.

An attempt is made in the article to define and elucidate the role of Iran in independent Armenia's life. It is shown in particular that in the beginning of formation of ties between the two countries, trade and economy became the most enlarged and dynamic spheres of activities of Armenia-Iran cooperation. In the conditions of blockade of Armenia and economic hardships, the Republic of Armenia considered its ties with Iran as one of the important means to solve the existing economic problems. Iran also helped Armenia to break the blockade and get through the territory of Iran to the «outer world», to Persian Gulf particularly.

The process of development of Armenian-Iranian relations from 1991 through 1997 is thoroughly analyzed. The author highlights the exact achievements recorded in this historically short period of time. The present level of Armenian-Iranian relations has come to the point where there is a necessity to introduce positive changes in order to further bilateral ties.

It is also revealed that Iran is vitally interested in actively involving Armenia within the scope of its regional policy not only at bilateral, but also multilateral levels. Iran-Armenia-Turkmenistan trilateral cooperation along with the newly formed Iran-Armenia-Greece cooperation testifies to this end.

НИКОЛАЙ ОГАНЕСЯН

НАЦИОНАЛИЗАЦИЯ «ИРАК ПЕТРОЛЕУМ КОМПАНИ» И ПОДДЕРЖКА АРАБСКИМИ СТРАНАМИ ИРАКА (1972—1973)

17 июля 1968 г. в Ираке был низвергнут режим Абд ар-Рахмана Арефа и вновь к власти пришла партия арабского социалистического возрождения—Баас. Новое руководство республики пересмотрело все основные направления внешней и внутренней политики прежнего иракского правительства и провозгласило новые принципы.

Следует отметить, что по внутренней политике иракского правительства в конце 60-х—начале 70-х годов важное место занимала борьба за ликвидацию влияния империализма и создание независимой национальной экономики[1].

Опорными пунктами и центрами влияния западных стран в арабских государствах являлись различные монополистические объединения. Их деятельность служила обогащению западных стран и задерживала экономическое развитие арабских государств. Последние не могли добиться экономической независимости и создания развитой национальной экономики без освобождения от оков западных монополий. Отсюда и вытекала необходимость борьбы за ликвидацию господствующих позиций монополистических объединений, которая являлась общеарабской задачей и составляла один из компонентов *ас-сияса ал-арабийя*, т. е. арабской политики Иракской республики.

Этот пункт применительно к Ираку означал конец в первую очередь деятельности иностранных нефтяных компаний.

Нефть—главное природное богатство Ирака. Но она эксплуатировалась международным нефтяным картелем, куда входили американские, английские, французские и голландские нефтяные монополистические объединения. Главным эксплуататором иракской нефти был «Ирак пет-

ролеум К°», акции которой делились между западными компаниями следующим образом: «Англо-иранен ойл К°»—23,75%, «Роил Датч Шелл» (Англо-голландская К°)—23,75%, французская «Компани франсэз де петроль»—23,75%, американская «Ниэр ист дивэлопмэнт корпорейшн»—23,75% и Г. С. Гульбенкян (впоследствии «Партисипейшн энд инвестмент К°, Лтд»)—5%[2].

Ираку не принадлежала ни одна акция. Хотя по соглашению 1950 г. Ирак должен был получить 50% доходов, получаемых от добычи иракской нефти, но на самом деле в результате различных махинаций нефтяной компании он получал намного меньше.

Конфликт между иракским правительством и «Ирак петролеум К°» возник уже после победы революции 14 июля 1958 г. и провозглашения Иракской республики. Иракское правительство приняло в 1961 г. закон № 80, по которому под контроль правительства переходили все территории, которые не эксплуатировались нефтяными компаниями. А в 1964 г. была учреждена Иракская национальная нефтяная компания. Но эти мероприятия в условиях непоследовательности политики правительства Ирака не могли расшатать и, тем более, ограничить или ликвидировать мощь нефтяных компаний. По-прежнему они чувствовали себя государством в государстве.

В борьбе с «Ирак петролеум К°» новая страница открылась после 17 июля 1968 г. Новые руководители Ирака были полны решимости положить конец деятельности нефтяных компаний, установить суверенитет над природными богатствами страны и заложить основу независимой национальной экономики.

Отношения между правительством и нефтяными компаниями еще больше обострились, когда последние стали преднамеренно задерживать рост добычи нефти, в то время как добыча нефти в других ближневосточных странах увеличилась на 40%[3]. Нефтяные запасы и нефтяные установки, находившиеся на юге страны, позволяли добывать ежегодно 36 млн. тонн нефти. Но на практике добыча нефти в среднем составляла 16 млн. тонн[4]. Все требования Ирака довести добычу нефти до максимума демонстративно игнорировались руководством «Ирак петролеум К°».

Иракское правительство требовало, кроме увеличения добычи нефти, изменить порядок отчислений арендной платы в соответствии с образцом, уже установленным во всех экспортирующих нефть ближневосточных странах. В резуль-

тате соответственного изменения в иракскую казну могло дополнительно поступить 196 млн. долларов.

Чем же объясняется отказ «Ирак петролеум К°» увеличить добычу нефти? На первый взгляд может показаться, что это противоречило интересам самой компании. Ведь чем больше будет произведено нефти, тем больше будут прибыли и наоборот.

Ответ следует искать в характере политического курса, как внутреннего, так и внешнего, правительства Ирака, пришедшего к власти 17 июля 1968 г.

В области внутренней политики правительство Ирака взяло курс на ликвидацию позиций и влияния западных держав, укрепление государственного сектора, создание независимой национальной экономики и т.д. Партия Баас объявила главной целью построение социалистического общества в Ираке.

В области внешней политики главной национальной задачей руководители Ирака объявили борьбу против империализма, в первую очередь американского. В интервью корреспонденту ливанской газеты «ал-Анвар» в декабре 1973 г. тогдашний министр нефти и природных богатств Ирака Саадун Хаммади заявил, что «именно США являются первым врагом арабских стран и главной силой, поддерживающей Израиль»[8].

С другой стороны, Ирак установил и успешно развивал дружественные отношения с Советским Союзом и другими социалистическими странами.

Это, понятно, не могло понравиться западным странам. «Ирак петролеум К°» видел в подобной политике иракского правительства серьезную угрозу своим доминирующим позициям. «Ирак петролеум К°» решает оказывать сопротивление этому курсу во внутренней и внешней политике Иракской республики.

Руководители нефтяной компании прекрасно знали, что одним из главных источников финансовых поступлений и почти единственным источником твердой валюты для Ирака являлись ежегодные отчисления нефтяных компаний Ираку за эксплуатацию иракской нефти.

Экономические преобразования, осуществление различных экономических проектов и вообще экономическое развитие Ирака требовали огромных финансовых расходов. При составлении своих экономических планов иракское правительство рассчитывало на финансовые поступления от нефтяных компаний.

В целях срыва этих планов нефтяными компаниями не увеличивались добыча и продажа иракской нефти, тем самым не росли финансовые доходы Иракской республики. Добиваясь провала намеченных иракским правительством важных проектов, компании надеялись вызвать серьезные экономические трудности и недовольство внутри страны.

Понимая конечную стратегическую цель политики нефтяных компаний[5], правительство Ирака не боялось прибегать к решительным мерам против них.

Прежде всего был осуществлен ряд подготовительных мер с целью укрепления авторитета власти внутри страны и подготовки народа к решающей битве. Среди важных мероприятий правительства надо отметить установление строгого режима экономии, прогресс в решении курдской проблемы, улучшение отношения партии Баас с другими патриотическими партиями, в частности с Коммунистической партией и Демократической партией Курдистана (ДПК), включение двух представителей Коммунистической партии в состав правительства и т. д.

Это оздоровило политическую атмосферу в стране и мобилизовало широкие народные массы и различные политические силы на борьбу с монополиями.

Определенные шаги были сделаны и во внешнеполитическом аспекте. Ирак, как указано в решении 8-го регионального съезда иракской партии Баас, «установил тесные связи с Советским Союзом и другими странами социалистического лагеря»[7], так как в борьбе с империалистическими монополиями за завоевание экономической независимости можно было положиться на СССР и другие социалистические страны. В июле 1969 г. Ирак и СССР заключили соглашение, по которому Советский Союз оказывал помощь Ираку в эксплуатации своей нефти. 9 апреля 1972 г. был заключен советско-иракский Договор о дружбе и сотрудничестве, который укрепил позиции Ирака перед началом штурма «Ирак петролеум К°».

Понимая сложность вопроса и желая заручиться поддержкой арабских государств, Ирак «пошел на улучшение отношений с другими арабскими странами или, по меньшей мере, приостановил ухудшение отношений, устанавливая с ними возможные экономические связи»[8]. Кроме того, к 1970 г. установился своеобразный нефтяной фронт в составе Ирака, Ливии и Алжира, укреплению которого придавалось большое значение в Ираке. «Нефтяной фронт,—заявил 20 июля 1970 г. президент Ирака Ахмед Хасан ал-Бакр,

—который был создан Ираком, Ливией и Алжиром, ставил себе целью координацию в обмене техническими экспертами в области нефти и конфронтацию маневрам монополистических компаний»[9].

Завершив подготовительные работы и убедившись, что «Ирак петролеум К°» не намерена изменить свою политику, Ирак «открыл огонь по компаниям»[10]. 17 мая 1972 г. Совет Революционного командования Ирака предъявил ультиматум нефтяным компаниям, действовавшим в Ираке. В нем говорилось, что в 1972 г. иракское правительство начало переговоры с нефтяными компаниями для решения всех вопросов, касающихся законных прав иракского народа и выработки новых позиций в нефтяном вопросе. Так как нефтяные компании исходят только из своих интересов, игнорируя законные интересы Ирака[11], правительство Ирака предъявляет ультиматум нефтяным компаниям, требуя:

1) немедленно удовлетворить требование иракского правительства в увеличении добычи нефти в соответствии с максимальной мощностью нефтепроводов;

2) совместно с министерством нефти и минеральных ресурсов Ирака разработать долгосрочный план добычи нефти и принять все меры для его выполнения;

3) дать положительный ответ на требования, предъявленные иракской делегацией на последних переговорах с представителями иностранных компаний (о подробностях этих требований в тексте ничего не говорилось)[12].

Для удовлетворения указанных требований иракское правительство давало нефтяным компаниям двухнедельный срок с момента опубликования ультиматума. В случае отрицательного ответа иракское правительство заявляло, что оно будет вынуждено принять все юридические и другие меры, которые сочтет необходимыми для защиты национальных интересов и законных прав иракского народа[13].

Требования иракского правительства, сформулированные в ультиматуме, нашли широкую поддержку народных масс и различных политических сил Ирака. Член ЦК Коммунистической партии Ирака Маджид Абд ал-Рида заявил, что действия иностранных нефтяных компаний свидетельствуют об их недовольстве внутренней и внешней политикой Ирака, направленной на укрепление национального единства страны, на упрочение отношений с арабскими странами, а также с социалистическим лагерем во главе с Советским Союзом[14]. Коммунистическая партия Ирака, подчеркнул ал-Рида, решительно осуждает позицию монополисти-

ческих нефтяных компаний и поддерживает любой шаг в борьбе против иностранных монополий, за защиту законных прав иракского народа[15].

Раскрывая подоплеку политики нефтяных компаний, газета «Багдад обсервер» отмечала, что сокращение компаниями добычи нефти имеет целью оказать давление на иракское правительство, чтобы заставить его отказаться от политики решительной защиты своих интересов в области нефти. Нет также никакого сомнения, продолжала газета, что действия компаний преследуют не только экономические, но и политические цели[16].

Орган ДПК газета «ат-Taaхи», выражая чувства курдского народа, отмечала, что иностранные нефтяные компании привыкли к бесконтрольным действиям в Ираке, но они забыли, что времена изменились. Иракский народ способен сплотить свои ряды в трудную минуту и дать решительный отпор силам империализма[17].

Однако нефтяные компании отвергли законные требования Ирака.

По истечении двухнедельного срока ультиматума правительство Иракской республики 1 июня 1972 г. приняло закон № 69 о национализации «Ирак петролеум К°»[18]. Первая статья закона гласила, что Иракская нефтяная компания национализируется и объявляется государственной собственностью все ее имущество: нефтепроводы, нефтеустановки и т. п., а также права, в том числе на добычу сырой нефти и газа, транспортировку и т. д.

Начиная с этого момента все операции, связанные с добычей, транспортировкой и продажей нефти совершала исключительно Иракская национальная нефтяная компания.

Решение иракского правительства о национализации иностранных нефтяных компаний произвело впечатление взорвавшейся бомбы. Впервые был брошен вызов могущественному и грозному нефтяному картелю. Тем самым Ирак сделал очень важный шаг по укреплению суверенитета над своими природными богатствами и созданию независимой национальной экономики.

Вступив в смертельную схватку с опаснейшим врагом— нефтяными монополиями, Ирак получил полную поддержку со стороны Советского Союза, других социалистических стран и всех прогрессивных сил. Они оказали Ираку широкую политическую и моральную поддержку, помогли ему в создании национальной нефтяной промышленности, в добыче, транспортировке и продаже иракской нефти, что сыг-

рало важную роль в провале бойкота, объявленного нефтяными монополиями иракской нефти.

Решение иракского правительства о национализации «Ирак петролеум К°» вызвало огромный энтузиазм и политическую активность во всех арабских странах. Арабские народные массы восхищались смелыми действиями Ирака, оказывая ему разностороннюю поддержку и выражая в эти тяжелые дни полную солидарность с ним. Можно без преувеличения сказать, что проявление солидарности арабских стран с Ираком в памятные дни национализации является одним из немногочисленных случаев, когда арабские страны, забыв свои разногласия, выступали сплоченно и единым фронтом.

1 июня 1972 г., т.е. в день национализации «Ирак петролеум К°» правительство Сирии приняло решение о национализации нефтепровода, принадлежавшего «Ирак петролеум К°» и проходившего по территории Сирии[19]. Решение сирийского правительства являлось дополнительным ударом по интересам иностранных нефтяных компаний, значительно затруднив борьбу против Ирака.

Президент Сирии Хафез ал-Асад послал поздравительную телеграмму президенту Ирака Ахмеду Хасану ал-Бакру, в которой сообщал о полной поддержке Сирией позиции Ирака в отношении «Ирак петролеум К°»[20]. А заместитель премьер-министра и министр иностранных дел Сирии Абд ал-Халим Хаддам заявил, что национализация Иракской нефтяной компании полностью соответствует мечтам и стремлениям арабского народа к освобождению и построение своей экономики[21].

Рядом с Ираком встал Египет. Египетское правительство заверяло Ирак в поддержке и солидарности, заявив, что Египет весь свой потенциал предоставляет в распоряжение Ирака[22].

Решительная позиция, занятая двумя ведущими арабскими странами, значительно укрепила положение Ирака в борьбе с нефтяными компаниями.

О своей полной поддержке Ираку от имени Ливана заявил премьер-министр Саиб Салам[23].

Важную резолюцию принял Национальный совет (Меджлис ул-Умма) Кувейта. В нем решение СРК Ирака рассматривалось как очень важный шаг, к которому должны стремиться все арабские страны от Персидского залива до Атлантического океана. В резолюции напоминалось, что постановление о национализации принято за несколько

дней до 5-й годовщины поражения арабских стран в июньской арабо-израильской войне 1967 г. Следовательно, решение иракского правительства, читаем в резолюции, является «практическим ответом на эту войну»[24]. Национальный совет Кувейта призвал все арабские страны оказать полную поддержку Ираку—политическую, моральную и материальную. В частности: а) все арабские страны должны занять единую позицию для оказания помощи Ираку в противостоянии нефтяным компаниям и западным государствам; б) арабские нефтедобывающие страны должны отвергнуть требование нефтяных компаний увеличить добычу нефти, чтобы компенсировать национализированную в Ираке нефть; в) предпринять решительные меры в отношении компаний, которые займут враждебную к Ираку позицию и, наконец, г) оказать Ираку материальную и финансовую помощь[25]. В дополнение к резолюции Национального совета министр иностранных дел Кувейта шейх Джабр ал-Ахмад заявил от имени своего правительства, что Кувейт полностью поддерживает действия Ирака и считает его вопрос своим и всей арабской нации[26].

В защиту политики Ирака в нефтяном вопросе выступила также президент Алжира Хуари Бумельен, лидер Ливии Муамар ал-Каддафи, король Марокко Хасан II, министр финансов Иордании, председатель президентского совета ЙАР Абд ар-Рахман ал-Айрани, правительство НДРЙ, государственный министр по иностранным делам Саудовской Аравии Амр ас-Сакафи и др.[27]

The Mosul conflict (1918—1926) was one of the first considerable territorial and oil conflicts of the post-war world. The origins of the conflict we can find as far as in the 19th century, which then culminated into international conflict. There was a real struggle for the Mosul vilayet (Northern Iraq) of the Ottoman Empire, in which were involved on the one hand Great Britain on the other hand Germany, Russia, France, Belgium, Netherlands (Holland) and the USA. Some rivals of Great

Britain vanished during the first World War (Russia) or as a result of that war (Germany), with the others the Great Britain came to an agreement. But England wasn't beyond competition in the Mosul vilayet (province). The Anglo-Turkish struggle for the Mosul vilayet (1918—1926) was the hardest one for Britain.

The main peoples of the occupied Iraq (Arabs, Kurds, Assyrians and Turkomans) were involved in Mosul conflict (Kurds formed large minority in the Mosul vilayet). From the geographical point of view the Vilayet of Mosul infringed upon Turkey's and Iraq's neighbors (Soviet Russia—Soviet Union, Iran) interests. But taken viewed as a whole the latters maintained neutrality with respect to the above-mentioned conflict.

During the Anglo-Turkish struggle for Mosul the Turkish side pointed out that Mosul had been occupied (in November 1918) after the signature of the Mudros Armistice and was therefore an infringement of the spirit of the document, the status quo at the time of signature had not been preserved. At the same time the British side pointed out that Article 7 of the Mudros Armistice (signed on 30th of October, 1918) gave the Entente the right to occupy any strategic part of the Ottoman Empire in the event of situation arising which affected their security. At the Lausanne Conference in 1922-23 Turkey claimed the Mosul vilayet (province), which was already incorporated de facto into the territory of the projected mandate for Iraq. But under the terms of Treaty of Lausanne (Article 3(2)), signed on the 24th July 1923 the frontier between Turkey and Iraq was to be fixed by the «friendly arrangement» between Turkey and Great Britain. At the same time the parties were given nine months to settle the Mosul dispute by friendly arrangement between themselves. The League appointed an investigate commission whose recommendation that Iraq should retain Mosul the Council endorsed on 16 December 1925. The Ankara regime reluctantly assented to the decision in the Frontier Treaty: The United Kingdom and Iraq and Turkey, signed on 5th June, 1926.

Each of the high Contracting Parties accepted as definitive and inviolable the frontier line fixed by article 1 undertaked to make no attempt to alter it. At the same time the Treaty included article 14 as a sop to wounded nationalist sensivities in Turkey, according to which the Iraq Government should pay to the Turkish Government for a period of twenty-five years from the coming into force of the above-mentioned Treaty 10 percent of all royalties which it should receive.

In present article we intend to discuss the reasons which led the ship of the Turkish diplomacy to the harbour of a loss.

We discuss the causes and reasons of Turkish defeat from the historical, diplomatic and especially juridical points of view. The author comes to the conclusion that the main part of these causes and reasons didn't decided the issue of the question beforehand, but only precipitated the defeat of Turkey in the Mosul question. At the same time the author comes to the conclusion that the problems which are arising from the situation in Northern Iraq, or the attempts to make a problem from the latter, found their origins in the same, forgotten Mosul conflict. The scenario is different, but the players of the leading part are the same.

ПРИМЕЧАНИЯ

[1] **Fazil Demirci.** Irak Türklerinin Dünü-Bugünü. Türk Tarih Kurumu Basimevi, Ankara, 1991.

[2] **Кемаль Ататюрк.** Избранные речи и выступления. Под редакцией А. Ф. Миллера, М.: Прогресс, 1966, с. 430.

[3] **C. J. Edmonds.** Kurds, Turks and Arabs, Politics, Travel and Research in North Eastern Iraq 1919—1925. London, 1957, p. 7—12.

[4] См.: **А. М. Ментешашвили.** Ирак в годы английского мандата. М., 1969, с. 150. См. также карту, приложенную к «Statesman Year Book» 1927 и к книге проф. И. Г. Корсуна Ирак. М., 1928. Из этого «усматривается, что на следующий день по заключении соглашения об этом (Мудросском.— **В. П.**) перемирии британские передовые отряды находились еще в 50 км к югу от Мосула. Там же, с. 36.

[5] В Мудросском перемирии указывалось (ст. 7), что союзникам предоставляется право оккупации стратегических пунктов в том случае, если возникнет положение, угрожающее их безопасности. См.: **Дж. С. Киракосян** и **Р. Г. Сахакян.** Армения в документах Международной дипломатии и советской внешней политики (1828—1923). Сборник документов на арм. яз. Ереван, 1972, с. 537—539.

[6] **А. М. Ментешашвили.** Указ. соч., с. 149.

[7] **Ю. В. Ключников** и **А. В. Сабанин.** Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне (полный перевод с французского текста). М.: Литиздат НКИД, 1927, с. 24—25.

[8] Новейшая история арабских стран (1917—1966). М., 1968, с. 162—163; **J. C. Hurewitz.** Diplomacy in the Near and Middle East. A Documentary Record: 1914—1956, v. 2. New York, 1956, p. 143, doc. № 46; **Н. О. Оганесян.** Борьба демократических сил Ирака за ликвидацию английского мандата (1920—1932).— В сб.: Страны и народы Ближнего и Среднего Востока. Т. 3. Арабские страны. Ереван, 1967, с. 17—18.

[9] **Н. О. Ованесян.** Национально-освободительное движение в Ираке (1917—1958). Ереван, 1976, с. 95—96.

[10] **Ю. В. Ключников и А. В. Сабанин.** Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне. М., 1927, с. 5.

[11] **В. С. Петросян.** Мосульский вопрос на Лозаннской конференции. В сб.: Страны и народы Ближнего и Среднего Востока, т. 16, Ереван, 1996, с. 41—65.

[12] **H. Bülent Demirbaş.** Musul Kerkük Olayi ve Osmanli Devleti'nde Kuveyt Sorunu, Istanbul, s. 90.

[13] **В. С. Петросян.** Ассирийский вопрос и мосульская проблема (тексты докладов XVII научной конференции). Ереван, 1996.

[14] DBFP, Series IA, V. 1, pp. 787—788.

[15] **В. М. Алексеев, М. А. Керимов.** Внешняя политика Турции. М., 1961, с. 20.

[16] DBFP, Series IA, V. 1. Doc. № 549 Sir W. Tyrrel to Sir R. Lindsay (Constantinople). Foreign Office, December 19, 1925, p. 791, Ibid, Doc. № 581 Sir R. Lindsay (Angora) to Sir A. Chamberlain Angora, April 23, 1926, pp. 836—837. Ibid, p. 795, Doc. № 553 Sir R. Lindsay to Sir A. Chamberlain, 30 December, 1925.

[17] **М. А. Гасратян.** Курдское восстание 1925 года (Восстание шейха Саида). В сб.: Страны и народы Ближнего и Среднего Востока, т. 13. Курдоведение, Ереван, 1985, с. 40—67.

[18] **В. М. Дачесяуа.** Англо-турецкие отношения в 1923—1926 гг. Автореферат на соискание ученой степени к. и. н., М., 1983, с. 11.

[19] **А. Ф. Миллер.** Очерки новейшей истории Турции. М.—Л., 1948, с. 152—153.

[20] DBFP, Series IA, V. 1, pp. 797—798.

[21] **Abid A. Al-Marayati.** A diplomatic History of Modern Iraq, New York, 1961, p. 651.

[22] **Ömer Kürkcüoglu.** Türk-Ingiliz Ilişkireli (1919—1926), Ankara, 1978.

[23] **Mim Kemal Oke.** The Turkish War of Independence and the Independence Struggle of the South Asian Muslims (1919—1924), Ankara, 1991, p. 174.

[24] Quotation according to Mim Kemal Oke, op. cit., p. 174.

[25] **Ömer Kürkcüoglu,** ayni eser, ss. 309—310, Mim Kemal Oke, op. cit., p. 175.

[26] **Ömer Kürkcüoglu,** ayni eser, s. 306, Mim Kemal Oke, op. cit., p. 175.

[27] **Mim Kemal Oke,** op. cit., p. 178.

[28] Abid A. Al-Marayati, op. cit., p.

[29] **Mim Kemal Oke,** op. cit., p. 179.

[30] See **Syed Sharifuddin Pirzada** (ed). Foundation of Pakistan. All-India Muslim League Documents, 1906—1947, vol. 2, Karachi, 1970, pp. 39, 71. Quotation according to **Mim Kemal Oke,** op. cit., p. 183.

[31] **Mim Kemal Oke,** op. cit., p. 178.

[32] **Ömer Kürkçüoğlu**, aynı eser, s. 808, Mim Kemal Öke, op. cit., p. 176.
[33] Aynı eser, s. 397, Ibid, p. 176.
[34] **C. J. Edmonds**, op. cit., pp. 395—416. Question of the Frontier between Turkey and Iraq. Report submitted to the Council by the Commission instituted by the Council Resolution of September 30 th, 1924 (The Report dated July 16, 1925. См. также: **Б. М. Поцхверия**. Турция между двумя мировыми войнами. Очерк внешней политики. М., 1992, с. 112—130.
[35] **Ömer Kürkçüoğlu**, aynı eser, s. 299. Брюссельская Линия почти полностью совпадала с административной границей между вилайетами Хаккяри и Мосула.
[36] Версальский мирный договор. Под редакцией В. Ключникова и Андрея Сабанина. М., 1925, с. 7—16.
[37] League of Nations Official Journal, February, 1926, pp. 124—126.
[38] DBFP, Series 1A, Vol. 1, pp. 792—793.
[39] Ibid., p. 793.
[40] **C. J. Edmonds**, op. cit., pp. 389—390.
[41] Ibid., p. 388.
[42] DBFP, Series 1A, Vol. 1, Doc. № 545. pp. 796.
[43] **Ю. В. Ключников** и **А. Сабанин**. Версальский мирный договор (полный перевод с французского подлинника). М., 1925, с. 10—12.
[44] DBFP, Series 1A, Vol. 1, Doc. № 543. Memorandum by Sir C. Hurst. Foreign Office, November 26, 1925. Memorandum regarding legal position in the event of Turkey's not complying with a decision of Council of League of Nations regarding Frontier with Iraq. P. 783.
[45] Ibid, p. 783 footnote.
[46] DBFP, Series 1A, Vol. 1, Doc. № 534, pp. 733—765. Memorandum respecting the Iraq Frontier Dispute. Foreign Office, October 23, 1925.
[47] DBFP, 1919—1939, Series 1A, Vol. 2 (1926—1927), London, 1969, Doc. № 439. Sir R. Lindsay (Constantinople) to Sir A. Chamberlain. Constantinople. June 9, 1926, p. 803—804.
[48] До прибытия сэра Г. Кларка (ноябрь 1926 г.) обязанности посла Великобритании в Турции исполнял Хоур (сентябрь-октябрь 1926 г.).
[49] DBFP, Series 1A, Vol. 2, Doc. № 446 Sir A. Chamberlain (Geneva) to Mr. Hoare (Constantinople). Geneva, September 14, 1926.
[50] **H. Bülent Demirdaş**, Musul Kerkük Olayi ve Osmanli Imparatorlugunda Kuveyt Meselesi. Arba yayinlari 44, Birinci Baski, Istanbul, 1995, ss. 90—91.
[51] **Н. А. Михаленок**. Современная Турция. Политико-экономический обзор. М., 1931, с. 270.
[52] Там же.
[53] Report by His Majesty's Government in the United Kingdom of Great Britain and Northern Ireland to the Council of the League of Nations on the Administration of Iraq for the Year 1931, p. 29—30.

ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ԼՈՐԵՏԱ ԳԱՆԵՂՅԱՆ

ԵՂԻԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ ՌՈՒՍԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՋԱՏԱԳՈՎ

Ավելի քան երկու և կես դար է բաժանում մեզ այն փոթորկալի իրադարձություններից, որոնցով լի էր XVIII դ. առաջին քառորդում Պարսկաստանում հասարակական-քաղաքական գործունեություն ծավալած վճռական Եղիա Մուշեղյանի կյանքը։

Գիտական շրջանակներին որոշակիորեն ծանոթ է այդ անունը՝ նախ՝ շնորհիվ նրա ծավալուն դիվանի, որը մի օր հայտնվեց Ռուսաստանում՝ Արտաքին գործոց նախարարության արխիվում հանգրվանեց[1], նաև շնորհիվ այդ բազմաբեղուն գործչի թողած հուշամատյանի[2], որ գրվեց նրա ծննդավայրում՝ Կարինում և ի վերջո հայտնվեց Վիեննայի Մխիթարյան մատենադարանում։

Հիշյալ դիվանի ի մոտո ծանոթությունն ի հայտ է բերում Եղիա Մուշեղյանի կյանքի ու գործունեության խորքերը բացահայտող տեղեկությունների նորանոր շերտեր և, առաջին հերթին, նրա հանկարծակի բանտարկության պատճառները, ընթացքն ու ավարտը։ Այստեղ պահպանվող բազում նյութերի մեջ կա մի մեծադիր թղթապանակ (331 թերթից բաղկացած), որն իրենից ներկայացնում է Եղիա Մուշեղյանի բանտարկության (կամ մեղադրական) գործը[3]։ Այն սկսվում է գեներալ-մայոր իշխան Տրուբեցկոյի՝ 1724 թ. մարտի 15-ի զեկույցով, որն Արտաքին գործոց կոլեգիային իրազեկ է դարձնում Մուշեղյանի դիվանագիտական անձնակազմի՝ Աստրախան ժամանելու մասին։ Հայտնվում է, որ Պարսկաստանից «Գիլանի վրայով ծովով Աստրախան է եկել ֆրանսիացի կապիտան 11 մարդկանց հետ, որոնց թվում են՝ վրացիներ, հայեր ու պարսիկներ...»[4]։ Զեկույցին հետևում են մի շարք պաշտոնական գրություններ և, ի վերջո, 1724 թ. մայիսի 15-ի Սենատի կայսերական հրամա-

թյան հրովարտակը», որով ցուցում էր տրվում «հիշյալ կապուչինին և նրան ընկերակցող մարդկանց Աստրախանից ուղարկելու Մոսկվա», ապա՝ Ս. Պետերբուրգ[3]: Եվ դրանով էլ սկսվում է Եղիա Մուշեղյանի կյանքից 12 տարի խլած տառապանքային փուլի զոզրթան՝ հարցաքննությունների, վկայությունների, դրագրությունների, զեկույցների, ցուցմունքների շղթան, բանտարկություն, աքսոր և ի վերջո՝ արդարացում և ազատում: Ռուսական իշխանությունները վերջապես համոզվեցին, որ Եղիա Մուշեղյանը ոչ թե լրտես է, գաղտնի գործակալ, ինչպես զրպարտությամբ ներկայացրել էին նրան, այլ ընդամենը Պարսկաստանից Եվրոպա էր ուղևորվել հատուկ առաքելությամբ, որի նպատակն էր Սեֆյան նորընծա շահ Թահմասպի ուղերձները հանձնել Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս XV-ին, ավստրիական կայսր Կարլոս VI-ին և Հռոմի Ինոկենտիոս պապին:

Եղիային ամբաստանել էին մի քանի հոգի նրա շրջապատից՝ սկսած Ռուսաստանում պարսից դեսպան Իսմայիլ-բեկից մինչև իր մտերիմ պատրի Հովհաննեսը, որը պատվիրակության կազմում էր և բավականին գործունյա դերակատար:

Ներքո տարբեր թեմային առնչվող շատ հարցերի լուսաբանման համար հարկ կա անդրադառնալու Մուշեղյանի ինչպես բազմացական հայացքներին, այնպես և կաթոլիկ հայերի, պարսից պաշտոնյաների, պարսկահայ համայնքի, իր անօրին Ֆրանսիացի Բոլիգարի և այլոց հետ փոխհարաբերություններին:

Հայտնի է, որ Եղիա Մուշեղյանը մեծացել է Կարինի կաթոլիկ կրոնավորների շրջապատում, որոնց հետ իր կապերը չի խզել նաև ծննդավայրից հեռանալուց հետո՝ և՛ տասնամյա առևտրական կյանքի ընթացքում, և՛ 1727 թ. հետո, երբ հանգրվանեց Պարսկաստանում (Թավրիզում)[9]:

Շնորհիվ այն բանի, որ առևտրական գործունեությանը զուգընթաց Եղիան ապրում էր ակտիվ հասարակական կյանքով և մեծ հեղինակություն ուներ շրջապատում, բարենպաստ հող է ստեղծվում նրա համար՝ իր եռանդն ու կապերն ի սպաս դնելու Պարսկաստանում հաստատված եվրոպական կաթոլիկ միսիոներական կազմակերպությունների ներկայացուցիչների առջև ծառացած խնդիրների լուծմանը: Դա են հավաստում Մուշեղյանի գրչի մի շարք վավերագրեր: Մեծ է նրա ավանդը հատկապես Թավրիզի կաթոլիկների վիճակի բարելավման գործում, իսկ Աբարաներ գյուղի կաթոլիկ

Համայնքն ամբողջովին ապավինել էր Եղիային (նամակ 90, 119)։ Համակրանքը եղել է փոխադարձ, և կապուցինները սիրով արձագանքել են Եղիայի օգնության կանչերին՝ դժվարին կացության պահերին, ժամանակավորապես, հյուրընկալելով նրան 1722 թ. քաղաքական փոթորկուն իրադարձություններից հետո, երբ Եղիան կացարան չուներ, կամ, պատսպարելով նրան, երբ Սպահանում հիվանդանալով և իր տնօրեն Բարեգարի կողմից անուշադրության մատնվելով, Եղիան տեղափոխվում է Նոր Ջուղա՝ Հիսուսյանների վանք (նամակ 114)։

Սակայն նման փոխհարաբերությունները չէին կարող անհետևանք մնալ և ներթափանցում էին Պարսկաստանում կաթոլիկության ընդդիմադիր լուսավորչականների անբարյացակամ մոտեցում կաթոլիկության նվիրյալ Եղիայի նկատմամբ։ Պատմական հանրահայտ փաստ է, թե հայ համայնքը մշտապես որպիսի դիմադրություն է ցույց տվել կաթոլիկության քարոզչությանը, որքան ջանքեր է գործադրել պապականությունը հայրուսպահանյաններ շարունակ իր ազդեցության ոլորտը ներգրավելու լուսավորչական հայերին (Հիսուսյաններ, Թեկուզ, կարմելիտականներին)։ Ուստի վերջիններիս մոտ անհաշտ պայքարի հոգեբանություն է մշակվել կաթոլիկների նկատմամբ, որոնց ցույց տալիս էին անհանդուրժողության մթնոլորտ, անհաշտության մատնելով կաթոլիկների առանձնությունների յուրաքանչյուր փորձ։ Հասկանալի է, որ նույնպիսին էր վերաբերմունքը Եղիայի նկատմամբ։ Ուրեմն և, պատահական չեն նրա և պարսկահայ համայնքի միջև լարվածության այն նոտաները, որոնք առկա են նամակներում։ Հորդորելով Նոր Ջուղայում հաստատված կաթոլիկ քահանա Տեր-Մելքոնին հեռանալ այնտեղից և գնալ Բաղդադ, Եղիան գրում է. «Ջուղայեցոց խոսքն և ոխերն և թշնամանությիւնն չէ կատարեալ» (նամակ 50), և դա այն պատճառով, որ ջուղայեցիներին կաթոլիկություն պատվաստելու փորձն անհաջողության էր մատնվել։ Այսպիսով, Եղիա Մուշեղյան-հայ համայնք հարաբերությունները ոչ մի դրական բան չունեին Եղիայի համար։ Այս պարագան պարզորոշ արտահայտված ենք գտնում իր տնօրենին՝ Բարեգարին ուղղված նրա նամակներում, դրանք ցավով ու դառնությամբ տոգորված նամակներ են. «Մեր մահչի հայերն կամին թշնամությիւն անել և ոչ են վախում» (նամակ 77), տալ՝ որ հայերը մի առիթ են փնտրում, որ իրեն վիրավորեն...։ Եվ իբրև այս և համանման ավալյանքների գագաթնակետ, Եղիան գրում

է. «Սա էլ կարել չեմ դիմանալ» (Նամակ 78)։ Մի այլ նամակում. «Սա էրեխցայ էս քաղաքն... Օրըստօրէ նոր նոր բաներ կանեն իմ գըլ-խուս...» (Նամակ 81)։

Այսպիսով, ի սեր կաթողիկոսության Եղիան զանում է նրա ցուպը (բայց բանն այն է, որ այսպիսի նվիրվածությունից հետո Եղիան հիասթափվելու է կաթողիկոսներից, չոր շրջադարձ կատարելով, իր մաշկի վրա զգալով մաքրիմ պատրիարքների դավաճանությունը)։

Սակայն Մուշեղյանը խնդիրներ ուներ նաև ալպանիկ առնարից զույգ գաղթականների տալիք գումարները ստանալու հարցում, որը Հայաստան Հոգոր տարրիա էր և ամփոփում էր սեփականությունը փնտրել այլնայլ պաշտոնյաների մոտ. Հատկապես բարեփոխիման խլխա-նումներների ազնությունն ողի այն կարևոր էր վաճառականի համար այս հարցում։ Այդ է պատճառը, որ Եղիան և Թոթովենցը ուշիուշով հետևում էին, թե ով է լինելու նոր խանը, քանի որ հիմնականում նրան էին դիմում պատրաստակամության դժվարին գործը կազմա-կերպելու համար (Նամակ 82)։ Իրենց հերթին, պաշտոնատար ան-ձինք (անշուշտ, շահագիտական նպատակներով) ձգտում էին մի-ջնորդների վաճառականության հետ շփումներ ունենալ, մանա-վանդ. Արևելահնդկական ընկերության ներկայացուցիչների, ասել է թե՝ Մուշեղյանի հետ։ Արդյունքը գոհացուցիչ էր երկուստեք, և նամակները պատմում են այն բներների մասին, որ ստանում էին նրանք միմյանցից (Նամակ 100...)։

Սակայն գոյություն ուներ մեզալի հակառակ երեսը. Եղիայի գծլանք առևտրական տարածությ վավերագրերը, մասնավորա-պես, պարտամուրհակները փկայում են, որ Պարսկաստանի խա-նություններից շատերը մեծ գումարներ էին պարտք հայ վաճառական-ներին։ Վերջիններս մեծ հույսեր էին կապում խանի հետ, որպես էլ նրա օգնությունը պարտքերի հավաքման գործում թանկ էր նստում իրենց վրա։ Դարձն ավելի էր դժվարանում, երբ փոխհատուց-ման տուրքատում խանն ինքն էր վերածվում շարքային պարտա-պանի, որից դրամ զանձելու գործը պետք է իրականացվեր այդին բարձրաստիճան մարդիկների օգնությամբ։ «Աղայ (Եղիա) գիմա-նաս,-գրում է Թոթովենցը Եղիային,-թէ խանն ձիոր յանէ մեր փողն հատուցանել և ինքն փողն չի տայ, որ մեզ տայու ա, շատ ինձ խա-ղար արայ, որ անեմ ինչպէս պիտի անեմ» (Նամակ 79)։ Եղիան

հաճախ էր հայտնվում բարդ իրավիճակներում, որոնք միայնակ կրելով Արևելահնդկական ընկերության Թավրիզի մասնաճյուղի գործերի ծանրությունը։ Բոդեղարը հաճախ էր բացակայում և միայն նամակներով հրահանգներ տալիս Եղիային, նրան շարունակ դնելով դժվարին կացության մեջ։ Այստեղից էլ՝ Մուշեղյանի դժգոհությունն իր տերերից։ Նամակներից մեկում, ամփոփաբար գրում Եղիան այսպես է գրում Բոդեղարի մասին. «Ոչ տեսի ի նմանէ բարութիւն, այլ՝ չարութիւն, ոչ տեսի քաղցրութիւն, այլ՝ դառնութիւն, ոչ տեսի շահ, այլ՝ վնաս, ոչ տեսի սէր՝ ատելութիւն»[8]։

Այսպիսով, անհատ մարդկանց ու «թշնամիների» հետ փոխհարաբերությունները դժվարացնում էին Մուշեղյանի կյանքը Պարսկաստանում և օրեցօր նրան մղում այդ երկիրը լքելու մտքին։

Մյուս կողմից, սակայն, լինելով եռանդուն և գործունյա անձնավորություն, Մուշեղյանը, ինչպես նշվեց, ակտիվ հասարակական կյանք էր վարում, «թշնամիներից» բացի ուներ և բարեկամներ, որոնց միջոցով կարգավորում էր իր գործերը։ Ավելին, առանձին անհատների կամ խմբերի խնդրանքով միջնորդում էր պետական մարմինների առջև որևէ հարցի լուծման համար, տալով անունը (դիմում) նույնիսկ շահին։ Դիվանում պահպանվել են մի շարք խնդրագրեր զանազան հայցումներով[9], որոնց առկայությունը հավաստում է Եղիայի հուշագրության այն տեղեկությունը, թե ինքը պալատական շրջանների հետ կապեր ու ծանոթություններ ուներ։ Դրա վկայությունն է նաև 1723 թ. նրա՝ Մեշհեդում ֆրանսիական դեսպան նշանակվելու փաստը, ինչպես նաև թագավորական ուղերձները եվրոպական տերություններին հանձնելու պատասխանատու գործի ստանձնումը (այդ մասին անդրադարձվել ներքև)։

Նշենք, որ ուղերձների առաքման անհրաժեշտությունն առաջ եկավ Պարսկաստանի օրհասական իրավիճակի թելադրանքով, երբ մայրաքաղաք Սպահանը պաշարած աֆղանների առաջնորդ Միր-Մահմուդը պարսից Սուլթան Հուսեյնից առավ նրա թագը, իսկ արքայորդի Թահմասպը, ապաստանելով Մեշհեդում և իրեն շահ հայտարարելով, անզոր ճիգեր էր գործադրում՝ փրկելու իր հարստությունն ու երկիրը[10]։ Միջոցներից մեկը դիտվում էր եվրոպական երկրների կողմից շահ Թահմասպի ճանաչումը և հետագա բարեկամական հարաբերությունների պահպանումը։

Թագավորական ուղերձների առաքման գործի առանձնումը Մուշեղյանի կողմից պատահական չէր, քանզի նրան առաջնորդում էր մեկ այլ՝ կարևոր դրդապատճառ։ Դա նրա վաղեմի երազանքն էր հանդիպելու ռուսական ցարին և նրան հորդորելու ազատագրել հայերին թուրք-պարսկական գերիշխանությունից։ Այդ էր պատճառը, որ Եղիա Մուշեղյանի պատվիրակությունը հայտնվեց Ռուսաստանում։ Եղիան նախապես գիտեր, թե ինչ վտանգներով է գալիս (խնդրեց շահից գրություն՝ ուղղված ցարին, որ ճանաչեր իր պատվիրակությանը[11], բայց դա չհաջողվեց, պարզ է՝ պալատում տիրող հակառուսական տրամադրությունների պատճառով)։ Ուրեմըն, գիտակցաբար գնաց ռիսկի, քանի որ նրան հուզում էր ազգի ճակատագիրը, մի բան, որ վաղուց էր արմատներ գցել լայնորեն, Հ. Ոսկյանի խոսքերով՝ «ժամանակակից ազգասէր և..., հայրենասէր վաճառականի հոգում»։

Դեռևս պատանեկան հասակից Եղիային հրապուրում էր Իսրայել Օրու գործունեությունը հայերի ազատագրման ուղղությամբ։

Իր շրջագայությունների ընթացքում Եղիան, հավանաբար, հանդիպում է նրան (1708 թ., երբ Օրին դեպի Պարսկաստան ուղևորվելիս իջևանում է Շամախիում), միևնույն ժամանակ ծանոթանում իր ապագա տիրոջն՝ ֆրանսիացի ապա Բորգարի հետ, որն Իսրայել Օրու պարսկական դեսպանության կազմում էր։

Եղիա Մուշեղյանի քաղաքական կողմնորոշման վրա, անշուշտ, ազդեցություն պիտի ունենար սոցիալ-քաղաքական այն միջավայրը, որ գոյություն ուներ պարսկահայոց և, ընդհանրապես, հայության մեջ XVIII դարի առաջին տասնամյակներին։

Ինչպես հայտնի է, հայ ազատագրական շարժման մեջ ռուսական կողմնորոշումը ձևավորվեց աստիճանաբար։ Հարկ եղավ նախ Եվրոպայում տարիների դեգերումների մի շրջան՝ ապարդյուն վախճանով, որպեսզի հայ ազատագրական շարժման կողմնորոշման մեջ ի դեմս նրա ռահվիրա Իսրայել Օրու շրջադարձ կատարվեր դեպի Ռուսաստան։ Բայց դա գործի միայն սկիզբն էր, առջևում ինքնահաստատման ճանապարհն էր։ «Վավերագրական ճանաչված աղբյուրներից և ոչ մեկը,— գրում է հարցին հմուտ գիտակ Ա. Հովհաննիսյանը,— ԺԸ (18-րդ) դարի սկզբներում չի վկայում ռուսական օրիենտացիայի ժողովրդականության մասին»[12]։ Մեծ ջանքեր պահանջվեցին Իսրայել Օրուց և Մինաս վարդապետից՝ հա-

մոդելու հայ հոգևորականությանը և մելիքներին՝ կանգնել հայ ազատագրական պայքարի ռուսական կողմնորոշման դիրքերում, քանզի հայ ղեկավար շրջաններում դեռևս ամուր էր ազատագրման հույսը Եվրոպայից։ Հոգևորականությունն օգնություն էր ակնկալում ավելի շուտ Հռոմից, քան Ռուսաստանից[13]։

1707—1711 թթ. Օրին, լինելով Պարսկաստանում և ապա՝ Անդրկովկասում, զգալի ներդրում ունեցավ հայ ազատագրական գաղափարի արմատավորման և ժողովրդի մեջ Ռուսաստանի նկատմամբ համակրանքն ուժեղացնելու գործում[14]։ Սակայն, ի վերջո, Պարսկաստանում քաղաքական անցուդարձի նոր ալիքը՝ կապված 1722 թ. աֆղանների հարձակումների և նրանց հաղորդած՝ Սեֆյան հարստության անկման հետ, որոշակիորեն պայմաններ ստեղծեց ռուսական կողմնորոշման հարցում բոլոր տատանվող շերտերի համար՝ հաստատապես ապավինելու այդ երկրի օգնությանը։ Հայ առևտրական դասի համար Պարսկաստանում ստեղծված խիստ դըժվարին պայմաններն ավելի տեսանելի էին դարձնում հայերի առևտրական արտոնությունները Ռուսաստանում։ «Ռուսական օրիենտացիան խմորվեց 1720-ական թվականների շուրջը,— նշում է Ա. Հովհաննիսյանը,— երբ նեղված պարսից դեմ ապստամբած ցեղերից, հայ կղերի և մելիքության մի խոշոր հատված հարկադրված եղավ փարել ռուսների օգնությանը և նրանցից փրկություն հուսալ»[16]։

Այսպիսով, նոր քաղաքական կողմնորոշման գաղափարն իր ծննդից հետո դժվար ճանապարհ անցավ՝ իրենով համակելու համար հայ հասարակական բոլոր խավերին։ Այլ խոսքով, մինչև 1720-ական թվականների սկիզբը ռուսոֆիլ հոսանքի հունը չափազանց նեղ էր։ Դրանով իսկ առավել արժեվորվում է այն անհատների դերը, որոնք այդ հունի մեջ հայտնվեցին։ Եվ Եղիա Մուշեղյանը նրանցից մեկն էր։ Ոչ ոք չի պատրաստվում վերջինիս համեմատել Իսրայել Օրու հետ։ Սակայն անվիճելի է, որ Եղիայի պես ռուսամետ և միաժամանակ ազգասեր ու հայրենասեր մարդկանց կարիքը չափազանց մեծ է եղել հայ իրականության մեջ ռուսական կողմնորոշման խմորումների շրջանում, և նրանց քանակը ուղիղ համեմատական էր այդ շարժման աճին։

Քանի որ Օրու անձի շուրջ ստեղծվել էին իրարամերժ կարծիքներ[18], իսկ պարսից արքունիքը քաղաքական դիրք ուներ նրա նկատ-

ժամը, անհրաժեշտ էր հակազդեցության պատշաճ ուժ՝ հաղթահա-րելու այն պատնեշը, որի ետևում Օրու հակառակորդներն էին, իրա-նահայ հարուստների «չարամտությունն» ու նրանց լրտեսները, առանձին անձանց ու խմբերի թշնամական վերաբերմունքը[17]:

Հակազդող ուժեր, անշուշտ, գոյություն ունեին, նույնիսկ՝ պարսկահայ հարուստ վաճառականների շրջանում: Սակայն Օրու գործը պաշտպանում էր տասնյակ ստվար բանակ, նրան հավատ ընծա-յողների, նրա գործունեության արդյունքին սրտացավ սպասողների, մի խոսքով՝ նվիրյալների բանակ: Եղիա Մուշեղյանը, փաստորեն, այդ նվիրյալներից էր: Պատահական չէ, որ 1709—1710 թթ. Օրու շուր-ջըն առնչված մթնոլորտը նկարագրելու համար Ա. Հովհաննիս-յանն իբրև կարևոր աղբյուրներից մեկը վկայակոչում է Մուշեղյա-նին. «Թե ինչ մթնոլորտ էր առնչված այս պահին Օրիի շուրջը՝ անհերքելի է նաև նույն այդ ժամանակ նրան Շամախում դիմավորած լատինադավան առևտրական Եղիա Մուշեղյանի վկայությունները[18], որին հանձնում է Եղիայի ականջ՝ Պետրոս Թագավորի նկատմամբ իր նվիրվածության հավաստիքը: Ա. Հովհաննիսյանը համոզված է, որ Մուշեղյանը Պետրոս Մեծի հայանպաստ տրամադրության մասին «հավաստապես լսած կարող էր լինել... հենց Օրիից»[19]:

Գիտական գրականության մեջ Եղիա Մուշեղյանին անդրադառ-նում են իբրև վաճառականի և հասարակական գործչի, բարեր գնա-հատական տալով նրա անձին և գործին: Այնուհետ, սակայն, մեզ հետաքրքրողը հետազոտողների կողմից Եղիային՝ որպես ռուսա-կան կողմնորոշման գաղափարակիցի, որակումն է, որը չի նկատ-վում, ավելի ճիշտ՝ որը, թեև, ուղղակիորեն չի արվում նրան, սա-կայն անհերքելիորեն բխում է նրան հասցեագրված գնահատական-ներից:

XVIII դ. հայ-ռուսական հարաբերությունների վերաբերյալ վա-վերագրերի ժողովածուի մեջ Մուշեղյանը ներկայացվում է որպես «Իսրայել Օրու ականավոր ժամանակակիցը, որը հանդիպում է ու-նեցել նրա հետ Շամախում...»[20]: Խոսելով Գյանջայի բնակիչների և սոմանցիների մինչև 1723 թ. պատերազմների մասին, Ա. Հովհան-նիսյանը վկայակոչում է դարձյալ Մուշեղյանի տեղեկությունը, նը-րան անվանելով «այն դարաշրջանի երևելի հայ գործիչ»[21]: Հ. Ռուխ-յանը, ով 1927 թ. հանգամանորեն ծանոթացել է Մուշեղյանի ձեռա-գիր աշխատությանը[22] և նրա մասին ուշադրավ գործ գրել՝ ձեռագրից

ընդարձակ մեջբերումներով, նշում է, որ Եղիան «Հայաստանի ա-
զատության բարձր նպատակին էր նուիրուած»[23]։ Նույն հեղինակի
ծանուցմամբ Եղիայի գրչին պատկանող «Վրիժառութիւն»[24] գրու-
թյունը կարևոր նյութ է բովանդակում, «վասնզի առանց մէկ ամփո-
փուած են Եղիայի՝ իր ազգին ազատութեան համար առած քայլե-
րը»[25]։

Եվ այսպես, վաղ հասակից Եղիան արդեն տոգորված էր ազ-
ատագրական հույզերով և Հայաստանի ազատագրման համար ուղի-
ների որոնմամբ։ «Թէպէտ վաղուց գիտէի,— գրում է նա,— թէ
Պետրոս Թագաւորն գալոց է փրկել զազգն մեր, բայց առաջի ան-
գամն որ գնացի Շամախի եւ հաստատապէս լսեցի, թէ ամենեքն
սուրբ Թագաւորն գալոց է առնուլ յերկիրն Պարսից վասն փրկելո
զմեզ, առժամայն ուխտ եդի...»[26]։ Ի դեպ, այդ գաղափարը նրան
զբաղեցրել է ամբողջ կյանքում, և այն աստիճան, որ ինչ-որ տեղ
նա արդեն համոզված էր, որ իր միջոցով տեղի կունենա հայոց ա-
զատագրումն օտար չէր։ Նա հատկապես ընդգծում է դա իրեն
ժառանգ պատրի Հովհաննեսի վարքագիծը մեկնաբանելիս.
«...Նայ տեսաւ իմ փառքն... եւ առուցիւ զքեզ, թէ իմ ձեռամբն լի-
նելոց էր փրկութիւն ազգին իմոյ, նախանձեցաւ, անապարեաց ոչ
լինել»[27]։ Անգամ Ռուսաստանում կրած բազում դառնություններից
հետո հեռանալով այնտեղից, Եղիան շարունակում է փայփայել իր
մեջ մեծ ու պայծառ գաղափարը։ Ռուսաստանից դուրս գա-
լուց հետո համաձայնություն սնվելով դեպի Եվրոպա, Եղիան «Հետե-
ւեալ նպատակները դրած էր՝ տեսանել Եվրոպա, աշխատել հայ ազ-
գին ազատութեան համար, իր մասին եղած կասկածները փարա-
տել...»[28]։

Այսքանից հետո միանգամայն հասկանալի է, երբ Եղիան մեզ
ներկայանում է որպես անձնազոհության պատրաստ հայրենասեր,
որն իր ազգի ազատության և թագավորության դիմաց իր կյանքը
պահանջելու գնալում «յոժար կամօք... մատուցանեմ զանձն իմ»[29]։
Իսկ Եղիայի հայրենի ուխտը, որի մասին հիշատակեցինք մեջբերում-
ներից մեկում, հետևյալն է։ Շամախում հաստատապես հավա-
տիանալով, որ, իբրև, Պետրոս Մեծը գալու է Պարսկաստան և փր-
կելու մեր ազգը, Եղիան խոստանում է. «ուխտ եդի յանձին իմոյ
առնել յամենայն աւուր հինգ հայր մեր եւ հինգ ողջոյն Մարիամ...
այսու դիտաւորութեամբ, թէ Տէր Աստուած, ի տասանց կենացն ի-

մեջ հաստ շինէին եւ դիր ի վերայ կենացն Պետրոս Թագաւորին։ Տէր, տուր նմայ առաւել կարողութիւն, զօրութիւն, որ ամենայն յաջողութեամբ գայ եւ ազատէ զմեր ազգն...»[30]: Նշենք, որ Ծերենին հուզում էր ոչ միայն հայ ժողովրդի՝ ռուսաց թագավորի միջոցով ազատագրումը, այլև, ինչպես իրավամբ նկատում է Ա. Հովհաննիսյանը, հայոց թագավորության, պետական անկախության վերականգնումը, որը պարսկահայ վաճառականների միջավայրում արագ-մաղարյան ապրում մի գաղափար էր»[31]:

Ծերեն Մուշեղյանի քաղաքական վարքագծի վերաբերյալ Հ. Ոսկյանի հետևյալ դիտարկումը չափազանց արժեքավոր է մեր եզրահանգման համար։ Անդրադառնալով Մուշեղյանի երկասամբ գրպարտություններին, Հ. Ոսկյանը մասնավորապես նշում է, որ ամենախոր հարվածը, որ մեծապես ցնցում է նրա ազգասիրական ոգին, այն գրպարտությունն էր, թե. «Նա իր ազգին ու հայրենիքին ազատութեան թշնամի է, մինչդեռ ինքն Իսրայէլ Օրիի հոգւով, թէեւ, ինչպէս կերեւայ, գործելու կերպին մէջ բաւական տարբեր ուղղութեամբ, հաշտուելէ գերութեան լուծը ընկենել...»[32]: Եվ իրոք, Ծերենն թեև ոգևորված է նաև Օրու գաղափարներով և Ռուսաստանի նկատմամբ նրա հավատով ու ակնկալիքով, սակայն գործունեության կերպն ու մեթոդն այլ է ընտրել։ Դժվար է անվերապահորեն մեկնաբանել Մուշեղյանի՝ նման գործելակերպի պատճառները։ Սակայն ակնհայտ է այն փաստը, որ Ծերենն իր ծրագրերի իրականացման համար գործում էր միայնակ, մի տեսակ մենիշխանությամբ, որ կարելի է բացատրել կա՛մ արտակարգ զգուշավորությամբ, կա՛մ իր ուժերը գերագնահատելու մարմաջով (հիշենք նրա խոսքերը՝ «իմ ձեռամբն լինելոց էր փրկութիւն ազգին իմոյ»)։ Ինչ վերաբերում է զգուշավորությանը կամ գաղտնապահությանը, ապա այն պարզապես անհրաժեշտություն էր ազգային-ազատագրական շարժման ընթացքում։ «Մայրահեղ ծածկամտությունն ու զգուշավորությունը» Ա. Հովհաննիսյանը դիտում է որպես «Օրիի և Մինաս վարդապետի գործունեության հատկանշական կողմը...» և նշում, որ վերջիններս «տապալեցին իրենց կյանքի կարևոր շրջանը քաղաքական գաղտնի բանակցությունների մեջ»[33]:

Ի դեպ, գաղտնապահությունը Ծերենի մոտ, կարելի է ասել, նաև «պրոֆեսիոնալ» հատկանիշ էր, քանի որ նամակները, որոնցում վաճառականները միմյանց հաղորդում էին առևտրի ակնհայտ-

ՀԻ հույժ կարևոր գաղտնիքներ, նույնպես պահանջում էին խիստ գաղտնապահություն և միայն հուսալի նամակատարի միջոցով էին ուղարկվում, բայց և այնպես, մեծ թվով նամակներում Օզիսան դըժգոհում էր հասցեատիրոջը՝ ոչ մարդու չասելու։

Այլ պատճառներով հանդերձ, նաև ծայրահեղ գաղտնապահության հետևանք չէ՞ր արդյոք, որ Մուշեղյանն իր գեղեցիկ հայրենասիրական գործակալներով մնաց ստվերում։ Նույնիսկ Իսրայել Օրու նման մեծության անունն ինչ-որ տեղ «առեղծված» չափազանց գաղտնի գործելակերպի պատճառով, մեծ ջանքերով նա իր կողմը գրավեց Եսայի կաթողիկոսին, որը, սակայն, չկարողացավ լավ ծանոթանալ Օրիի գործերին ու ծրագրերին[34]։ Հակառակ համոզելով կաթողիկոսին՝ գնալ Մոսկվա, Օրին, սակայն, չբացահայտեց նրան իր նպատակները... Իսկ կաթողիկոսն իր գրած պատմական հիշատակարանում անվանում է Օրուն՝ ծվ, ֆվեքեր, այսպիսի մի ուխուր փառ. Պետրոս Մեծի պարսկական արշավանքից հետո հայերի կողմից Ռուսաստան ատարված բազում գրությունների մեջ որևէ ակնարկություն չենք գտնում այն մարդու մասին, որ առաջինն էր հայերի քաղաքական ճակատագիրը Ռուսաստանի միջոցով տեսնել կամեցողներից։ Իսկ ի բնածաբար հայերը գնացին Իսրայել Օրիի նշմարած քաղաքական հունով՝ անծանոթ պատմական այն խոշոր դեմքին...»[35]։

Եթե ուշադիր քննենք, նույն կերպ Մուշեղյանն է անտեսվել (որին, անշուշտ, լավ է նույնացնել Օրու մեծության հետ, և որի գործունեությունն անհետ մնալու ավելի վտանգներ ուներ)։ Գրեթե բոլոր անունները, որոնց հետ Եղիան առնչվել է 1724 թ. նամակագրությամբ, կարող ենք հանդիպել այդ շրջանին վերաբերող պարսկահայկական հետազոտություններում, որոնցում, սակայն, չենք գտնի Եղիա Մուշեղյանի անունը[36]։

Զարմանք է հարուցում Եղիայի գործելակերպի մեջ նկատվող հակասական գծերի առկայությունը. մի կողմից ծայր աստիճանի գաղտնապահություն, անգամ անպատեհ դեպքերում, մյուս կողմից անզգուշաբար մատնում իր ծրագրերն ու իր անձին, որը և ճակատագրական եղավ նրա համար։

Այժմ, երբ հիմնականում մեկնաբանված են Մուշեղյանի քաղաքական հայացքները և նկարագրված նրան շրջապատող քաղաքական-հասարակական միջավայրը, թերևս միանգամայն պարզ

ու հավանալի է Թումանյանում նրան հասած պատասխանը. Թեև, առաջին հայացքից՝ անտրամաբանական։ Այնուհետև ուշագրավ անձնավորություն, որպիսին Եղիան էր, պետք է որ Թումանյանում, եթե ոչ գրեթե ընդհանրություն գտներ, ապա, առնվազն, վտանգներից զերծ ու ապահովագրված լիներ։ Սակայն չպետք է մոռանալ, որ ռուսաֆիլ Եղիան իր վրա էր առնում Պարսկաստանի հակառուսական տրամադրությունների ալիքը. ուստի և՛ ռեժիմները, և՛ պարսից իշխանությունները առիթը բաց չէին թողնի հալածելու նրան։ Դրան ավելացնենք, որ կաթոլիկ Եղիայի դեմ սուր էին ճոճում, ինչպես նշեցինք, հայ լուսավորչականները, ասել է թե պարսկահայ համայնքի լայն շրջանները, որոնք նրան հռչում էին դավաճան, աղանդավորական խանգարիչ...։

Առիթը ներկայացավ։ Իմ գործի դրվեց ժամանակի միջպետական հարաբերություններում (մանավանդ՝ Եվրոպա—Արևելք) ընդունված բանակցությունների մեքենան։ Բավական էր ռուսական իշխանությունների մոտ շշնջալ, թե Եղիան ֆրանսիական գործակալ է, նաև դավաճան է բնիկներու ռուս-թուրքական նորերս կնքված պայմանագիրը, որպեսզի անվստահության ամպերը Եղիա Մուշեղյանի վրա կուտակված լինեին և նրա ծրագրերն իր հետ միասին ձերբակալվեին։

Դատական գործում տեղ է գտել զեկուցագրերի, ամբաստանագրերի, վկայագրերի, մեծաթիվ հարցաքննությունների արձանագրությունների և համանման այլ գրությունների բազմություն, որի մեջ և նշվածների խաչաձև համեմատություններն են, քանի որ հեղինակները (Իսմայել-բեկ, Հակոբ [Яков Григорьев], Մինաս վարդապետ, կապուչին Հովհաննես [Իվան Բարթոտ], Եղիա) տարբեր կերպ էին մեկնաբանում միևնույն իրողությունը։ Այս լաբիրինթոսում մերթընդմերթ արծարծվում էին ամենաթեժ՝ Եղիայի ու Հովհաննեսին այս կամ այն վայր տեղափոխելու մասին (Մոսկվա, Ս. Պետերբուրգ, Թիֆլիս, որոշակի տեղ և այլն) և ապա՝ վերջնական վճիռ նրանց վերաբերյալ։

Դատական գործում մեղադրանքների մեծ մասը պտտվում է, որքան էլ տարօրինակ թվա, Եղիա Մուշեղյանի, իբր, հակառուսական խռովությունների շուրջ։ Չզայի տեղ է հասկացվել Հակոբ Գրիգորևի[57] զեկուցագրերին և նրանց պարզաբանումներին։ Պակաս չպացրել են պատրի Հովհաննեսը և Մինաս վարդապետը։ Վեր-

չինս, օրինակ՝ վկայել է. «Մուշկիլը նորին կայսերական մեծության նկատմամբ անբարյացակամ է»[38]։ Հակոբ Գրիգորի զեկուցագրում կարդում ենք. «Նույն ինքը՝ Իլյան Նիժնիում, բարկացած լինելով, ասել է... որ Ռուսաստանում միայն քրիստոնեական եկեղեցիներ են և եկեղեցիների վրա՝ խաչեր, և զանգերը ղողանջում են, իսկ զորքերով սուսերը ոչ քրիստոնյա մարդիկ են, ովքեր ասում են...»[39]։

Եղիայի «հակառուսական» պահվածքի մասին զեկուցագրերը, հավանաբար, թույլ գտնվեցին, քանի որ հիմնվում էին միայն բանավոր խոսքի վրա, և ինքը՝ Եղիան իր պատասխաններով, նաև հայտարարություններով հերքում էր դրանք. այսուհանդերձ, անվստահության քողը մնաց նրա վրա։

Արտաքին գործոց կոլեգիայում մեծ իրարանցման պատճառ է դարձել մատնիչների տեղեկությունը շահի ուղերձների մասին, որոնք ի վերջո գտնվեցին Եղիայի «սնդուկներում»։ Թարգմանվեցին, ուսումնասիրվեցին ծայրից ծայր և երբ համոզվեցին, որ նրանցում որևէ սպառնալիք չկա Ռուսաստանի համար, այս մասին հարցաքննությունների շղթան փակեցին։

Հատկանշական է, որ Մուշկիլյանը ջանում էր դատական պրոցեսն իսկ օգտագործել իր գաղափարների որևէ կերպ արտահայտման համար, և մեղադրական գործի փաստաթղթերում հանդիպում ենք Ռուսաստանի միջոցով թուրք-պարսկական լծից հայերի ազատագրման մասին խոսքերի։ Պարոն Հովհաննեսի հարցաքննության արձանագրության մեջ կարդում ենք. «Մեկ էլ այն էի ուզում հաղորդել, որ շատ քրիստոնյաներ Պարսկաստանի ներսում և հատկապես՝ հայեր, պարսիկներից մեծ նեղություններ են կրում և այդ պատճառով չէի՞ն բարեհաճի, արդյոք, նորին կայսերական մեծությունը նրանց փրկության համար իր զորքերը մտցնել այնտեղ»[40]։ Ակնհայտ է Եղիայի ազդեցությունը, որն օրինաչափ է թվում այնպես, ինչպես նրա ձգտումը՝ համոզել ռուս պաշտոնյաներին, թե պարսից շահը դրական վերաբերմունք ունի Ռուսաստանի հանդեպ[41]։

Գործում առկա են մի շարք հրահանգներ, ցուցումներ, որոշումներ, հրովարտակներ՝ արված 1725 թ. և նրանից հետո արձակված, որոնք, որպես գերագույն վճիռ, թելադրում են կալանավորների հետագա ճակատագիրը։

1725 թ. ապրիլի 20-ի որոշմամբ Հովհաննես կապուչինին տեղեկ-թյով կառավարության պատճառների բերումով անցագիր չի տրվի ռուսական պետության տարածքով անցնելու, այլ նա կտրվի Աստրախան, ձմեռն անցկացնելուց հետո 1726 թ. կուղարկվի Դերբենդ, որտեղից՝ Պարսկաստան: «Ինչ հայ Իշխան Մուշեղին հայտարարել, որ, թեև նա ենթակա էր խոշտանգման և պատժի, սակայն, քանի որ նա հայտարարել է, թե բարեկամներ ունի պալատում, հանուն դրա ներել նրա մեղքը, որ նա, բնակվելով Աստրախանում և Թերգթունցելով, չարժե լավ արամադրի գեղի նորին կայսերական մեծության...»[43]:

Նույն որոշմամբ հայտարարվեց. Եղիային պահել հսկողության տակ, նրա և Հովհաննես կապուչինի մոտ եղած նամակները և ուղերձները չվերադարձնել իրենց, այլ պահել արտաքին գործոց արխիվում:

Նույն որոշմամբ՝ մասնիլ Հակոբին տպագրած կերպով պարգևատրել և թույլ տալ գնալ ուր որ կցանկանա[43]:

Մեկ այլ՝ 1725 թ. օգոստոսի 6-ի որոշման մեջ ասվում է, որ Մուշեղյանի գործը լավել է և ավարտվել, նրան հրամայված է լինել թագուհու ծառայության մեջ Աստրախանում[44]:

Վերջին՝ 1726 թ. սեպտեմբերի 22-ի Եկատերինա կայսրուհու հրամանագրում կարդում ենք. Եղիային երկու մարդով անցագիր տալ Աստրախան, պահել բոլոր նախկին ցուցումի և տալ առևտրի ազատություն, որ իր անունը ապահովի[45]:

Այս որոշումից ևս մեկ տարի անց միայն Եղիան հնարավորություն է ստանում և 1736 թ. լքում Ռուսաստանը[46]:

Կարծում ենք, Մուշեղյանի նկատմամբ դավաճանական գործողությունները հիմքում ունեին և՛ անձնական, և՛ պետական շահերից ելնող դրդապատճառներ: Անհնարին հարկ չկա այստեղ մեկ առ մեկ վերլուծելու յուրաքանչյուր մասնիկի նպատակները, կամենում ենք միայն մեջբերել Եղիային համակրող մի վկայագրի բացառությունը նրա ձերբակալման պատճառների մասին: Դիմելով Եղիային, նա ասում է. «Նախ, դուն միշտ գովաբանելիք զորս թագաւորն առաջի պարոնց... Տեսաւ (պատրի Հովհաննեսը—Լ. Դ.) զքո ջերմեռանդ սէրն ընդ Ռուսաց և յայտնին ընդ Ֆռանգիւղս, իբր թէ կամիս... միաբանել զասն Ռուսաց: Որպես երկրորդ պատճառ նշում է, թե պատրի Հովհաննեսը ցանկանում էր հեռանել պատ-

էր Թեհրանցում՝ Եղիայի ներկայությամբ գրված գիրքին։ Երրորդ՝ որ-դեգրել Ռուսաստանում ունեցած իրենց վանքերի ապավենով ապ-րելու։ Չորրորդ՝ արդյոք Եղիային թողնի Ռուսաստանում շնոր-հակալ և ինքն շտապի միայնակ առ ջահեր[17]։

Այս գիրքին ցնցարկման հարաբերությամբ ավելացնենք, որ Եղիայի և Հովհաննեսի միջև համաձայնությունը վաղուց էր ծագել, և ուղեկիցների առթիվ էլ նրանց միջև ամբողջությունն էր գնում, թե ով երևելիների պատասխանատվությունը[18]։

Եվ այսպես, համաձայն Պետրոս Մեծի հետ այցելու էլ մե-ծաց բարձունք, թեև Մուշեղյանը չէր կորցնում հույսը նույնիսկ ներ-կայացումից հետո և 1724 թ. դեկտեմբերի 16-ի նամակում գրում է Մելիքներին. «...բարով որ թագավորի լիրեան տեսնեմ...»[19]։ Իսկ Պոլոնիկինին գրում է, որ ինքը հույժ պատրաստ մի գործ ունի, որը միայն թագավորին կասեմ[20]։

Ինչպես տեսնում ենք, Եղիա Մուշեղյանի հավատամքը՝ Ռուսաստանի միջոցով հայ ժողովրդի ազատագրման գաղափարն ան-հողդողդ է եղել. փաստորեն, նա զերծ էլ է բանսարկությունների զոհ՝ ի հետևանս հենց իր ռուսամետ հայացքների. բայց անկախ նրա անհանձնյան գործողությունների մեթոդից կամ արդյունքից, բոլոր վավերագրերով հանդերձ, Մուշեղյանը եղել է հայերի ա-զատագրման ռուսական կողմնորոշման գաղափարակիրն ու քա-րոզիչը և այդպիսին պետք է ճանաչվի հայ պատմագիտության մեջ։

LORETTA DANEGHIAN

YEGHIA MOUSHEGHIAN AS APOLOGET OF RUSSIAN ORIENTATION

In the course of the Armenian liberation movement the Russian orientation became decisive making possible the liberation of Armenia from the Turkish-Persian domination. But the idea of Russian orientation was formed step by step, initially (early XVIII c.) having few supporters. Among the latters was Yeghia Mousheghian—a merchant who was engaged in the political life of Persia.

Since youth Yeghia was inspired by attempts to find ways of the liberation of Armenia. He was impressed by activities of

Israel Ori. Yeghia had chosed the individual way of struggle. He decided to negotiate with Russian tsar Piotr the Great. For this purpose he took the letters of Russian Shah Tahmasp addressed to European monarchs, in order to make use of this occasion for visiting Russia. But in 1724 he was imprisoned in Russia and spent there 12 years. The mission of Yeghia had failed.

The ideas of Yeghia Mousheghian's Russian orientation were formulized in his court documents (now in his archive, in Moscow).

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ [illegible] «Архив внешней политики России» Историко-дипломатического управления МИД СССР, ф. 100, «Сношения России с Арменией», 1724 (այսուհետև՝ АВПР, ф. 100)։ [illegible]

² [illegible]

[illegible]

³ [illegible] «Дело о заресторании... армянина Ильи Мушеева» (АВПР, ф. «Сношения России с Персией», д. 10 (այսուհետև՝ АВПР, д. 10)։

⁴ АВПР, д. 10, л. 1а.

⁵ Նույն։

⁶ [illegible] XVI, Երևան, 1956)։ [illegible] Երևան, 1968 (այսուհետև՝ [illegible])։

⁷ [illegible]

⁸ [illegible] (այսուհետև՝ [illegible])։

⁹ Տե՛ս АВПР, ф. 100, д. В—1, л. 4, 6, 7, 8, 11, 20, 26...

¹⁰ [illegible] 1968, էջ 81—112 և 181—212), [illegible] 8444, էջ

292բ—314բ), Հմմտ. Ա. Տեր-Աբրահամյան, Նադիր շահի արշավանքները (ըստ [illegible]), Երևան, 1940, Աբրահամ Երևանցի, Պատմություն պատերազմացն (1721—1736), Երևան, 1938, [illegible] Պատմություն [illegible] (Մատենագրություն, [illegible] ժողովածու, Երևան, 1941, գիրք I, էջ 101—128), С. Р. Кишмишев, Походы Надир-шаха в Герат, Кандагар, Индию, Тифлис, 1889; [illegible] Պատմություն [illegible] ժողովածու, Թեհրան, 1949 (պարսկերեն)։

11 ՆԿԴ, համար 158։

12 Ա. Հովհաննիսյան, Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը, Էջմիածին, 1921, էջ 55։

13 Տե՛ս նույն, էջ 62։ Օրու մահից հետո նրա թղթերի մեջ գտնվել է [illegible] մի [illegible] [illegible] մասին, [illegible] մի [illegible] 1752 թ. [illegible] է [illegible] և [illegible], որ [illegible] չեն [illegible]... (նույն, էջ 60)։

14 Տե՛ս Հ. [illegible] և ուրիշ. Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1975, էջ 670—671։

15 Ա. Հովհաննիսյան, Հայ-ռուս օրիենտացիայի..., էջ 63։

16 Օրու մասին ուսումնասիրությունների վերաբերյալ տե՛ս [illegible] Հայ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], որը [illegible] է Ա. Հովհաննիսյանի «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» երկրորդ գրքում (Երևան, 1959, էջ 584—595, այսուհետև՝ Դրվագներ)։

17 Այդ մասին մի շարք վկայություններ [illegible] [illegible] [illegible] Օրու թղթերը, [illegible] է [illegible] [illegible] և [illegible] [illegible] փաստաթղթեր (տե՛ս Г. А. Эзов, Сношения Петра Великого с армянским народом, СПб, 1898, № 25, 98, 152):

18 Դրվագներ, II, էջ 570։

19 Նույն, էջ 570—571։

20 «Армяно-русские отношения в первой трети XVIII века». Сб. документов, т. II, ч. I, Ереван, 1964, с. 340.

21 Նույն, էջ LXVI։

22 Տե՛ս [illegible] [illegible] [illegible] է Վիեննայի Մխիթարյան մատենադարանում [illegible] [illegible] Մատենադարանում։

23 Տե՛ս Հ. Ոսկյան, [illegible] [illegible] [illegible] և իր [illegible] [illegible], Վիեննա-Մխիթարյան տպարան, 1927, էջ 18 (այսուհետև՝ Ոսկյան)։

24 Այն վերաբերվում է [illegible] երկրորդ կեսի հայ և [illegible] (Ոսկյան, էջ 64)։

25 Նույն, էջ 65։

26 Նույն, էջ 74։

27 Նույն, էջ 27։

28 Նույն, էջ 28։

29 Տե՛ս ՆԿԴ, էջ XXVII, Հմմտ. Ոսկյան, էջ 36. Դրվագներ, II, էջ 571։

30 Ոսկյան, էջ 76, 74։

31 Գրքացանկ, II, էջ 571։

32 Ոսկյան, էջ 49։

33 Ա. Հովհաննիսյան, Դրվագներ ազատագրական…, էջ 84։

34 Նույն, էջ 88։

35 Նույն։

36 Ըստ՝ Աբի Աբգար Թիֆան, որը ծագումով ասորի է եղել, կրթված գաղափարի և գիտնականների պատմություն. Հանգամանքներն անդրադառնում է նաև 1784 և հաջորդ թվականների ռուս-պարսկական հարաբերություններին, խոսում է ժամանակի շատ գործիչների մասին, որոնց թվում են նաև Իրաքլի մի շարք հայազգիներ (Բաղդաս-բեկ, որ Բաղդ և այլք), ասելով Մովսեսյանի մասին լուրեր է (տե՛ս Աբի Աբգար Թիֆան, Իրանի քաղաքական և գիտնականների պատմություն, Թեհրան, 1337 (հիջրի) (պարսկերեն)։

37 Այս անհամաձայնության պատճառներ Ա. Աբրահամյանը նշում է՝ հայտնություն (ՀԺՊ, էջ XVIII), մենք, սակայն, կարծում ենք Գրիգորի (...ական գործում է)։ Դավիթ Հեքիմ (Մանուկ) Գրիգորին գնահատում... Այս հանգիստ անհամաձայնություն էր և Իրաքլի խորքին է մեծացել Աստրախանում, որից հետո շարունակ հետամուտ է եղել ասում իր մտադրություններին իրանի պաշտոնյա Իրաքլի և հայոց մեջ քաղաքի մասին (АВПР, 9. 10, л. 101—104):

38 АВПР, д. 10, л. 38 об.

39 АВПР, д. 10, л. 292.

40 АВПР, д. 10, л. 296 об.

41 АВПР, д. 10, л. 293, 176 об.

42 АВПР, д. 10, л. 186—186 об.

43 АВПР, д. 10, л. 187.

44 АВПР, д. 10, л. 261.

45 АВПР, д. 10, л. 272.

46 Հ. Ոսկյանի ծանոթագրությամբ՝ Թումանյանով կյանք նկարագրությունների մասին եղիան պատմում է «Ազգաբանություն» գրքում, որը մեզ չի հասել (այդ մասին տե՛ս գրված է Հայկական Հանրագիտարանում)։

47 Ոսկյան, էջ 37։

48 ՀԺՊ, էջ XXV, 284։

49 АВПР, д. 10, л. 88.

50 ՀԺՊ, էջ 287։

ԹԻՆԱՏԻՆ ՆԱՍՏԻԿՅԱՆ

ՂԱՐԱԲԱՂԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԷՋԵՐՈՒՄ

XIX դարի երկրորդ կեսին Ղարաբաղում գրվում են մի շարք պատմագրական երկեր՝ նվիրված նրա XVIII—XIX դդ. պատմությանը։ Պատմագրության զարգացումը, անշուշտ, կապված էր Ռուսաստանի տիրապետության տակ անցնելուց հետո Անդրկովկասում հաստատված ռուսական խաղաղության պայմաններում այստեղ նկատվող ընդհանուր մշակութային վերելքի հետ։ Պատմագրական երկեր են գրվում նաև ցարական բարձրաստիճան պաշտոնյաների պատվերով[1], որն արդյունք էր նոր նվաճված այդ տարածքի ու նրա բնակչության պատմական անցյալի նկատմամբ ցուցաբերած հետաքրքրության։ Պատմագրական երկեր են ստեղծվում Անդրկովկասի այլ տարածաշրջանների պատմության վերաբերյալ[2], սակայն դրանց թիվը անհամեմատ ավելի փոքր է։ Կարծում ենք, պատճառը XVIII դ. երկրորդ և XIX դ. առաջին կեսերին Ղարաբաղում տիրող բարդ էթնոքաղաքական իրավիճակն էր։ 1822 թվականից Ռուսաստանի գավառներից մեկը դարձած Ղարաբաղում իրար հետ կողք-կողքի ապրում էին հայերը (հիմնականում պատմական Արցախի լեռնային շրջաններում) և թյուրքական ու քրդական քոչվոր մահմեդական ցեղերը (հիմնականում Ղարաբաղի և Միլի հարթավայրերում)։ Պետք է նշել, որ վերջիններս Ղարաբաղում մահմեդական խանության գոյության շրջանում (1747—1822 թթ.) արտոնյալ դիրքեր էին գրավել երկրի թե՛ տնտեսական կյանքում և թե՛ կառավարման բարձր օղակներում։ Խաների օրոք ի հայտ են եկել բազմաթիվ մահմեդական ավատատերեր՝ բեկեր, որոնք XVIII դարի սկզբին, խամսայի մելիքությունների հզորության ժամանակա-

շրջանում, Ղարաբաղում գոյություն չունեին[3]: Բեկերը վարում էին խանության կառավարման բարձր պաշտոնները և Ռուսաստանի գերիշխանության տակ անցնելուց հետո էլ ջանում էին պահպանել իրենց դիրքն ու արտոնյալ վիճակը:

Ցարական պաշտոնյա Գրուժանովսկին 1845 թ. իր զեկուցագրում նշում է, որ բոլոր ղարաբաղցիները դեռևս լիովին համոզված չեն, որ ռուսները ընդմիշտ հաստատել են իրենց գերիշխանությունը տարածաշրջանում[4]: 1828 թվականից հետո Ղարաբաղ վերադարձած Նախիջևանի խանը, նրա ազգականներն ու ազդեցիկ բեկերը ձգտում էին այստեղ վերահաստատել այն դրությունը, որ սահմանվել էր Իբրահիմ խանի ու Պ. Ցիցիանովի միջև 1805 թ. կնքված պայմանագրով, այսինքն՝ խանությունը, որը ներքին կառավարման հարցում ուներ ինքնուրույնություն[5]:

Հայ բնակչությունը հարևան թյուրքական և քրդական քոչվոր ցեղերի ասպատակություններից պաշտպանվելու համար հիմնականում բնակվում էր պատմական Արցախի լեռնային շրջաններում: Իրանի Նադիր շահի օրոք այստեղ ստեղծվում է հայկական ռազմա— և տնտեսա վարչական միավոր՝ կազմված հինգ հայկական մելիքություններից[6]: Սակայն XVIII դարի կեսերին հայ մելիքները աստիճանաբար կորցնում են իրենց անկախությունը:

Հայ բնակչությունը, որ դեռևս XVIII դ. 20-ական թվականներից իր հայրենիքի անկախության վերականգնման համար մղած պայքարում մեծ հույսեր էր կապում Ռուսաստանի հետ[7], մեծապես օժանդակում է ցարական արքունիքին՝ Անդրկովկասում իր նվաճողական ծրագրերը իրագործելու: Ռուսական կառավարությունը, սակայն, Անդրկովկասի նվաճումից հետո էական փոփոխություններ չի կատարում հայ բնակչության տնտեսական ու սոցիալական կյանքում[8]: Ղարաբաղի հայկական տարածքները չեն միացվում ոչ 1828 թ. ստեղծված Հայկական մարզին և ոչ էլ 1849 թ. Երևանի նահանգապետությանը: Այս հանգամանքը իր բացասական հետևանքներն է ունենում հայ բնակչության հետագա գոյավիճակի վրա՝ պատճառ դառնալով ազգամիջյան բախումների ու Ադրբեջանի ոտնձգությունների՝ Ղարաբաղի հայկական տարածքների նկատմամբ:

Այսպիսով, մի կողմից տեղի մահմեդականները, ցանկանալով վերահաստատել խանական շրջանում իրենց ունեցած արտոնություն-

խերը և գերիշխող դիրքերը տեղի հայության նկատմամբ, մյուս կողմից էլ հայերը, ցանկալով պաշտպանել իրենց իրավունքները և ռուսական կառավարությանը ցույց տալ իրենց ունեցած դերն ու մասնակցությունը երկրի նախորդ դարի քաղաքական կյանքում, XIX դարում ստեղծում են մի շարք պատմագրական երկեր՝ նվիրված Ղարաբաղի XVIII—XIX դարերի պատմությանը։

Հայ և թուրք հեղինակների պատմական աշխատությունները միմյանցից տարբերվում են բովանդակային և ժամանակագրական որոշակի առանձնահատկություններով։ Ուստի այդ երկերը կարելի է բաժանել երկու խմբի։ Առաջին խմբի մեջ մտնում են թուրք հեղինակների պարսկերեն, թուրքերեն և ռուսերեն աշխատությունները։ Դրանցում շարադրված է Ղարաբաղի խանության պատմությունը՝ սկսած նրա հիմնադրումից մինչև ռուսաց տիրապետության հաստատումն ու Թուրքմենչայի հաշտության պայմանագրի կնքումը (1828 թ.)։

Այս խմբին են պատկանում Միրզա Ադիգյոզալ-բեկի՝ թուրքերեն «Ղարաբաղնամեն» (1845 թ.)[9], Միրզա Ջամալ Ջևանշիրի՝ պարսկերեն «Թարիխ—ե Ղարաբաղը» (1847 թ.)[10], Միր-Մեհդի Խազանիի «Քիթաբ-ի Թարիխ-ի Ղարաբաղը»[11], Ահմեդ-բեկ Ջիվանշիրի՝ Շուշիում 1901 թ. ռուսերեն տպագրած «Ղարաբաղի խանության 1747—1805 թթ. քաղաքական կացության մասին» գիրքը, Ռզաղուլի-բեկ Միրզա Ջամալզադեի[12] և Հասան-Ալի խան Ղարադաղիի «Ղարաբաղնամեն»[13] խորագիրը կրող ձեռագրերը, անանուն հեղինակի թուրքերեն «Ահվալաթ-ե Ղարաբաղ»[14] և Աբդու-Սամեդ-բեկ Բահման Միրզայի «Շուջյուրնամեն»[15] աշխատությունները։

Նպատակ ունենալով փառաբանել Ղարաբաղի խաների գործերը, նրանց հզորությունը, թուրք հեղինակները իրենց աշխատություններում չեն կարողացել անտեսել թե՛ տեղի հայ մելիքությունների, և՛ թե հայ բնակչության հետ կապված հարցերը։ Միաժամանակ ցանկանալով վերագրել խաներին ռուսական կողմնորոշում՝ նրանք լռությամբ են մատնել կամ խեղաթյուրել այն պատմական իրադարձությունները, որոնցում դրսևորվում էին խաների հակառուսական տրամադրությունները[16]։

Հիշյալ թերություններով հանդերձ, այս խմբի պատմագրական երկերը իրենցից որոշակի արժեք են ներկայացնում XVIII դարի երկրորդ կեսից XIX դարի սկիզբն ընկած ժամանակահատվածում

Ղարաբաղում գոյատևած մահմեդական խանության պատմության ուսումնասիրության համար։ Այդ երկերից առավել արժեքավոր են Միրզա-Ադիգյոզալ բեկի «Ղարաբաղնամեն» և Միրզա Ջամալ Ջևանշիրի «Թարիխ-ե Ղարաբաղը», որոնք ավելի վաղ գրված լինելու պատճառով հիմնականում սկզբնաղբյուր են հանդիսանում վերոհիշյալ մյուս պատմական գործերի համար[17]։

Պատմագրական աշխատությունների մյուս խումբն են կազմում տեղի հայ գործիչների երկերը՝ նվիրված Ղարաբաղի պատմության վերոհիշյալ ժամանակաշրջանի զանազան իրադարձություններին ու տեղի հայ մելիքությունների պատմության առանձին հարցերի լուսաբանմանը։ Հայկական այս սկզբնաղբյուրների մի մասը չի պահպանվել, սակայն Րաֆֆու «Խամսայի մելիքությունները» (1882 թ.) պատմական արժեքավոր ուսումնասիրության շնորհիվ մենք հնարավորություն ունենք ծանոթանալու դրանցում պարունակվող պատմական տեղեկություններին։

Ճիշտ է, հղումների բացակայության պատճառով դժվար է պարզորոշել, թե «Խամսայի մելիքություններում» պարունակվող պատմական տեղեկություններից յուրաքանչյուրը որ սկզբնաղբյուրից է վերցված, սակայն դա չի նվազեցնում Րաֆֆու ուսումնասիրության գիտական արժեքը։ Իրադարձությունների մանրակրկիտ ու համակողմանի քննության շնորհիվ Րաֆֆու այս աշխատությունը ստացել է պատմական կարևոր սկզբնաղբյուրի արժեք։ Հայկական և օտար աղբյուրների նյութերի օգտագործումը մեծ վիպասանին հնարավորություն է տվել շարադրել XVIII—XIX դարերի Ղարաբաղի Խամսայի մելիքությունների ու նաև մահմեդական խանության առավել ամբողջական պատմությունը։

Րաֆֆու օգտագործած հայկական սկզբնաղբյուրներից մեկ է հանգ. Աս. Գոստանյանցի երկհատորյա «Արցախի պատմությունը»[18]։ Չնայած առասպելական, հեքիաթային դրվագների առատությանը, այն կարևոր տեղեկություններ է պարունակում Դիզակի հայ մելիքների[19], Ղարաբաղի խանության, Աղա Մահմադ խանի արշավանքների, ռուս-պարսկական 1826—1828 թթ. պատերազմի ընթացքում տեղի հայության գերեվարման, Շամխորի ճակատամարտի վերաբերյալ և այլն։ Միակ հայկական աղբյուրը, որ բացակայում է Րաֆֆու ձեռքի տակ եղած նյութերի մեջ, 1853 թ. Երուսաղեմի միաբան Հակոբ Զաքարյանց Շուշեցու «Պատմություն գավառին Արցա-

խոսա փոքրածավալ երկն է[20]: Այստեղ հեղինակը իր նախնիների հիշողության հիման վրա շարադրել է Փանահ խանի կողմից Շուշիի կառուցման, Աղա Մամադ խանի՝ Ղարաբաղ կատարած արշավանքների պատմությունը, խոսելով նաև այդ իրադարձություններին տեղի հայերի դերի ու մասնակցության մասին։

Ինչպես տեսնում ենք, պատմագրական աշխատությունների այս երկու խմբերը Ղարաբաղի XVIII—XIX դարերի պատմությունը արտացոլում են հիմնականում տարբեր տեսանկյուններից և կարոտ են պատմահամեմատական վերլուծության։ Ղարաբաղի XIX դարի պատմագրության մեջ հատուկ տեղ է գրավում Միրզա Յուսուֆ Ներսեսովի (Միրզա Հովսեփ Ներսիսյանց) «Թարիխ-ե Սաֆի» («Ճշմարտացի պատմություն») պարսկերեն պատմագրական երկը, որը կարևոր սկզբնաղբյուր է մի շարք առումներով։ Գրված լինելով 1854—1855 թթ. հայազգի պատմագիր-գրականագետի կողմից՝ այն իրենից ներկայացնում է պատմագրական հիշյալ երկու խմբերի բովանդակային առանձնահատկությունների մի յուրատեսակ սինթեզ։ Քանի որ «Թարիխ-ե Սաֆին» այս յուրահատկությունը պայմանավորված է հեղինակի կյանքի անցած ուղիով, հարկ ենք համարում կանգ առնել նրա կենսագրության որոշ մանրամասների վրա[21]: Հովսեփը ծնվել է 1798 թ. Ղարաբաղի Հադրութ գյուղում, Ատրպատականի Ահար քաղաքից գաղթած հայի ընտանիքում։ 8—9 տարեկան հասակում, այսինքն 1804—1813 թթ. ռուս-պարսկական պատերազմի տարիներին, գերվում է պարսիկ ավազակների կողմից, տարվում Իրան ու ներկայացվում շահին։ Պատանին բռնի մահմեդականացվում է, վերանվանվում Յուսուֆ։ Այնուհետև պետական ծառայության անցնելու համար կրթություն է ստանում, որը այդ ժամանակ սահմանափակվում էր պարսկերենի ու արաբերենի ուսուցմամբ։ Ուսումն ավարտելուց հետո Յուսուֆը որպես դրագիր (միրզա) աշխատանքի է անցնում թագաժառանգ Աբբաս Միրզայի քեռի Ամիր խան սարդարի դիվանատանը։ Իր պաշտոնավարության 15 տարիների ընթացքում, ինչպես ինքը՝ հեղինակն է նշում իր երկի առաջաբանում, «կատարելապես տիրապետում է պարսկերենին, ծանոթանում պարսկական ու արաբական պատմագրությանը, տարբեր ցեղերի ու ժողովուրդների պատմությանն ու կյանքին»[22]: 1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ գտնըվելով թագաժառանգի բանակում, ականատես է լինում որոշ ռազ-

ժական գործողությունների[23] և վարում նամակագրությունը Աբբաս Միրզայի ու Ամիր խան սարդարի միջև։

1828 թ. Թուրքմենչայի հաշտության պայմանագրի կնքումից հետո Միրզա Յուսուֆը վերադառնում է Ղարաբաղ, ներկայանում միտրոպոլիտ Բաղդասար Հասան-Ջալալյանին, որը ձեռնադրում է նրան մկրտել և վերստին ընդունել հայոց եկեղեցու գիրկը[24]։

Ներսեսովի առաջին կինը, որ Թավրիզցի թրքուհի էր, չի ցանկանում քրիստոնեություն ընդունել և բաժանվում է։ Երկրորդ կինը հայուհի էր՝ Տոդախաթ անունով, որից էլ ծնվում են նրա զավակները՝ Ալեքսանդրը, Եկատերինան, Նիկոլայը, Ներսեսը[25] և Աննան։

Միրզա Յուսուֆ Ներսեսովը պարսկերեն ձեռագրերի՝ իր ժամանակի լավագույն ընդօրինակողներից էր (խոշնևիս)։ Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց ինստիտուտում՝ Մատենադարանում, պահպանվում են երկու պարսկերեն ձեռագրեր, որոնք ընդօրինակել է Ներսեսովը[26]։

Ղարաբաղում Միրզա Յուսուֆը երկար ժամանակ զբաղվում է մանկավարժությամբ։ 1847—1848 թթ. աշխատում է Ղարաբաղի Հայոց թեմական հոգևոր դպրոցում որպես պարսկերենի և թուրքերենի ուսուցիչ[27]։

Ուշագրավ է նրա կենսագրության մեջ նաև այն ժամանակահատվածը, երբ ծառայության մեջ է եղել հյուսիսային Դաղստանի զորքերի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Գր. Օրբելիանու մոտ որպես թարգմանիչ։ Նա վարել է ռուսական զորքերի հրամանատարության գրագրությունը Շամիլի և լեզգի խաների հետ՝ հիմնականում արաբերեն լեզվով[28]։

Հենց այս շրջանում էլ Գր. Օրբելիանու հանձնարարությամբ Միրզա Յուսուֆը գրում է «Թարիխ-ե Սաֆին»[29]։

1857 թ. Թեմիր-Խան-Շուրայում հեղինակը վիմատիպ եղանակով հրատարակում է Վաղիֆի ու նրա ժամանակակիցների բանաստեղծությունների ժողովածուն, որը նա կազմել էր 20 տարվա (1828—1857 թթ.) ընթացքում։ Այս ժողովածուն իր արժանի տեղն է գրավել XIX դարի թյուրքերեն գրականության մեջ և բարձր գնահատվել ուսումնասիրողների կողմից[30]։ Սեիդ-զադեն այդ առթիվ նշում է, որ «հեղինակներից շատերի ստեղծագործություններից բազմաթիվ նմուշներ հայտնի են միայն կամ գրեթե միայն Միրզա Յուսուֆի «Ժողովածուի» շնորհիվ»[31]։

Միրզա Յուսուֆ Ներսեսովը մահացել է 1864 թվականին[32]:

Համեմատած պարսկալեզու միջնադարյան պատմագրության ավանդներին, Միրզա Յուսուֆ Ներսեսովը «Թարիխ-ե Սաֆին» սկսել է Ադամից և հասցրել մինչև 1828 թվականը: Թեև հեղինակը իր օգտագործած սկզբնաղբյուրներից հիշատակում է միայն Մ. Ջամչյանի «Հայոց պատմություն»[33], սակայն վերը նշված թուրք պատմագրների երկերի հետ տեքստային համեմատությունից պարզ է դառնում, որ նա նախապես ծանոթ է եղել թե՛ Միրզա Ադիգյոզալ-բեկի, թե՛ Միրզա Ջամալի աշխատություններին: Չհաշված այդ գործերից վերցված որոշակի պատմական նյութին, որը վերաբերում է հիմնականում Ղարաբաղի խանության պատմությանը, «Թարիխ-ե Սաֆին» հարուստ է նաև զգալի արժեք ունեցող հաղորդումներով: Օգտվելով ժողովրդական զրույցներից, ավանդություններից և գուցե մեզ չհասած գրավոր աղբյուրներից, Ներսեսովը բազմաթիվ մանրամասն ու արժեքավոր նոր տեղեկություններ է հաղորդում Խամսայի մելիքությունների, Ղարաբաղի խանության, Շուշիի և XIX դարի ռուս-պարսկական պատերազմների պատմությունից: «Թարիխ-ե Սաֆիում» հաղորդվող պատմական տեղեկությունները աչքի են ընկնում իրենց հավաստիությամբ: Հեղինակը ջանացել է պատմական դեպքերը շարադրելիս լինել անաչառ: Իր երկի առաջաբանում նա հետևյալն է գրում. «Քանի որ պատմական գրքերից մի քանիսում սուտ հաստատագրությունների հանդիպեցի, որոնք ընթերցողների ցանկությամբ ու խորհրդով որոշեցի մի ճշմարիտ պատմություն գրել, որը զերծ կլինի ավելորդ հնարագրություններից ու սուտերից»[34]:

«Թարիխ-ե Սաֆին» զերծ է նաև պարսկական արքունի պատմագրությանը հատուկ ներբողական ոճից, նրա լեզուն գեղեցիկ է և հստակ: Պատմագրական տեսանկյունից այն կարևոր սկզբնաղբյուր է Ղարաբաղի XVIII—XIX դարերի պատմության համար:

Քանի որ հնարավոր չէ մեկ հոդվածի շրջանակներում քննել «Թարիխ-ե Սաֆիում» պարունակվող բոլոր արժեքավոր պատմական վկայությունները, ստորև կանդրադառնանք դրանցից միայն Խամսայի մելիքությունների տարածքներին վերաբերող տեղեկություններին:

Հայազգի պատմագիրը չէր կարող անտարբեր լինել հայրենի երկրի ու հնու անցյալի պատմության նկատմամբ: «Թարիխ-ե Սա-

գրքի 8-րդ գլխում Միրզա Յուսուֆը մի առանձին ենթագլուխ է հատկացրել Ղարաբաղի հայկական մելիքությունների պատմությանը։ Այն կրում է հետևյալ վերնագիրը. «Ղարաբաղի խամսայի մահալների, նրա մելիքների ծագման մասին»[35]։ Այստեղ խամսայի մելիքությունների տարածքը նա անվանում է «Թախթն Ղափուս» (թրք. «փայտյա դուռ»)։ Այս անվանը մենք որևէ այլ տեղ չենք հանդիպել[36]։

Ներսեսովը նշում է, որ Թախթն Ղափուի հինգ մահալների բնակչությունը ամբողջովին քրիստոնյա է եղել[37]։ Այնուհետև մեկ առ մեկ, հերթականությամբ խոսում է այդ մահալներից յուրաքանչյուրի տարածքի, բուսականության, մելիքական տների ծագման մասին, գրառում նրանցից նշանավորների կյանքից արժանահիշատակ դեպքերն ու դրանց վերաբերող ավանդությունները։

Խամսայի մելիքությունների տարածքային բաժանման հարցերը հետաքրքրել են հայ ուսումնասիրողներից Րաֆֆուն, Լեոյին և այլոց, որոնք միայն ընդհանուր գծերով են տալիս հայ մելիքությունների սահմանները։ Ճիշտ է, նրանց սահմանները երբեմն փոփոխվել են, սակայն XVIII դարում բուռ երկուլթին գոյություն են ունեցել որոշակի սահմանագծեր, որոնցով ժողովուրդը առանձնացնում էր մելիքություններից յուրաքանչյուրը։ Թերևս XVIII դարի պատմական իրականությունը արտացոլող ժողովրդական ավանդությունների հիման վրա են նշված հայ մելիքությունների սահմանները «Թարիխ-ե Սաֆիում»։

Հիշյալ խամսայի մահալներից յուրաքանչյուրի հյուսիսային, հարավային, արևելյան և արևմտյան սահմանները նշում է ջրերով, բլուրներով, գետերով, անտառներով և նշանավոր բնակավայրերի անուններով։ Նրա նշած ֆիզիկաաշխարհագրական տեղանուններից մի քանիսը ներկայումս փոփոխված կամ մոռացված են, հետևաբար դրանց տեղը որոշելու համար դիմել ենք XIX դարի քարտեզներին։

Այժմ տեսնենք, թե ինչպիսին են ներկայանում XVIII դարի Ղարաբաղի խամսայի մահալները Մ. Յ. Ներսեսովի «Թարիխ-ե Սաֆի» պատմագրական երկում։

«Դիզակի մահալը ձգվում է երկայնությամբ Հագարի գետից, Դյուզ-Թափիից մինչև Մալ-Թափա, իսկ լայնությամբ՝ Արաս (Երասխ) գետից մինչև Խարհատ չնարը[38]։

Ինչպես տեսնում ենք, Հայոցքի պատմագիրը գործածում է ա-րաբապարսկական պատմաաշխարհագրական գրականության հատուկ «երկայնություն» և «լայնություն» տերմինները, որոնցից առաջինով նշում է տարածքի ձգվածությունը արևմուտքից դեպի արևելք, իսկ երկրորդով՝ հարավից դեպի հյուսիս։

Դիզակի արևելյան և արևմտյան սահմանագծերի վրա բարձր լեռների բացակայության պատճառով պատմագիրը տալիս է երկու բլուրների (թուրք. Թափե), անվանումներ՝ Մալ-Թափե, որը գտնվում է Հակարի (կամ Աղավնու) գետի միջին հոսանքի աջ ափին[39] և Գյուլ-Թափե, որը գտնվում է Քենդազայան գետից քիչ հարավ, նրա գետաբերանի մոտակայքում[40]։ Այս տեղանունների բացակայությունը Ղարաբաղի բնակավայրերի ցուցակներում ցույց է տալիս, որ դըրանք չեն եղել խոշոր բնակավայրեր, այլ Ղարաբաղի հարավում ու հարավ-արևելքում այնքան առատ բլուրներից են[41] եղել, որոնք քոչվոր ցեղերի ժամանակավոր բնակության վայրերն էին։

Խորհատ Մեծ Քիրսից դեպի հարավ, հարավ-արևելք ձգվող լեռնաշղթայի լեռներից մեկն է, որը գտնվում է Դիզափայտ (կամ Զիարաթ) լեռից քիչ դեպի արևելք, ներկայիս Թողրեկ գյուղի մոտակայքում[42]։

Միրզա Յուսուֆ Ներսեսովի վկայությամբ, Վարանդայի սահմանը երկայնությամբ ձգվում է Քիրս լեռից մինչև Այի Բալի հովիտը, լայնությամբ Խորհատ լեռից մինչև Շուշիքենդ և Խալֆալու գետակը[43]։

Այի Բալի (կամ Աղաբալի) դաշտը գտնվում է Մարտունու շրջանի հարավ-արևելյան մասում[44] և ճարտար գյուղի հացահատիկային ցանքատարածություններից է[45]։ Խալֆալին ու Շուշիքենդը Վարդաշի վտակներն են[46]։

Խամսայի մելիքությունների հարցը՝ Խաչենի մահալը «Թալիշ»-ն Սաֆիուդոն ներկայացվում է հետևյալ սահմաններով. «Նրա այն լայնությամբ տարածվում է Ղարղար (Գարգառ) գետից մինչև Ղարաբերդ, իսկ երկայնությամբ՝ Ղըլըխըղ ու Միխթուրյան լեռներից մինչև Բայաթի անտառները[47]։

Ղարաբերդը (ներկայիս Վաղարշ) գետակը հոսում է Խաչենագետի ու Թարթառի միջև ընկած տարածքով[48]։ Այն չի հասնում Կուր գետին։ Այդ գետի մասին հետևյալն ենք կարդում Ղևոնդ Ալիշանի «Երգախծ» պատմաաշխարհագրական երկում. «Ջղախից[49] հարավ

ընկած է մեկ ձորահովիտ եւ Թարթառ և Խաչեն գետերի միջև, դա Դաշտարան է, կամ Ղարաբեոն, որի արևելյան կողմում էլ համանուն գյուղն է, իսկ արևմտյան կողմում՝ Գաղանձը և Քեյանխեն[50]:

Միխիթուպյան լեռնաշղթան կազմում է Թարթառ և Հագարի գետերի ջրբաժանը և լեռների գծով միանում Ղարաբաղի լեռնաշղթային: Միխիթուպյան լեռնաշղթային է պատկանում Միխիթուպյանց լեռը, որն ունի 3411մ բարձրություն:

Ղըրխ-ղըզ (Ներկայիս Գըրխ-կըզ) լեռը (2828մ) պատկանում է Ղարաբաղի լեռնաշղթային[51]: XIX դարի աղբյուրները նրա գտնըվելու վայրի վերաբերյալ տալիս են տարբեր, իրար հակասող տվյալներ: Այսպես, ըստ Մ. Բարխուդարյանցի Ղըրխ-ղըզը կամ Գըրաբեգլոց սարը գտնվում է համանուն գյուղից հյուսիս-արևմուտք[52]:

Ըստ Ղևոնդ Ալիշանի «Գըրք-կյոզ» (Ղըրխ-ղըզ) լեռից հարավ գտնվում են Գանձասարի և Ճաղթախտի լեռները, որոնցից սկսվում է Խաչենագետը[53]: Ինչպես տեսնում ենք, երկու հեղինակները նույնանուն լեռը տեղադրում են Ղարաբաղյան լեռնաշղթայի տարբեր հատվածներում:

XIX դարի քարտեզներից մեկում Ղըրխ-ղըզ անունով նշված է Խաչենագետի ու նրա Թոլատակ վտակի միջև գտնվող լեռներից մեկը[54], մյուսում՝ այսպես է անվանված Թոլատակից մինչև Դարգարի Խաչենի վտակը ձգվող լեռնաշղթան[55]:

Ղըրխ-ղըզ լեռան այս տարբեր տեղադրումները, ինչպես նաև «Թարիխ-ե Սաֆիում» Ջրաբերդի արևմտյան սահմանում եա այդ լեռան հիշատակությունը[56] հիմք են տալիս ենթադրելու, որ XIX դարում այսպես է կոչվել Ղարաբաղյան լեռնաշղթայի հյուսիսային՝ Թարթառի Թութխու վտակի աջ կողմում սկսվող և մինչև Խաչենի գետակը ձգվող հատվածը:

Ինչպես Խաչեն մահալի արևելյան սահմանագծի նշված Բալութի անտառակը, ըստ երևույթին, գտնվելիս է եղել Փանահ խանի կառուցած Բալաթ ամրոցի մոտակայքում: Ներկայումս այդ վայրերում որևէ անտառ չկա, սակայն այն հանգամանքը, որ տեղի հողերը լեռնանտառային մարգագետնային հողեր են[57], խոսում է այն մասին, որ նախկինում այստեղ եղել են անտառներ, որոնցից մնացել են միայն ցանցառ թփուտներ ու մացառուտներ:

Մ. Ց. Ներսեսովը Խամսայի հայերը մահալը անվանում է Ջելաբերդ, որը Ջրաբերդի մահալի գործածական անվանումներից է[58]:

Ըստ Ներսեսովի, «Ջրաբերդ մահալը նույնպես Գյուլիստանի սահմաններից երկայնությամբ ձգվում է մինչև մի կողմում Բալյաթի անտառակը, մյուսում՝ Թարղան, իսկ լայնությամբ՝ Խաչենի գետից ու Կարաբերդի հովտից մինչև Թարթառ գետը»[88]:

Ջրաբերդի հարավ-արևմուտքում Բալյաթի անտառակի հիշատակումը ցույց է տալիս, որ այդ անտառային գոտին ընդարձակ է եղել՝ Բալյաթ ամրոցից ձգվելով բավական հյուսիս:

Խամսայի հինգերորդ՝ Թալիշի մահալի վերաբերյալ հետևյալն ենք կարդում «Թարիխ-ե Սաֆիում»,— «երկայնությամբ ձգվում է Մռավ լեռից և այգեշատ Գյուլիստանից՝ մինչև Կուրի ափը, իսկ լայնությամբ՝ Թարթառից մինչև Քուրան (կամ Կուրան)»[89]:

Կուրանը ներկայիս Գերան-չայ գետն է:

Այսպիսով, Ներսեսովի «Թարիխ-ե Սաֆիի» աշխատության շնորհիվ հնարավոր է դառնում հստակ պատկերացում կազմել XVIII դարի Խամսայի հայ մելիքությունների տարածքների մասին:

Բոլորովին չցանկանալով թերագնահատել Րաֆֆու «Խամսայի մելիքությունները» ուսումնասիրության պատմական արժեքը, պետք է նշենք սակայն, որ նրա տեղեկությունները մելիքությունների սահմանների վերաբերյալ ամբողջական չեն: Վիպասանը, հիմնականում իրավացիորեն, Խամսայի մահալները տեղադրում է Ղարաբաղի գետահովիտներում՝ նշելով նրանց սահմանները միայն 2 կողմերից՝ կա՛մ հյուսիսային ու հարավային, կա՛մ արևելյան ու արևմտյան: Այսպես, Րաֆֆին նշում է, որ «Գյուլիստանը կամ Թալիշի մահալը սկսվում է Քյուրակչայ գետից, Գանձակի սահմաններից և տարածվում մինչև Թարթառ գետը:

Ջրաբերդի մահալը սկսվում է Թարթառից և տարածվում մինչև Խաչենի գետը:

Խաչենը սկսվում է նույնանուն գետից և տարածվում մինչև Դիզափայտի լեռնային գոտին:

Դիզակը սկսվում է Դիզափայտի լեռներից և տարածվում մինչև Երասխ գետը»[90]:

Երկու պատմագրական երկերի («Թարիխ-ե Սաֆիի» և «Խամսայի մելիքությունների») տվյալների համեմատությունից պարզ է դառնում պարսկալեզու աշխատության հստակ մանրամասնությունը և ճշգրտությունը: Հիմնականում համընկնելով Րաֆֆու տվյալների հետ, դրանք որոշակիություն են մտցնում Ղարաբաղի հայ-

կական տարածքների հարցում, որը անտեսվել էր XIX դարի Արևել-յան Անդրկովկասի վարչական բաժանումների ժամանակ[33]: Խորհրդային իշխանության հաստատման տարիներին Ադրբեջանի ենթակայության տակ դրված ԼՂԻՄ-ը չէր ընդգրկում Ղարաբաղի հայկական տարածքները ամբողջությամբ: ԼՂԻՄ-ի սահմաններից դուրս էին մնում բավականին ընդարձակ հայկական շրջաններ, որոնք, ինչպես երևում է Ներսեսովի վկայություններից, XVIII դարում պատկանում էին Խամսայի մելիքությունների ենթակա հայաբնակ տարածքների թվին: XIX դարի կեսերին գրված այս պատմագրական երկի վկայությունները Ղարաբաղի հայկական մելիքությունների տարածքային ընդգրկումների վերաբերյալ այժմ ունեն նաև քաղաքական նշանակություն: Դրանց հիման վրա կարելի է պարզել, որ XVIII—XIX դարերի Ղարաբաղի հայաբնակ տարածքները զգալիորեն դուրս են մնացել ԼՂԻՄ-ի սահմաններից, ուստի դրանց մի մասի միացումը վերջինիս 1990-ական թվականներին պետք է համարել արդարացի և բնիկ հայկական տարածքների ազատագրում, այլ ոչ թե ագրեսիա, ինչպես այն ներկայացվում է Ադրբեջանի կողմից:

CHRISTINE KOSTIKJAN

THE ELUCIDATION OF KARABAG HISTORY IN THE XIX CENTURY HISTORIOGRAPHY

From the middle of the 19th century Turkish and Armenian authors wrote a number of historical works dedicated to Karabag's history of 18—19th centuries. The creation of these historical works was the consequence of complicated ethnopolitical situation, which existed in Karabag from the second half of the 18th century. According to their contentional peculiarities, these historical works can be divided into two groups. A special place among these historical works takes Mirza Yusuf Nersesov's «Tarikh-e Safi» (Pers. «The Truthful History»), which combines the peculiarities of both groups. This feature of Mirza Yusuf's historical work is conditioned by the exclusive biography of the author (1798—1864).

«Tarikh-e Safi» contains a lot of valuable historical information about the two Russian-Persian wars of the 19th century, five Armenian principalities («Mahall-e Khamse») and the

Moslem Khanate of Karabag. Its information concerning the history and territories of five Armenian principalities of Karabag has also an actual political significance. Owing to the evidence of Mirza Yusuf is confirmed the fact that a considerable part of Karabag, which was mainly populated by Armenians (in 18—19th centuries), remained out of the borders of the Autonomous Region of Mountaneous Karabag formed in the 20th century.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] [illegible] (տե՛ս Мирза Адигёзал-бек, Карабагнаме, Б., 1950, ст. 43):

[illegible] (տե՛ս Мирза Джамал Джеваншир, История Карабага, Б., 1959, с. 61):

[illegible]

[2] [illegible] Гаджи Сеид Абдулгамид, Родословная шекинских ханов и их потомков; Керим Ага Фатех, Краткая история Шекинского ханства, [illegible] «Из истории Шекинского ханства», Б., 1958, [illegible]; Хроника войн Джара в XVIII в., Б., 1931:

[illegible] И. Гаджинский, Жизнь Фет-Али-хана Кубинского, Сб. газ. «Кавказ» 1847; А. Бакиханов, Гюлистан-Ирам Б., 1926.

[illegible]

[3] [illegible]

[4] Колониальная политика российского царизма в Азербайджане, т. II, М. 1937, с. 25.

[5] Там же, с. 29.

[6] [illegible]

[7] Армяно-русские отношения в XVIII в., Е., 1964—1990, т. II, ч. I; т. III, ч. II; т. III; т. IV.

[8] Колониальная политика..., т. I, М., 1936, с. 9—11.

[9] Мирза Адигёзал-бек, Карабагнаме, Б., 1950, [illegible]

10 Мирза Джемал Джеваншир-Карабаги, Тарих-и Карабаг, Б., 1959.

11 *Միր Մհեմդ Ջավանշիր «Թիֆլիս-ի Ղարաբաղ», ՀՍ ԿԱ ձեռ. ֆ. Բ-518, 11632:*

12 *ՀՍ ԿԱ ձեռ. ֆոնդ, ֆ. 4701/5224:*

13 *ՀՍ ԿԱ ձեռ. ֆոնդ, ֆ. 1048/11544:*

14 *Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 228:*

15 *ՀՍ ԿԱ ԳԻ գրա. արխիվ, ֆ. 2212:*

16 *Այս հարցերի պատմագիտական արծարծի վերաբերյալ տե՛ս* А. Гулиев, И. Гасанов, И. Стригунов, Развитие исторической науки в Азербайджане в XIX в., Б., 1950.

17 *Տե՛ս* Г. Абдуллаев, Азербайджан в XVIII веке и взаимоотношения его с Россией, Б., 1965, с. 44; **Ахмед-бек Джеваншир.** О политическом существовании Карабахского ханства, Шуша 1901, с. 1.

18 *Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 7822, 7823:*

19 *Դիվանի հայ մելիքությունների պատմության վերաբերյալ նյութերը 1913 թ. հրատարակել է Հայ Ազգագրական Ընկերությունը, «Դիվան հայ մելիքությանց», պրակ Ա:*

20 *Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 2724: Այս ձեռագրի պատմագիտական քննությունը տե՛ս Երեմյան Ս. Տ., Ներսեսյանի նյութեր 1783—1785 թթ. Ղարաբաղի պատմության մասին, «Լրաբեր հաս. գիտ.», 1966, № 9, էջ 38—43:*

21 *Միրզա Յուսուֆ Ներսեսովի նկատմամբ մեծ հետաքրքրություն են ցուցաբերել ադրբեջանցի գրականագետները: Նրա ինքնությունը վերաբերյալ իր ձեռքի տակ եղած, ինչպես նաև Մատենադարանի պետական հավաքածուի արխիվային նյութերի հիման վրա հետազոտական հոդված է ապագրել Սեիդ-զադեն՝* Сеид-заде, Мирза Юсиф Нерсесов, Известия Аз. ФАН СССР, 1942, №9, с. 10—17: *Վ. Լ. Վեհինյանի ձեռ. ֆոնդ., Արխիվային բաժին,* 1942, № 9, с. 10—17, *ձեռ. Բ—195:*

22 *Միրզա Յուսուֆ Ներսեսով, «Ադրբեջանական պատմություն», էջ 3ա) Վ. Լ. Վեհինյանի ձեռ. ֆոնդ., Արխիվային բաժին, պրակ. ձեռ., էջ 195:*

23 *Միրզա Յուսուֆ Ներսեսով, նույն ձեռ., էջ 194:*

24 **А. А. Сеид-заде**, «Мирза Юсуф Нерсесов, Известия Аз. ФАН СССР, 1942, №9, с. 13.

25 *Միրզա Յուսուֆ Ներսեսովի որդին՝ Ներսեսը, եղել է Մոսկվայի համալսարանի բնագիտական ֆակուլտետի ավարտի դասախոսներից: Նրա մասին տե՛ս* Энциклопедический словарь «Изд. Брокгауза и Ефрона) т. 40, с. 909; *նաև* Энциклопедический словарь (Изд. Гранат), т. 8А, с. 149.

26 *Մաշտոցի անվան Մատենադարան, դարակ. ձեռ. 579, 239: Դրանց մասին տե՛ս Հ. Դ. Փափազյան, Մատենադարանի պարսկերեն ձեռագրերի պատմագրական արժեքը, Բանբեր Մատենադարանի, Ե. 1958, № 4, էջ 237, 232:*

27 *Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց Թեմական հոգևոր դպրոցի. Թիֆլիս, 1914, էջ 264:*

28 **Сеид-заде**, ... с. 13.

29 *Միրզա Յուսուֆ Ներսեսով, նույն ձեռ., էջ 3ա:*

[30] Там же, ... с. 14.

[31] Там же, ... с. 10.

[32] Сенд-зеле, ... с. 17

[33] Միրզա Յուսուֆ Ներսեսով, նշվ. ձեռ., (էջ 8ա)։

[34] Նույն տեղում, (էջ 8ա)։

[35] Նույն տեղում, (էջ 77բ)։

[36] Գրաբ. Լ. Փափազյանը այն կարծիքի է հայտնել, որ այդ անվանումը հատ-ւածի մեկնաբանությունների տարածքին կարող էր արված լինել Դաղստանի ու Պեր-սիայի Դանիէլ Հավեր (Բրդ. երկրին դաշտ) անվանման փոխարեն (տե՛ս Բրաս-նատն, 1984, 2, էջ 34)։

[37] Միրզա Յուսուֆ Ներսեսով, նշվ. ձեռ., (էջ 77բ)։

[38] Նույն տեղում։

[39] Карта Закавказского края до 1917 г. см. к. Маль-тапа.

[40] Карта ...Гюльтапа, также—Карта Кавказского края с показанием густот армянского населения. Б., 1908, см. к. Гюльтапинский

[41] Տե՛ս XIX դարի Անդրկովկասի քարտեզներում՝ Ջրաբերդ, Կարա-Թափա, Գյուլ-Թափա և այլն։

[42] Շ. Մկրտչյան, (Լեռնային Ղարաբաղ, Երևան, 1989, էջ 261։

[43] Միրզա Յուսուֆ Ներսեսով, նշվ. ձեռ., (էջ 78ա)։

[44] Карта 38—11—6 (Մարտունի) 1973.

[45] Շ. Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 209։

[46] Ներկայումս գյուղը կոչվում են Թաղին սար և Չաղրըրա։

[47] Միրզա Յուսուֆ Ներսեսով, նշվ. ձեռ., (էջ 78բ)։

[48] Карта Закавказского края до 1917 г.—р. Кабарту

[49] Ձորի—գավառակ, որը գտնվում է Խնձ (Մեծ) գետի հովտում, տե՛ս Ղևոնդ Ալիշան, Արցախ, Երևան, 1993, էջ 11։

[50] Ղևոնդ Ալիշան, նշվ. աշխ., էջ 78։

[51] Շ. Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 9։

[52] Մ. Բարխուդարյանց, Արցախ, Բաքու, 1894, էջ 156։

[53] Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 7։

[54] Karte von Armenien, Kurdistan und Agerbeidschen, von Dr. Heinrich Kiepert, Berlin 1858.

[55] Карта Закавказского края..., также—Карта Кавказского края..

[56] Միրզա Յուսուֆ Ներսեսով, նշվ. ձեռ., (էջ 78ա)։

[57] Советский Азербайджан, Б., 1958, с. 165, Խորհրդ. քարտեզ, с. 38

[58] Ըստ Ղ. Ալիշանի, XIX դարի վերջավորությամբ բաժանման համաձայն Ար-ցախի կեսը գտնվում էր Ջրաբերդ մեծ գավառը, որին սահմանակից էին հյուսիսից Աղդամը, արևելքից՝ Խաչենը, հարավից՝ Վարանդան, արևմուտքից՝ Զանգեզուրը (տե՛ս Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 38)։

[59] Միրզա Յուսուֆ Ներսեսով, նշվ. ձեռ., (էջ 79ա)։

[60] Նույն տեղում։

[61] Գերանդ-յուրտ գետի հյուսիսային ափին Թաղլար մահալի սահմանագծի տար-բերվում է Րաֆֆու և նրա ուսումնասիրություններում վկայած նույն տարածքի սահ-մաններից։ Նրանք Թաղլար մահալի արևելյան սահմանագիծը համարում են մին-

չէ Թյուրքահայոց գիտը (տե՛ս Րաֆֆի, Երկ. ժող., էջ 182. Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, էջ 17)։

⁴⁸ Րաֆֆի, Երկ. ժող., էջ 182։

⁴⁹ 1833 թ. Ղարաբաղի խանությունը վերածվում է գավառի, որը Շաքիի, Շիրվանի և Բաքվի գավառների հետ միավորվում էր մուսուլմանական նահանգապետությանը։ 1840 թ. վարչական բարեփոխման ժամանակ Ղարաբաղի մի մասը որպես Շուշի գավառ մտնում է Կասպիական շրջանի մեջ։ Իսկ 1846 թ. նույն՝ Շուշի գավառը մտցվում է Շամախիի նահանգի, որից հետո 1868 թ.՝ Ելիզավետպոլի նահանգի մեջ։

АНУШ ОГАНЕСЯН

К ВОПРОСУ О РЕФОРМАТОРСКОМ ДВИЖЕНИИ В ТУРЦИИ (50—70-е гг. XIX в.)

(Об отношении к реформам Ахмеда Джевдета)

О реформах эпохи танзимата существует обширная литература как у нас, так и за рубежом. Известно, что в случаях острого внутри- и внешнеполитического кризиса, охватившего в те годы Турцию, потрясавших основы империи национально-освободительных движений, угрозы вмешательства великих держав стала совершенно очевидной несостоятельность традиционных методов сохранения целостности османского государства. Поиски новых методов и форм удержания подвластных народов в составе империи занимали важное место в идеологии реформаторов периода танзимата (30—60-е гг. XIX в.). Результатом таких поисков стала выработка доктрины османизма, нашедшей воплощение в документах эпохи танзимата.

Вполне естественно, что вступление империи на путь нововведений постоянно наталкивалось на сопротивление в традиционном, веками складывавшемся османском обществе[1]. Введение преобразований в самых различных сферах жизни османского общества проходило в условиях борьбы идей, в которой старое находило сторонников не только среди оппозиционно настроенных к реформам слоев общества, но и в числе сторонников преобразований.

Достижения тюркологов в области изучения борьбы за реформы в Османской империи общеизвестны. Обстоятельный анализ взглядов и идей реформаторов как первого, так и второго периода танзимата содержат изданные недавно монографии И. Л. Фадеевой и Р. А. Сафрастяна[2]. В частности, ими подробно рассмотрена программа преобразований реформаторов второго периода танзимата Али-паши и Фуад-паши. Однако за рамками исследований авторов остался следующий, весьма интересный вопрос: как

воспринимались, а точнее понимались реформы другими представителями крупной, образованной османской бюрократии. Ведь даже среди сторонников Али и Фуада в числе крупной османской бюрократии имелись люди, придерживающиеся иных взглядов относительно характера, содержания и темпов преобразований. В этой связи представляется заслуживающим внимания анализ взглядов Ахмеда Джевдет-паши[3], видного государственного деятеля и историка эпохи танзимата, на некоторые аспекты программы преобразований, предложенной Али-пашой и Фуад-пашой[4].

Как известно, единственным средством сохранения целостности османского государства представлялось Али и Фуаду «слияние» всех подданных империи, независимо от их национальной и религиозной принадлежности[5]. Причем управление таким государством возможно лишь в том случае, как заметил Фуад-паша, если оно неизменно будет основано на следующих принципах: исламской общности, турецкой государственности, власти султана-халифа и центра государства в Стамбуле[6]. Этот постулат Фуада вполне разделяет и Ахмед Джевдет. Более того, именно султан-халиф османской династии, по мнению Джевдета, является подлинным защитником государства, и оказание ему неповиновения рассматривается им как преступление против шариата[7].

Сходство взглядов Ахмеда Джевдета и пашей-реформаторов обнаруживается и в вопросе об «особой» роли турок и турецкого языка в создаваемом обществе. «Я думаю...,—писал Али-паша,—что только турки могут служить связующим звеном или... имеют желание установить свое доминирующее положение над другими... Только это может спасти империю от вечного хаоса и гражданской войны»[8]. Так же, как и Али-паша, Джевдет считает необходимым обеспечение господствующего положения турок в империи[9], которым, как считает последний, от природы присуща якобы способности к восприятию культуры и распространению ее среди других народов[10].

Как отмечает Р. А. Сафрастян, у пашей-реформаторов нет прямого ответа на вопрос о языке будущего «единого» общества. Однако в их концепции все же наблюдается некоторая тенденция к сознательному закреплению за турецким статуса государственного языка[11]. К аргументам в доказательство этого тезиса автора добавим тот факт, что Фуад-паша был одним из составителей (вместе с Джевдет-пашой) «Грамматики османского языка»[12].

Одним из важнейших вопросов, от скорейшего решения которого зависело сохранение целостности империи, был вопрос о необходимости предоставления христианам не юридического, а фактического равноправия. Али-паша и Фуад-паша в своих высказываниях считали необходимым полное политическое уравнение христиан с мусульманами, возможность допуска их на государственную службу. Правда, в своей докладной записке с о. Крит Али-паша предупреждает, что подобный шаг чреват опасными последствиями. «Они вскоре завладеют всеми делами, так как обладают необходимыми для этого знаниями и способностями в большей степени, чем мусульмане»[14]. В свою очередь Фуад-паша заявлял: «Мы не можем допустить христиан на службу в Порту в широких масштабах, так как в этом случае христианский элемент не замедлил бы абсорбировать турецкий...»[15]. Из приведенных высказываний ясно видно, что концепция «равенства», выдвигавшаяся Али и Фуадом, носила чисто иллюзорный характер и была признана лишь, по словам самого Али, спасти тонущий «корабль государства».

Но даже подобные декларативные высказывания Али и Фуада о «равенстве» встречали резкое осуждение Джевдет-паши. В них он усматривал нарушение духа и буквы Корана[16]. Пути спасения государства он видел не в уравнении прав всех подданных империи, а в укреплении центральной власти, усилении армии[17], создании активного мусульманского (турецкого.—*А. В.*) бюрократического аппарата, преданного султану[18].

Концепция «слияния» предусматривала не только «равенство» прав всех подданных, но и «равенство» их обязанностей перед государством. В этом плане одним из путей осуществления «слияния» рассматривалась возможность допуска христиан в армию[19], а также воспитание всех подданных султана в духе преданности и любви к «общей родине»[20].

Эти моменты программы вызвали резкий протест в среде османских сановников, причем в их числе были и сторонники реформ. При обсуждении законопроекта о призыве христиан в армию в Высшем Совете Ахмед Джевдет выступил с нападками на предложение Фуада о создании смешанных военных формирований. Основу морального духа мусульманской армии, отмечал Джевдет, составляют известные догматы о «священной войне»—«джихад». Храбрость мусульманских солдат зиждется на их религиозном

чувстве, оно присуще им от рождения. Если же будет создана смешанная армия, продолжал он далее рассуждать, с привлечением в нее христианских подданных, возникнет вопрос: как должен будет командир воодушевлять своих воинов?[21] Возражая Фуаду, считавшему, что постепенно религиозное рвение может быть заменено любовью к родине (*«ватанперверлик»*), Джевдет-паша говорил: «Слово «отечество» (*«ватан»*) вызовет в умах наших солдат лишь картины, связанные с родной деревней каждого из них»[22]. Даже со временем, считал Джевдет, патриотизм не вызовет той огромной моральной силы, которой обладает ислам[23].

Оценивая в целом взгляды Джевдет-паши на важнейшие события, непосредственным свидетелем и участником которых был он сам, можно согласиться с мнением английского исследователя Г. Боуэна о том, что они (взгляды.— *А. О.*) «представляли удивительное сочетание прогрессивного и консервативного»[24]. Причем на втором моменте следует сделать особый акцент, ибо, по словам того же Боуэна, кругозор Джевдета «все же был сильно ограничен рамками традиционного мусульманского образования, полученного им в медресе»[25]. Сознавая необходимость и безотлагательность проведения реформ в империи, Джевдет соглашался с программой преобразований Али и Фуада лишь в той ее части, которая, по его мнению, не противоречила веками сложившейся мусульманской традиции.

Следует сразу оговорить, что и Али-паша и Фуад-паша не считали свои поиски путей преобразования империи противоречащими духу и букве Корана[26]. Более того, для реформаторского движения на протяжении всего XIX в. характерно желание согласовать неизбежность преобразований с предписаниями и нормами ислама. Однако надо иметь в виду, что при всей своей противоречивости, непоследовательности, реакционности программа «слияния», предполагавшая перенесение на османскую почву, хотя и в трансформированном виде, некоторых европейских институтов и идей, с неизбежностью ломала воспитывавшиеся веками традиционные представления и ценности мусульманского общества[27]. Вполне понятно поэтому, что реформы не могли встретить понимание и поддержку не только среди основной массы населения, но и среди людей образованных, высших государственных чиновников типа Джевдета. Именно слабость социальной базы не раз отмечалась нашими турковедами как одна из причин неудач танзиматских преобразований. Поэтому сравнительный анализ воззрений Али,

Фуада и Джевдет-паши позволяет, на наш взгляд, более полно оценить характер реформаторского движения.

ANOUSH HOVHANNISSYAN

ON A QUESTION OF REFORM MOVEMENT IN TURKEY (50—70's of XIX century) (THE CONSIDERATION FOR THE REFORMS OF AHMED DJEVDET)

The article is dedicated to the analyses of Ahmed Djevdet ideas on the Tanzimat reforms in Turkey. As a main source for the article author used the «Maruzat» («Reports») of a distinguished Turkish historian and statesman Ahmed Djevdet. The conflict of ideas between Ahmed Djevdet and two leaders of Tanzimat reforms—Ali and Fuad pashas demonstrates the narrowness of social base of reforms among the high state officials of empire and, in other aspect explains the reasons of their failure. The analyses of «Maruzat» can also help to have a more complete picture of Tanzimat reforms in Turkey in 50—70's of the 19th century.

ПРИМЕЧАНИЯ

[1] См., например, **А. Д. Новичев**. Борьба между реформаторами и консерваторами в период танзимата (1830—1853).—Тюркологический сборник, 1973, М., 1975, с. 82—108; **E. Z. Karal**. Obstacles rencontrés pendant le mouvement de modernisation de l'Empire Ottoman.—«Économie et société dans l'Empire Ottoman (Fin du XVIIIe—Début du XXe siècle), Paris, 1983, pp. 11—12.

[2] **И. Л. Фадеева**. Официальные доктрины в идеологии и политике Османской империи (османизм-панисламизм). М., 1985; **Р. А. Сафрастян**. Доктрина османизма в политической жизни Османской империи. Ереван, 1985. Обе эти монографии, несмотря на некоторые различия в оценках и выводах их авторов, вносят определенный вклад в изучение проблем истории общественно-политической мысли Турции в эпоху реформ.

[3] Ахмед Джевдет-паша (1825—1895) был современником султанов Абдул Меджида I, Абдул Азиза I, Мурада V и Абдул Хамида II. Политическая карьера Джевдета-паши началась в канцелярии Мустафы Решид-паши, где он познакомился с Али Фуадом. Именно там Джев-

дет окунулся в гущу проблем танзимата. Первым официальным назначением Джевдета был пост заведующего Школы учителей при Комитете просвещения. Став одним из членов созданного в 1851 г. «Комитета знаний», Джевдет написал первые три тома своей «Истории», за что получил звание официального историографа (вака-и нювис). Ахмед Джевдет состоял в комиссии по проведению реформ в Румелии и Анатолии. Впоследствии он неоднократно занимал пост вали, был министром юстиции, министром просвещения. Джевдет был одним из участников судебного процесса над Мидхат-пашой.

Ахмед Джевдет является составителем «Грамматики османского языка», автором многотомной «Истории Османского государства», основоположником жанра мемуарной литературы в турецкой историографии. О нем см., например: **Ebul'ula Mardin.** Medeni hukuk cephesinden Ahmet Cevdet Paşa (1825—1895). Ist., 1946.

[4] Анализ взглядов Джевдета проводится с привлечением материалов, практически не использованных в отечественной литературе—это его записки о событиях периода 1839—1876 гг., составленные по поручению султана Абдул Хамида II. Они были опубликованы в журнале «Тарих-и османи энджюмен-и меджмуасы» (в дальнейшем—TOEM) под заглавием «Марузат» («Доклады», «Рапорты»). См.: **Ahmet Cevdet Paşa.** Maruzat.—«Tarih-i Osmani Encümeni Mecmuası», № 44, 78—80, 82, 84, 87—89, 91—93. (араб. шрифт).

[5] О программе «слияния» см.: **Р. А. Сафрастян.** Доктрина османизма... с. 33—47.

[6] **Cevdet Paşa.** Tezakir. № 10, Ank., 1953, s. 85.

[7] В полемике о законности прав халифов османской династии на религиозную власть в мусульманском мире, разгоревшейся в конце XIX в., Джевдет выступил в поддержку султана Абдул Хамида II. См.: **Cevdet Paşa.** Tezakir. № 12, Ank., 1953, s. 148—149.

[8] Цит. по: **Р. А. Сафрастян.** Доктрина османизма... с. 39.

[9] См: **Cevdet Paşa.** Maruzat.—TOEM, № 44, Ist., 1334, s. 103.

[10] См: **Tarih-i Cevdet.** Ist., 1309 (1893). bas. 2, c. 1, s. 14, (араб. шрифт). Любопытно, что в предисловии к тому, где Джевдет пишет об истории ислама, он отмечает заслуги двух «великих миллетов»—арабов и турок. Т. е. в понятие «миллет» он вкрадывал не только религиозный, но и этнический смысл.

[11] См.: **Р. А. Сафрастян.** Доктрина османизма... с. 38.

[12] **A. Cevdet, M. Fuat.** Kavaid-i Osmaniye, Ist., 1268.
О ней подробнее см.: **D. Kushner.** The rise of Turkish nationalism (1876—1908). London, 1977, pp. 57, 59, 76.

[13] Юридическое уравнение прав мусульман и христиан перед законом содержалось в статьях провозглашенного в 1856 г. хатт-и хумаюна.

[14] Цит. по: **Н. Л. Фадеева.** Официальные доктрины... с. 88.

[15] Цит. по.: **Р. А. Сафрастян.** Доктрина османизма... с. 40.

[16] **Cevdet Paşa.** *Maruzat.*—TOEM, № 87, Ist., 1341, s. 269—270.

[17] **Cevdet Paşa.** *Maruzat.*—TOEM, № 44, Ist., 1334, s. 103.

[18] Там же.

[19] В довольно общих выражениях вопрос о воинской службе немусульман в армии был сформулирован еще в хатт-е 1856 г. Позднее, в 1870—1871 гг. появились более конкретные проекты и предложения по этому вопросу. Все эти проекты, однако, не получили практического решения в эпоху реформ. Об этом см.: **И. Л. Фадеева.** Официальные доктрины... с. 71—72.

[20] Интерес представляет эволюция понятия «ватан» («отечество»). Еще в 1790 г. Али-эфенди, сотрудник турецкого посольства во Франции, описывая мероприятия французского правительства по заботе об инвалидах войны, рассказывал о человеке, пострадавшем за родину. Добросовестный переводчик и не догадывался, что он впервые вводит понятие «отечество», которое в его политическом значении стало осознаваться турецкой общественной мыслью лишь в середине XIX в. См.: **Ahmed Refik.** Moralı El-Seyyid Ali Efendinin Sefaretnamesi.—TOEM, № 20-23, Ist., 1332, s. 72. Первым официальным документом, в котором употреблялось выражение «любовь к отечеству» («ватан мухаббети»), был хатт-и хумаюн 1856 г. Воспитанию «всех османских подданных» в духе единства и верности правительству большое значение придавали реформаторы. Впоследствии в процессе генезиса идей Али и Фуада о «слиянии» новыми османами были сформированы концепции «османского отечества» и «османского патриотизма». Об этом см.: **S. Mardin.** The genesis of Young Ottoman thought. Princeton, New Jersey, 1962.

[21] **Cevdet Paşa.** *Maruzat.*—TOEM, № 87, Ist., 1341, s. 273.

[22] Там же.

[23] Там же.

[24] **H. Bowen.** Ahmad Djewdet Pasha.—EI, vol. I, London, 1956, p. 286.

[25] Там же.

[26] «... По нашей вере ислам есть полное... выражение всех истин и всех знаний.., исламу принадлежит всегда всякое полезное открытие, все новое в сфере знаний, от какого бы источника оно ни происходило...—писал Фуад-паша.—Таким образом, ничто не препятствует нам заимствовать законы и новые средства, придуманные в Европе...» (цит. по: **И. Л. Фадеева.** Официальные доктрины... с. 93). Известно также выражение Фуада о том, что «ислам на протяжении столетий был прекрасным инструментом прогресса; сегодня ислам представляет часы, которые отстают и которые необходимо завести» (цит. по: **Р. А. Сафрастян.** Доктрина... с. 39—40).

[27] Например, Мустафа Решид-паша считал, что хатт 1856 г. ущемлял интересы мусульман, а «новые османы» называли его «фирманом о преимуществах» для христиан (**Cevdet Paşa.** Tezâkir, № 10, Ank., 1953, s. 73).

ՏԻԳՐԱՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

1071—1081 ԹԹ. ԹՅՈՒՐՔԵՐԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄԸ ՓՈՔՐ ԱՍԻԱ ԵՎ ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ՆԵՐՔԻՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թյուրքերի զանգվածային ներթափանցումը Փոքր Ասիա սկսվեց Մանազկերտի ճակատամարտից հետո, երբ խույս փլուզված էր բյուզանդական ռազմական, ինչպես նաև սահմանապահ համակարգը։ Օգտվելով բյուզանդական սահմանների թույլ պաշտպանվածությունից, Իրանի տարածքում թափառող օղուզ-թուրքմենական հրոսակները հետզհետե սկսեցին ներխուժել կայսրության հողեր։ Աղբյուրները վկայում են, որ Մանազկերտի ճակատամարտին հաջորդած տասը տարիների ընթացքում՝ մինչև 1081 թ., երբ գահ բարձրացած Կոմնենոսները սկսեցին քայլեր ձեռնարկել Փոքր Ասիայի վերանվաճման ուղղությամբ, սելջուկյան իշխանությունների կողմից չվերահսկվող այդ հրոսակները՝ զանազան սելջուկ և թուրքմեն ամիրաների գլխավորությամբ, արդեն հաստատվել էին Փոքր Ասիայի ոչ միայն ծայրամասային, այլև բազմաթիվ ներքին տարածքներում[1]։

Եթե մինչև 1071 թ. թյուրքական զանազան հրոսակախմբերը սելջուկյան պետությանը սահմանամերձ բյուզանդական տարածքները ասպատակման և թալանի նպատակներով, որպես կանոն, միշտ վերադառնում էին խալիֆայություն, ապա Մանազկերտից հետո նրանք ոչ միայն հիմնավորապես հաստատվեցին Փոքր Ասիայում, այլև այդ հողերի վրա ձևավորեցին մի շարք պետական կազմավորումներ։

Այսպես Հայաստանի և Բյուզանդիայի հողերի վրա ձևավորվեցին Ռումի Սելջուկյանների, Արտուխյանների, Դանիշմենդյանների և այլ թուրքմենական ամիրայությունները։

Փոքր Ասիայում թյուրքերի սկզբնական ներթափանցման (մինչև 1081 թ.), բյուզանդական իշխանությունների հետ նրանց շփումների և պետական միավորների առաջացման վերաբերյալ պատմական աղբյուրների տեղեկությունները սակավ են։

Կարելի է ասել, որ մուսուլման հեղինակներ Իմադ ադ-Դին ալ-Իսֆահանին (պահպանվել է նրա աշխատության համառոտ տարբերակը ալ-Բունդարիի «Զուբդաթ ան-Նուսրա վա նուխբաթ ալ-ուսրա» անվամբ, XII դ.), Իբն ալ-Ասիրը («Ալ-Քամիլ ֆի աթ-թարիխ» XIII դ.), Սադր ադ-Դին ալ-Հուսայնին («Ախբար ադ-դաուլա աս-սելջուկիյյա», XII դ.), Սիբտ իբն ալ-Ջաուզին («Միր՛աթ ազ-զաման», XIII դ.), ինչպես նաև ասորական պատմագիրներ Աբուլֆարաջը և Միքայել Ասորին, որոնք քաջատեղյակ են XI դարի 80-ականներից հետո Փոքր Ասիայում Ռումի սելջուկյանների և այլ թյուրքմեն ամիրաների ծավալած գործողությունների մասին, մեզ ոչինչ չեն հաղորդում այդ տարածաշրջանում 1071—1081 թթ. ժամանակահատվածում վերջիններիս հաստատման գործընթացի մասին։ Ոչինչ չեն տալիս նաև, այսպես կոչված, բուն սելջուկյան պատմագրական աղբյուրները, անգամ դրանցից ամենահինը՝ Իբն Բիբիի «Սելջուկնամեն»։

Այս առումով մուսուլմանական աղբյուրների բացը որոշ չափով լրացնում են ժամանակի բյուզանդական հեղինակների՝ Միքայել Ատտալիատեսի, Հովհաննես Սկիլիցեսի Շարունակողի, Նիկեֆոր Բրիեննիոսի, Աննա Կոմնենայի, ինչպես նաև XII դ. հայ հեղինակ Մատթեոս Ուռհայեցու ընձեռած տեղեկությունները։

XI դարում Փոքր Ասիա թյուրքերի ներթափանցման և այդ շրջանի ժամանակագրությանը վերաբերող տարբեր ասպեկտներ քննության են առնվել Ժ. Լորանի, Կլ. Կաենի, Ս. Վրիոնիսի, Ի. Քաֆեսօղլուի, Ս. Բոռնազյանի և ուրիշների կողմից[2]։

Դեռ դարասկզբին Ժ. Լորանը իր աշխատություններում բյուզանդագիտության ծիրերից քննության է առել Ռումի սելջուկյանների պետության կազմավորման գործընթացը և նրա հարաբերությունները կայսրության հետ։

Պատմական աղբյուրների մանրամասն հետազոտություններ կատարելով՝ ֆրանսիացի անվանի արևելագետ Կ. Կաենը մի շարք արժեքավոր ուսումնասիրություններ ունի Փոքր Ասիա և Մերձավոր Արևելք թյուրքերի ներթափանցման սկզբնական փուլի ու սելջուկների պատմության զանազան խնդիրների շուրջ[3]։

1971 թ. լույս տեսավ ամերիկացի գիտնական Սպերոս Վրիոնիսի՝ Փոքր Ասիայում միջնադարյան հելլենիզմի անկման և աստիճանական թյուրքացման վերաբերյալ ծավալուն աշխատությունը, որը, ճիշտ է, հարուստ նյութ է պարունակում, սակայն շարադրված է հախուռն կերպով, և հեղինակը երբեմն հանգում է անհիմն եզրակացությունների։ Հատկապես վիճելի են Բյուզանդական կայսրության փլուզման գործընթացում հայերի դերի մասին նրա եզրահանգումները[4]։

Փոքր Ասիայի նվաճման գործընթացը, բնականաբար, եղել է նաև թուրք գիտնականների ուշադրության կենտրոնում։ Արևելագիտության մեջ քաջ հայտնի են Ի. Քաֆեսօղլուի, Մ. Յինանչի, Մ. Քոյմենի, Ֆ. Սումերի[5] և այլոց աշխատությունները, որոնցում սակայն աչքի է ընկնում թյուրք հրոսակների հերոսացման միտումը և իրողությունների կամայական մեկնաբանությունը։ Հայ գիտնականներից Փոքր Ասիա օղուզ-թուրքմենական ներհոսքին, Հայաստանում սելջուկյանների քաղաքականությանը անդրադարձել է Սարգիս Բոռնազյանը[6]։

Ի մի բերելով աղբյուրների տեղեկությունները և քննության առնելով վերոհիշյալ աշխատությունները, կարող ենք եզրակացնել, որ Մանազկերտի ճակատամարտից հետո մինչև Կոմնենոսների դինաստիայի իշխանության գալը, առկա էին դեպի Փոքր Ասիա թյուրքական ներթափանցմանը նպաստող մի շարք կարևոր գործոններ։ Առաջինը, ինչպես արդեն նշվեց, բյուզանդական սահմանի թույլ պաշտպանվածությունն էր, որի կարևոր պատճառներից էր Հայաստանի հանդեպ XI դարում կայսրության վարած զավթողական քաղաքականությունը և հայ բնակչության պարտադրած տեղափոխումները դեպի Կապադովկիա ու Կիլիկիա, որի արդյունքում կայսրության արևելյան սահմանները գրեթե անպաշտպան մնացին[7]։

XI դարում Բյուզանդիան շարունակեց անկախ հայկական պետությունների վերացման քաղաքականությունը, որի արդյունքում կայսրությունը հետզհետե յուրացրեց ամբողջ Հայաստանը։ Այսպես, 1021 թ. Բյուզանդիային միացվեց Վասպուրականը, ընդ որում վասպուրականահայության մի ստվար զանգված գաղթեց դեպի Սեբաստիայի կողմերը[8]։ 1045 թ. հույները զավթեցին Բագրատունյաց թագավորությունը՝ Անի մայրաքաղաքով։ Բյուզանդիա-

չին միացված տարածքներում բնակվող հայության մի զգալի մասը, այդ թվում ավագանին և ռազմունակ տարրը, տեղափոխվում էր դեպի Կիլիկիայի կողմերը: Կայսրությանը միացված հայկական նահանգներում վերացվում էր դարերով ստեղծված հայկական սահմանների պաշտպանական համակարգը, որը փոխարինվում էր ոչ արդյունավետ բյուզանդականով:

Արտաքին վտանգի առջև կայսրության դիմադրելու կարողությունը կտրուկ նվազեցրեց նաև Կոնստանտին Մոնոմախի օրոք դրամական խնայողության նպատակով իրականացված Իբերիա բանակաթեմի հայ-վրացական 50 հազարանոց բանակի կազմալուծումը[5]:

Մյուս կարևոր գործոններից են անկարող կայսրերի և կառավարությունների առկայությունը, բյուզանդական մարտունակ բանակի բացակայությունը, որի հիմնական պատճառը ավանդական բանակաթեմային համակարգի և համապատասխանաբար բանակի հիմք հանդիսացող զինվորական ստրատիոտական խավի քայքայումն էր: Արդյունքում կտրուկ աճում էր մեծաքանակ օտարազգի վարձկաններով համալրված տագմային (ոչ թե բանակաթեմներում, այլ մայրաքաղաքում կայանավորված) զորամիավորումների նշանակությունը, որոնց նվիրվածությունը կայսրության շահերին խիստ պայմանական էր, իսկ մարտունակությունը բարձր չէր:

Հաջորդ կարևորագույն գործոններից էր ներքաղաքական լափազանց անկայուն իրադրությունը, այն է՝ գահին տիրանալու համար կենտրոնական իշխանության դեմ բյուզանդական ավագանու բարձրացրած անվերջանալի ապստամբությունները, որոնցում ընդգրկված առանց այն էլ սակավաթիվ բյուզանդական զորամասերը էլ ավելի էին ջլատվում: Ոչ պակաս կարևոր գործոններից մեկն էլ այդ ներքաղաքական պատերազմներում իբրև վարձու զինվորական ուժ կայսրության տարբեր վայրերում հայտնված թուրքմենական հրոսակների օգտագործման պրակտիկան էր, որ հետզհետե ավելի մեծ մասշտաբներ էր ստանում:

Հոդվածում փորձ է արվում ժամանակի աղբյուրների լույսի ներքո պարզաբանել այս վերջին գործոնի դերը փոքրասիական տարածքներում 1071—1081 թթ. օղուզ-թուրքմենների հաստատման գործում:

[18] Летом 976 г. Варда Склир поднял мятеж и к нему стекались представители военной знати. Его поддержали армянские феодалы и мусульмане пограничных районов Византии. После поражения в марте 979 г. Варда Склир убежал и оказался в Багдаде (см. История Византии, т. II, с. 218).

[19] **Абу Шуджа**. Указ. работа, с. 36.

[20] Там же, с. 39.

[21] Там же.

[22] Курдский историк Абд ар-Ракиб Юсуф в связи с этим выдвигает мысль о том, что эмират Бата был совершенно независимым (см. его указ. работу, с. 63).

[23] **Ибн ал-асир**, VII, с. 121, **Ибн Халдун**, IV, с. 252...

[24] История Византии, т. II, с. 218.

[25] Ան, *Հայոց պատմություն, հ. II, Երևան, 1967, էջ 602.*

[26] **Yahia Ibn Said Antiochensis**. Annales.—«Corpus Scriptorum Christianorum Orientalium Turantibus-Scriptores Arabici» ser. III, t. VII, Paris, 1909, p. 167. По этому поводу аналогичное сведение упоминает также и армянский историк Асогик (см. его указ. работа, с. 247).

[27] Ան, *Հայոց պատմություն, հ. II, էջ 602.*

[28] **Ибн ал-Азрак ал-Фарики**. Указ. работа, с. 60.

[29] После убийства Бата князь Тайка-Давид Курапагат (Куропалат) немедленно напал на город Манцкерт и овладел им. Затем из города он выгнал мусульман и на их место поселил армян и грузин (см. Ասողիկ, էջ 258; Ս. Տեր-Ղևոնդյան, *Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 156; Ան, Հայոց պատմություն, հ. II, էջ 607).*

[30] **Ибн ал-Азрак ал-Фарики**, с. 61.

[31] Там же.

[32] **Ибн ал-Ибри**. Тарих мухтасар ад-дувал, Бейрут, 1958, с. 173; **Ибн ал-Асир**, VII, с. 144; **Ибн ал-Азрак**, с. 86...

[33] Там же.

[34] Там же.

[35] История Византии, II, с. 224.

[36] **Ибн ал-Азрак**, с. 84; см. также Ибн ал-Асир, VII, с. 144, **Ибн ал-Ибри**, с. 173.

[37] Речь идет о Давиде Курапагате (960—1000)—князе Тайка, кото-

рый скончался в 1000 г. См.: *Հայ ժողովրդի պատմություն, III, Երևան, 1976, էջ 111.*

38 **Yahia Ibn Said.** Указ. работа, с. 184. См. его же рукопись, рукописный фонд С.-Петербургского отделения ИВ АН РФ, И 1708, л. 83б.

39 Цит. *Հայոց պատմություն, հ. II, էջ 619.*

40 Об этом см.: **Yahia Ibn Said**, с. 210.

41 В начальный период деятельности Наср ад-Даула его противники сделали попытку сдать город *Маййафарикин* византийцам, но, видимо, на это не откликнулся император. См.: **Ибн ал-Азрак**, с. 96.

42 Там же, с. 108—110. О нем см. также: **Ибн ал-Джаузи**, ал-Мунтазам фи ат-тарих, VIII, ад-Дакин-Хайдарабад, 1359, с. 222—223; **Абу ал-Фида**, Тарих, III, с. 186; **ал-Ханбали**. Шазарат аз-захаб, III, ал-Кахира, 1350, с. 453; **Ибн Касир**, ал-Бидайа уан-нихайа фи ат-тарих, XII, 1932, с. 87; **Ибн Халликан**. Уафайат ал-айан, I, Париж, 1838, с. 83—84.

43 История Византии, II, с. 225.

44 **Ибн ал-Асир**, VII, с. 322—323.

45 Там же, с. 353.

46 Там же, VIII, с. 9.

47 Там же; см. также: **Ибн ал-Уарди**, с. 427.

48 **Yahia Ibn Said**, p. 270.

49 **Ибн ал-Асир**, VIII, с. 11.

50 Там же, с. 46.

51 Там же.

52 **К. Э. Босворт.** Указ. работа, с. 88.

ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆ

ՀԻՆ ԱՌԱՋԱՎՈՐ ԱՍԻԱՅԻ ԵՎ ԷԳԵՅԱՆ ԾՈՎԻ ԱՎԱԶԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱՑՄԱՆ ՇՈՒՐՋ

Հին Առաջավոր Ասիայի պատմության ուսումնասիրության ընթացքում անհնար է շրջանցել քաղաքակրթությունների զարգացման ընթացքում պարզորոշ գծագրվող մի երևույթ, որը լավ վկայված է գրեթե բոլոր տարածաշրջաններում։ Խոսքը պետությունների կենսագործունեության վերընթաց և վայրընթաց զարգացման փուլերի կանոնավոր հերթագայության մասին է, որը հարմեն ընդգրկում է ոչ թե մի կոնկրետ տարածաշրջան, այլ ողջ Առաջավոր Ասիան և Էգեյդան։ Այս համաժամանակյա երևույթների կանոնավոր բնույթը համապատասխան բացատրության կարիք ունի։ Ներկա ուսումնասիրության շրջանակներում զարգացման այդ ցիկլերի համակողմանի ուսումնասիրությունը հնարավոր չէ, ուստի սահմանափակվենք միայն դրանց ընթացքում նկատվող ուղեկցող երևույթների առանձնացմամբ։ Ահա վերոհիշյալ ցիկլերի ընդհանուր բնութագիրը՝ դրանցից յուրաքանչյուրի ընթացքում դրավոր և հնագիտական աղբյուրներով վկայված իրադարձությունների համառոտ շարադրանքով[1]։

1. XXX/XXVIII—XXIII/XXII դդ. (վաղ բրոնզեդար)

Միջագետք: *Շումերական քաղաք-պետությունների կազմավորում և վերընթաց զարգացում։ Փուլի վերջում՝ Աքքադի պետության կազմավորում, նրա վերածում համամիջագետքյան տերության։*

Եգիպտոս: *Համաեգիպտական պետության կազմավորում (Վաղ թագավորություն) և Հին թագավորություն, նշանակալից առաջընթաց կենսագործունեության բոլոր բնագավառներում։*

Փոքր Ասիա: *Զգալի թվով միջակութային կենտրոնների կենսա-*

զորեղության մասշտաբների ընդլայնում (Տրոյա I—II, Բեյջեսուլթան 19—13, Ալաջահյույուկ 5—8, Ալիշար I և այլն), վաղ պետական կազմավորումների առաջացում։

Էգեիդա։ Վաղ հելլադյան և վաղ մինոսյան փուլը. կիկլադյան քաղաքակրթության վերընթաց զարգացումը, բարձրակետը՝ 2500—2300 թթ.։

Հայկական լեռնաշխարհ և Անդրկովկաս։ Կուր-Արաքսյան (կամ «Վաղ Անդրկովկասյան») մշակույթի Հասուն զարգացման փուլը։

Ամենուրեք նկատվում է պետականության ձևավորում և կայունացում, նյութական մշակույթի որակական մեծ աճ նախորդ փուլի համեմատ։

2. XXIII/XXII դդ. (անցում վաղ բրոնզեդարից միջին բրոնզեդար)

Միջագետք։ Աքքադի պետության անկումը (մոտավորապես 2200 թ.), կուտիների արշավանքները և նրանց տիրապետությունը։

Եգիպտոս։ Հին թագավորության անկումը (XXIII դ. կեսեր), պետության տրոհում մի քանի տասնյակ ինքնուրույն իշխանությունների, անկայուն ներքաղաքական և տնտեսական իրավիճակ մինչև XXI դ. կեսերը (առաջին անցումային շրջան)։

Փոքր Ասիա։ Տրոյա II, Բեյջեսուլթան 13 և այլ քաղաքային կենտրոնների ավերում մոտավորապես 2300 թ., նյութական մշակույթի համընդհանուր անկում արևմտյան և հարավային շրջաններում[2]։

Էգեիդա։ «Վաղ բրոնզեդար IIIա» փուլի բնակավայրերի մեծ մասի ավերում 2300 թ. մոտերքում, նոր էթնիկական տարրի և մշակույթի ներթափանցում։

Հայկական լեռնաշխարհ և Անդրկովկաս։ Կուր-Արաքսյան մշակույթի անկում։

3. XXI/XX դդ.—XIX/XVIII դդ. (միջին բրոնզեդար)

Միջագետք։ Ուրի III դինաստիան (XXII դ. վերջ—XXI դ.), շուրջ մեկդարյա կայունություն, Ուրի անկում ամորհական ցեղերի միգրացիայի հետևանքով (XXI դ. վերջ), ամորհական իշխանությունների կազմավորում (XX—XIX դդ.), Աշշուրի, Բաբելոնիայի և այլ պետականությունների կայունացում և հզորացում։

Եգիպտոս: *Միջին թագավորություն (XXI—XVIII դդ.), քաղաքական, տնտեսական և մշակութային վերելք:*

Փոքր Ասիա: *Քաղաքական կայունացում (XXI—XX դդ.), որն էլ ավելի է ամրապնդվում շնորհիվ Աշշուրի առևտրական գաղութների գործունեության (XX—XVIII դդ.):*

Էգեիդա: *Միջին հելլադյան և միջին մինոսյան մշակույթի փուլ, որ բնութագրվում է տնտեսական մեծ առաջընթացով, հատկապես կղզիներում. մինոսյան թալասոկրատիաներ:*

Ընդհանրապես այս փուլի համար տարբեր տարածաշրջանների միջև համաժամանակյա ցիկլերի առանձնացումը բավական բարդ է: Պարզորոշ նկատվում է կայունացում-ապակայունացում ցիկլի կարճատևություն, չափազանց սահուն է համապատասխան հնագիտական նյութը մի շարք տարածաշրջաններից (Փոքր Ասիա, Սիրիա, Հայկական լեռնաշխարհ): Խիստ մեծ չորոշակիություն կա վաղբրոնզեդարյան փուլի համեմատ: Այդ իսկ պատճառով, տվյալ փուլից զգալի կայունացման հաջորդ՝ ուշբրոնզեդարյան փուլ անցման ընթացքում առկա նշանաժամային դարաշրջանի առանձնացումը միշտ չէ որ հստակ գծագրվում է տարբեր տարածաշրջաններում:

4. XVII—XVI դդ. (անցում միջին բրոնզեդարից ուշ բրոնզեդար)

Միջագետք: *Բաբելոնիայի քաղաքական վայրէջքը զարգացում, Աշշուրի արտաքին առևտրի անկում (XVIII դարի վերջ), խուռիների և կասսիտների զանգվածային ներթափանցում և բնակեցում Հյուսիսային և Կենտրոնական Միջագետքում, Համմուրաբիի դինաստիայի անկում:*

Եգիպտոս: *Միջին թագավորության թուլացում և տրոհում (XVIII դարի երկրորդ կես), հիքսոսյան արշավանքը և նրանց տիրապետությունը Եգիպտոսում (XVII դարի սկիզբ—XVI դարի սկիզբ) (Երկրորդ անցումային շրջան):*

Փոքր Ասիա: *Տարբեր քաղաքական միավորների միջև ծավալված հակամարտություն, Կուսարի դինաստիայի անկում, քաղաքական անկայունություն:*

Էգեիդա: *Միջին հելլադյան մշակույթի անկում, էթնիկական նոր տարրի (ենթադրաբար՝ արիական հույներ) ներթափանցում մայրցամաքային Հունաստան:*

Հայկական լեռնաշխարհ և Անդրկովկաս: *Մշակութային մասնատվածության աստիճանական հաղթահարում, Լեռնաշխարհի արևմուտքում մի շարք քաղաքական միավորների ձևավորում (Հայասա, Իսուվա, Ալզի):*

5. XVII—XIII դդ. (ուշ բրոնզեդար)

Միջագետք: *Միջին բաբելոնյան և միջին ասորեստանյան փուլերը. Միտաննիի կազմավորումը և հզորացումը: Փուլի հիմնական բնորոշ գծերը՝ կայսերական պետությունների ձևավորում, աննախընթաց տնտեսական վերելք, ակտիվ արտաքին քաղաքականություն, այսինքն, համընդհանուր վերընթաց զարգացում:*

Եգիպտոս: *Նոր թագավորության XVIII և XIX դինաստիաներ: Եգիպտական պետականության և քաղաքակրթության համընդհանուր վերելք:*

Փոքր Ասիա: *Խեթական պետության հզորացումը, նրա վերածումը աշխարհակալ տերության:*

Էգեիդա: *Ուշհելլադյան մշակույթը, միկենյան քաղաքակրթության ձևավորումը և վերընթաց զարգացումը, նրա քաղաքական և մշակութային էքսպանսիան Էգեյան ծովի ավազանում:*

Հայկական լեռնաշխարհ և Անդրկովկաս: *Թռեղքյան մշակույթի զարգացում:*

6. XII—XI դդ. (անցում ուշ բրոնզեդարից վաղ երկաթեդար)

Միջագետք: *Միջին ասորեստանյան պետության և Բաբելոնիայի համընդհանուր քաղաքական և տնտեսական վայրընթաց զարգացում: Բաբելոնիայի կասսիտական դինաստիայի անկում և քաղդեական դինաստիայի հաստատում: Ասորեստանի արտաքին քաղաքական ակտիվության աննախընթաց նվազում:*

Եգիպտոս: *Նոր թագավորության անկում, երկրի մասնատում մի շարք մանր թագավորությունների (երրորդ անցումային շրջան):*

Փոքր Ասիա: *Խեթական տերության տրոհում, խեթերից կախյալ փոքրասիական մանր քաղաքական կազմավորումների անկում: Կենտրոնական Փոքր Ասիայի բնակչության զանգվածային տեղաշարժ Թերակղզու հարավ և Հյուսիսային Սիրիա:*

Էգեիդա: *Միկենյան քաղաքակրթության աստիճանական ան-*

կում, բնակչության զանգվածային արտագաղթ դեպի Էգեյան և Միջերկրական ծովերի կղզիներ, Փոքր Ասիայի և սիրիա-պաղեստինյան տարածաշրջանի ծովափնյա շրջաններ։ Միկենյան մշակույթի գրեթե լիակատար դեգրադացիա։

Հայկական լեռնաշխարհ։ Լեռնաշխարհի արևմուտքում և հարավ-արևմուտքում քաղաքական միավորների անկում (Ծուփա), բնակչության շարժունակության աճ, քաղաքային մշակույթի անկում։

Այսպիսով, ինչպես երևում է վերը բերված փուլերով ներկայացված իրավիճակների համեմատությունից, մ.թ.ա. III հազարամյակի սկզբներից մինչև մ.թ.ա. XII դ. ընկած ժամանակահատվածը որոշակիորեն բաժանվում է վեց փուլերի, որոնք պայմանականորեն կարելի է բնութագրել որպես՝ 1) կայունացում և վերընթաց զարգացում (1, 3, 5) և 2) ապակայունացում և վայրընթաց զարգացում (2, 4, 6)։ Իհարկե, ասվածը չի նշանակում, որ առաջին փուլերի ընթացքում չեն եղել քիչ թե շատ տևական և ընդգրկուն բացասական երևույթներ։ Այդպիսիք առկա են, սակայն դրանք բնութագրական չեն եղել տվյալ զարգացումների համար։

Վերոհիշյալ երկու ճգնաժամային փուլերի ընթացքում պարզորոշ նկատվող ուղեկցող երևույթները կարելի է ամբողջացնել հետևյալ կերպ.

1) Ճգնաժամից քիչ առաջ քաղաքական, տնտեսական և մշակութային վերելք ապրող պետությունները կարճ ժամանակում վերածվում են անկայուն, ներսից արագ քայքայվող քաղաքական միավորների։ Օրինակ, Աքքադը Նարամսինի հաղթական պատերազմներից անմիջապես հետո, Բաբելոնիան Համմուրապիի որդի Սամսուիլունայի օրոք, Եգիպտոսը XIII դինաստիայի վերջում և այլն։

2) Կենտրոնախույս ուժերի մեծ ակտիվություն, կենտրոնական իշխանության ձևական գերիշխանություն։

3) Մեծ պետությունների հարևանությամբ բնակվող ժողովուրդների և ցեղերի շարժունակության աննախադեպ աճ, որն արտահայտվում է խոշոր էթնիկական տեղաշարժերով։

4) Ճգնաժամի հետևանքը՝ երկրի նվաճում հարևան ժողովրդի կողմից. Աքքադը՝ կուտիների, Եգիպտոսը՝ հիքսոսների, Բաբելոնիան՝ կասսիտների, Հյուսիսային Սիրիան և Հյուսիսային Միջագետքը՝ խուռիների։

Առաջավորասիական և էգեյան քաղաքակրթությունների պատ-

մության նշված ճգնաժամային փուլերի գնահատման հարցում մասնագետների կողմից առաջարկվել են տարբեր մեկնաբանություններ, սակայն, որքան հայտնի է, դրանք գոյություն չունի որևէ սպառիչ հիմնավորում, որը կբացատրի, թե ինչու են Մերձավոր Արևելքի և Էգեիդայի տարբեր շրջաններում, գրեթե միաժամանակ, մեկ-երկու դարի ընթացքում տեղի ունեցել վերոհիշյալ երևույթները։ Օրինակ, ինչու է ներքաղաքական ճգնաժամը համընկնում հարևան ժողովրդի ագրեսիվության աճի հետ, ինչու հենց ճգնաժամային գարաշրջանում է աճում ժողովուրդների շարժունակությունը։ Իհարկե, այս կամ այն քաղաքական միավորի անկումը հարևան միավորի կամ ցեղերի հարձակման հետևանքով ամենևին չի կարելի ներկայացնել որպես ճգնաժամ։ Սակայն, երբ հարձակվողի նպատակը ոչ թե միայն որևէ տարածքի հպատակեցումն է, այլ նաև դրա զանգվածային վերաբնակեցումը, որը հանգեցնում է դրա բնակիչների թեկուզ մասնակի ապաբնակեցման, ապա այստեղ արդեն անհրաժեշտ է խոր պատճառներ փնտրել, քան սովորական պատերազմը հարևանների միջև։ Առավել ևս, որ ճգնաժամային գաղաշրջանների միգրացիաները չէին սահմանափակվում մի որոշակի տարածքով, այլ վիթխարի շրջաններ էին ընդգրկում. օրինակ, խուրրիների տարածումը Հյուսիսային Միջագետքում, Սիրիայում և Կիլիկիայում մ.թ.ա. XVIII—XVII դդ.։

Ընդհանուր ճգնաժամերը քննելիս կարևոր է պարզել ներթագրվող պատճառներից առաջնայինը, որով կարող էին պայմանավորված լինել մյուսները։ Առկա ուսումնասիրություններում սովորաբար թվարկվում են երկու և ավելի պատճառներ (ներքին և արտաքին), որոնց սինթեզը պետք հանգեցներ գոյություն ունեցող քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային կառույցների ու արժեքների դեգրադացիային կամ վերափոխմանը։ Ընդ որում, սովորաբար չի առաջադրվում, ենթադրենք, այսպիսի հարցադրում. ինչ եթե տվյալ պետությունը չապրեր քաղաքական ճգնաժամ, կարող էին արդյոք «բարբարոս» հարևանները նվաճել այն։ Կամ, եթե չլինեին «բարբարոս» հարևանների հարձակումները, կպահպանվե՞ր արդյոք պետության քաղաքական միասնությունը։

Այս հարցադրումները լուրջ հիմք ունեն, քանի որ հին Առաջավոր Ասիայի պատմությունը լի է բազմաթիվ օրինակներով, երբ ներքաղաքական-տնտեսական ճգնաժամ + արտաքին գործոն

միասնության տարրերից որևէ մեկի բացակայությունը կամ չընդգծված բնույթը չի հանգեցրել համընդգրկուն ճգնաժամի, համենայնդեպս, դրա հետևանքները ճակատագրական չեն եղել տվյալ քաղաքական միավորի համար։ Նպատակահարմար ենք գտնում ներկայացնել որոշ օրինակներ, որոնք կլուսաբանեն մեր հարցադրումները։

1) Մ.թ.ա. XXIII դ. կեսերին Եգիպտոսի Հին Թագավորությունը տրոհվեց բազմաթիվ ինքնուրույն քաղաքական միավորների (նոմերի) առանց արտաքին հարձակման։

2) Մ.թ.ա. XIV դ. սկզբներին Խեթական պետությունը Թուդխալիյաս III-ի կառավարման վերջերին ենթարկվեց բոլոր հարևան պետությունների գրեթե միաժամանակյա հարձակմանը և երկրի մեծ մասը, մայրաքաղաք Խաթթուսասով հանդերձ, ընկավ թշնամիների ձեռքը, բայց որոշ ժամանակ անց Թուդխալիյասի որդի՝ Սուպպիլուլիումաս ետ բերեց կորցրածը և, նույնիսկ, էլ ավելի ընդարձակեց իր պետությունը։

Վերոհիշյալ երկու ճգնաժամային փուլերի ընթացքում նկատվող երևույթները, ինչպես էլ որ բացատրվեն, ունեն մի կարևորագույն հատկանիշ, որը կաղապարավորվում է շնորհիվ ամբողջականորեն հընազանդական տերմինի երկու բաղկացուցիչ մասերի միջև եղած որակական տարբերության։ Յուրաքանչյուր ճգնաժամային փուլի ընթացքում տեղի ունեցած իրադարձությունները հանգեցնում են տարբեր քաղաքակրթությունների միջև եղած կապերի, փոխհարաբերությունների և փոխազդեցությունների ինտենսիվացմանը, նոր տեխնոլոգիաների ներթափանցմանը մի տարածաշրջանից մեկ այլ տարածաշրջան։ Վերջապես, միգրացիաների շնորհիվ ոչ միայն տեղաշարժվող ժողովուրդներն են ստիպված փոխում իրենց կենցաղավարման մակարդակը և բնույթը՝ վերընթաց ուղիով գնալի առաջավորը, այլև արդեն զարգացման բարձր մակարդակին գտնվող և քաղաքական անկում ապրող հասարակությունները ստիպված վերանայում են իրենց կենսագործունեության եղանակը։ Այսինքն, ճգնաժամային փուլը հենց դեպի առաջավորը, նոր հարաբերությունները թևակոխելու տևական, ավիրահատական միջամտության գործողություն կարելի է համարել։

Այսօր Հին Առաջավոր Ասիայի և Եգիպտոսի պատմության ընթացքում տեղ գտած ճգնաժամային փուլերից առավել լավ է ուսում-

նախորդած երրորդ՝ մ.թ.ա. XII դարի ճգնաժամը[3]: Չնայած առկա ուսումնասիրություններում դեռևս կան բազմաթիվ սպիտակ բծեր, որոնք էականորեն խոչընդոտում են այդ ճգնաժամային փուլի պրոցեսում տեղ գտած համընդհանուր երևույթների հաջորդականության պարզաբանմանը և փոխազդեցությունների բնույթի ընկալմանը, սակայն դա չի խանգարում հիմնական գծերով ուրվագծելու մ.թ.ա. XII դարի ճգնաժամը: Սույն խնդրի ուսումնասիրությունը կարևոր է այն առումով, որ հնարավորություն կընձեռի առնչելու հասարակությունների զարգացման վաղընթաց փուլի մոդել:

Ստորև ներկայացնենք վերոհիշյալ երրորդ ճգնաժամի հասունացման պատճառների խնդրում մասնագիտական գրականության մեջ առկա հիմնական տեսակետները, որոնք արտացոլում են արդի ըմբռնության մեջ Առաջավոր Ասիայի և Էգեյան Հնագույն քաղաքակրթությունների անկման փուլի մեկնաբանության հիմնական պատճառները: Դրանք երեքն են՝ 1) ինքնաբերական հասարակությունների քաղաքական և սոցիալ-տնտեսական կառուցվածքի ներքին, որոշակի պատճառներով պայմանավորված քայքայում, 2) զանգվածային էթնիկական տեղաշարժեր, 3) բնակլիմայական պայմանների վատթարացում: Ինչպես նշվեց քիչ առաջ, մասնագետները սովորաբար առաջարկում են կոմբինացված տարբերակներ առանձին երկրների համար, խուսափելով նախապատվությունը տալուց որևէ մեկին:

ՆԵՐՔԻՆ ՃԳՆԱԺԱՄ

Վերջին շրջանում մի շարք ուսումնասիրողներ մ.թ.ա. XII դ. ճգնաժամի պատճառները փորձում են գտնել առաջավորասիական և էգեյան քաղաքակրթությունների ներսում դեռ ճգնաժամից տասնամյակներ առաջ ձևված քաղաքական և տնտեսական համակարգի փլուզման մեջ[4]: Ընդ որում, այս խնդրին նվիրված ուսումնասիրություններում շեշտը, որպես կանոն, դրվում է սոցիալ-տնտեսական գործոնի վրա:

Ըստ Մ. Լիվերանիի մոդելի, որը կառուցված է սիրիա-պաղեստինյան աշխարհի նյութերի հիման վրա, ուշբրոնզեդարյան ճգնաժամում ներքին գործոնը (սոցիալ-տնտեսական) գերիշխում է արտաքին գործոնի (միգրացիոն) վրա: Ներքին գործոնի քայքայիչ ազդեցության հետևանքով գալիս է մի պահ, երբ գոյության ամե-

ցող տարածաշրջանային խոշոր միավորումներում (Եգիպտոսը և Խաթթին՝ իրենցից կախյալ քաղաքական միավորներով հանդերձ) ակսվում է ճգնաժամային իրավիճակ։ Այն արտահայտվում է մի շարք երևույթների տեսքով. 1) գյուղական բնակչության փախուստ անկախանալու հողերից՝ պարտքերի պատճառով, 2) տեղահանվող բնակչության կենտրոնացում ծովափնյա շրջաններում և գետահովիտներում, որտեղ առկա էին բերրի հողը և ջրային բավարար ռեսուրսները, 3) քոչվոր կամ կիսաքոչվոր տարրի տեսակարար կշռի աճ ի հաշիվ նստակյաց բնակչության, 4) վերը նշված երևույթների պատճառով պալատական վարչակազմի սոցիալ-տնտեսական հենարանի խարխլում։ Իսկ, քանի որ պալատներում էին կենտրոնացած երկրի կենսագործունեության բոլոր թելերը, ապա դրանց քայքայումը կարող էր ճակատագրական հետևանքներ ունենալ ողջ երկրի համար։ Ճգնաժամի հասունացմանը նպաստող կարևոր գործոններից նշվում է միջտարածաշրջանային առևտրի անվտանգության երաշխիքների վերացումը՝ կապված մետրոպոլիայի թուլության հետ (այսինքն մեծ արքաների իրական իշխանության սասանում)։ Նշված պրոցեսների խորացման հետևանքը տարածաշրջանային վարչատնտեսական համակարգի փլուզումն էր։ Նախկինում խոշոր պալատական համակարգերը իրենց տեղը զիջում են ավելի մեծաքանակ, բայց անհամեմատ ավելի փոքր քաղաքային կենտրոններին։

Ուշբրոնզեդարյան հասարակությունների անկման վերոհիշյալ մոդելը, անկասկած, ուշագրավ է այն առումով, որ դրանում առկա քայքայիչ գործոնները (կամ գոնե մի մասը) նկատելի են ոչ միայն սիրիա-պաղեստինյան շրջանում, այլ նաև մայրցամաքային Հունաստանում, Փոքր Ասիայում, Կիպրոսում և այլուր։ Սակայն մի հանգամանք ստիպում է առանձնահատուկ զգուշավորություն ցուցաբերել խնդրի նման մեկնաբանման գործում։

Նշված քայքայիչ երևույթները՝ բնակչության զանգվածային հեռացում բնակավայրերից այլ շրջաններ, հաճախ նաև այլ երկրրներ, քոչվորության աճ, միջազգային առևտրի անկում և այլն, առկա են եղել թե Միջին բրոնզեդարում, թե Վաղ բրոնզեդարում։ Սակայն ինչպես կարող էր պատահել, որ այդ երևույթների բացասական ներգործությունը իր բարձրակետին հասներ գրեթե միաժամանակ՝ միմյանցից տարածապես հեռու գտնվող տարածաշրջաննե-

րում։ Հազիվ թե հնարավոր լինի հիմնավորել այն փաստարկը, թե միջնադարյան աշխարհը և սիրիա-պաղեստինյան տարածքը կամ մեկ ուրիշը կարող էին տալու սոցիալ-տնտեսական և քաղաքական վերլուծությունը միևնույն մոդելով և ժամանակագրությամբ։ Մ. Լիվերանիի մոդելում նշված է ուշբրոնզեդարյան պալատական խոշոր կենտրոնների ավերման և նոր կենտրոնների առաջացման մասին, սակայն այդ երևույթը չի հիմնավորվում։ Ով ավերեց դրանք և ինչու։ Բնական է, որ մեծապետության անկումը պետք է կաթվածահար աներ ավելի քաղաքական միավորի գերակայության տակ գտնվող տարածքների կենսագործունեությունը, բայց ինչու արդեն հաջորդ փուլում նախկին կենտրոնների մի մասը ընդհանրապես լքվում է բավական երկար ժամանակով կամ վերջնականապես (օրինակ, Պիլոսը և այլ քաղաքներ Մեսսենիայում, Խաթթուսասը և կենտրոնական Փոքր Ասիայի մի շարք քաղաքներ, Ուգարիտը սիրիական ծովափին և այլն), կամ էլ դրանց տեղում հայտնվում են մանր, ս-չնչով ավելի չնչին բնակավայրեր (օրինակ, պելոպոննեսյան մի շարք բնակավայրեր երկրորդ ավերից հետո (մ.թ.ա. XII դարի երկրորդ կես), Գորդիոնը Հետագայի Փռյուգիայում, Խաթթուսասի խեթական շերտերը, Կորուցութեփեին Վերին Եփրատի ավազանում և այլն)։

Մ. Լիվերանին բնակչության կենտրոնացումը ծովափնյա շըրջաններում, ի հաշիվ խորքային երկրագործական շրջանների բնակչության, բացատրում է տնտեսության անհամատարբերությամբ և պատերերի առկայությամբ։ Սակայն հաճախ անտեսվում է այն հանգամանքը, որ լրացին ռեսուրսներով հարուստ ծովափնյա շըրջանները և գետահովիտները իրենք իսկ գերբնակեցված էին և հազիվ թե ի վիճակի լինեին ընդունելու նորամուտ բնակչությանը և ապահովելու նրա կենսական կարիքները։ Բացի այդ, ամբողջությամբ ուղեկցվող ու բնակչության մեծ աճ ցույց տվող միջնյան մի շարք քաղաքների օրինակը (Միկենք, Տիրինթոս, Աթենք և այլն) այդ բացատրությունն է ակնհայտում։ Լեզինակի մոտ հստակ չի տառանձնացվում այն վճռական ազդակը, որի արդյունքում երևան եկան ուշբրոնզեդարյան հասարակությունների ներսում արդեն առկա բոլոր բացասական երևույթները։ Այսինքն, ինչից սկսվեց ամեն ինչ։ Նա ներկայացնում է միայն ճգնաժամի ընթացքը և հետևանքը, այլ ոչ դրա սկզբնավորումը[5]։

Մոտավորապես նույն մոտեցումն է առկա միկենյան քաղաքակրթության անկման պատճառների բացատրության հարցում մի շարք մասնագետների մոտ։ Նրանց կարծիքով, անկմանը հաջորդող դարաշրջանի քաղաքական միավորների սոցիալ-տնտեսական կառուցվածքի շատ երևույթներ արդեն առկա են ուշհելլադյան IIIB փուլի վերջում (մ.թ.ա. XIII դարի վերջ), այսինքն, անկման նախօրեին։ Պալատների անկումից հետո շատ բան մնաց նույնը, փոխվեց միայն արտադրության կազմակերպման եղանակը և փոխանակման բնույթը։ Ետճգնաժամային ժամանակաշրջանի էգեյան աշխարհը շատ ավելի տարածաշրջանային բնույթ ուներ, քան միկենյան քաղաքակրթությունը։

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՄ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾՈՆ

Արտաքին գործոնի դերը ուշբրոնզեդարյան ճգնաժամի հասունացման և կործանարար ավերածության մեջ, որը չափազանց մեծ տեղ է զբաղեցնում ոչ հեռավոր անցյալի ուսումնասիրություններում, գրեթե բացառապես հանգեցվում է լայնածավալ էթնիկական տեղաշարժերին։ Սակայն վերջին շրջանում արտաքին գործոնի նկատմամբ ձևավորվել է ակնհայտ թերահավատ մոտեցում, որ գլխավորապես պայմանավորված է հետևյալ դիտարկումներով. 1) բնակավայրերի անկմանը անմիջապես հաջորդող շրջանում նկվոր բընակչության հետքեր չկան կամ ուղղակի դրանք խիստ աննշան են մեծ միգրացիա ենթադրելու համար, 2) հնագիտորեն և գրավոր աղբյուրներով վկայված միգրացիաներն ընթացել են ոչ թե անկում ապրող պետությունների կենտրոնական շրջաններով, այլ ծայրամասային հատվածներով (օրինակ, ծովի ժողովուրդները Փոքր Ասիայի հարավային մասով և լևանտյան ծովափով), 3) միգրացիաներում ընդգրկված ժողովուրդները նախապես կազմել են աղետից տուժած երկրների բնակչությունը, այլ ոչ ինչ-որ տեղից (օրինակ, Եվրոպայից) եկած հիպոթետիկ ցեղերը։

Այս նկատառումները թույլ են տալիս ներկայումս կասկածի տակ առնելու միգրացիոն գործոնի խաղացած վճռական դերը մ.թ.ա. XII դ. ճգնաժամում։ Հնարավոր է, խնդիրը պետք է ձևակերպել այսպես. միգրացիաները ոչ թե ճգնաժամի պատճառն են, այլ հետևանքը։

Այս տեսությունը իր բազմաթիվ տարբերակներով առաջ է եկել XX դ. 60-ական թվականներին։ Չնայած մասնագետների մեծ մասը հակված է երկրորդական տեղ հատկացնելու մերձավորարևելյան ընդհանուր հասարակության բնակլիմայական գործոնին[8], սակայն մ.թ.ա. XIII—XII դդ. այս տարածաշրջանում տեղի ունեցած քաղաքական կատակլիզմների և անկումային երևույթների համար հիմնավոր բացատրության անհնարինությունը ստիպում է լրջորեն մոտենալու այս տեսությանը։ Ստորև ներկայացնենք Առաջավոր Ասիայի տարբեր շրջաններում նշված ժամանակահատվածում նկատվող բնակլիմայական փոփոխությունները, որոնք կարող էին բացասաբար անդրադառնալ բնակչության կենսագործունեության վրա։

Դեռ 1960-ական թվականներին հայտնի հնագետ Կ. Շեֆերը առաջ էր քաշել մի ենթադրություն, ըստ որի Ուգարիտի անկման շրջանում (մ.թ.ա. XII դ. սկիզբ) ավերված կառույցները գտնվում են մանր, փոշենման, բաց գույնավուն միատարր մասնիկներից բաղկացած հողաշերտի մեջ, որը վկայում է այս փուլում տիրող խիստ տաք և չորային կլիմայի գոյության մասին։ Նշված շերտին նախորդող և հաջորդող մուգ շագանակագույն, ոչ փոշենման հողը խոնավ կլիմայի ակնառու վկայություն է[9]։ Կ. Շեֆերի կարծիքով, նման իրավիճակ է նկատվում նաև Էնկոմիում (Կիպրոս)[10]։

Ուշ բրոնզեդարի վերջին փուլում կլիմայական պայմանների փոփոխության հարցով վկայությունը գալիս է Միջագետքից։ Եփրատ ու Տիգրիս գետերի մակարդակների տատանումները ուշ բրոնզդարյան երկար ժամանակահատվածում հետևյալ պատկերն են ներկայացնում[11].

1) մակարդակի կտրուկ աճ (մոտավորապես մ.թ.ա. 1450 թ.)
2) աճի բարձրակետ (մոտավորապես մ.թ.ա. 1350—1250 թթ.)
3) կտրուկ անկում, նվազագույն մակարդակը մոտավորապես մ.թ.ա. 1150 թ.
4) մակարդակի համեմատական աճ (մոտավորապես մ.թ.ա. 950 թ.)։

Վերը բերված տվյալները արտակարգ կարևոր են, քանի որ Առաջավոր Ասիայի երկու խոշորագույն գետերի մակարդակների

անկումը ինքնին արդեն վկայում է դրանցով սնվող վիթխարի տարածքների բնակչության կյանքում տեղի ունեցած բացասական գործընթացների օգտին։ Հատկանշական է, որ միջագետքյան անապատի տարածքում դրա մի թվով տեղեկություններ են պահպանվել այս նույն ժամանակաշրջանում տիրող սովի մասին[12]։ Այս առթիվ հարկ է հիշել նաև XIII դ. երկրորդ կեսին Փոքր Ասիայում եգիպտական արշավներով վկայված տնտեսական ծանր կացությունը և հացահատիկի առաքումները Եգիպտոսից Փոքր Ասիա[13]։

Համաժամանակյա բնակլիմայական փոփոխություններ են գրանցված նաև Կենտրոնական Եվրոպայում (Հունգարիա և Ալպեր), Հյուսիսային Եվրոպայում (Նորվեգիա), Աֆրիկայում (Քենիա), Հյուսիսային Ամերիկայում (Կալիֆորնիա)[14]։

Վերոհիշյալ բնակլիմայական փոփոխությունների ենթադրվող քայքայիչ դերը Առաջավոր Ասիայի և Եգեյան ծովի ավազանի ուրբանիզացված հասարակությունների անկման գործում, ինչպես, չի կարելի ժխտել։ Խնդիրը միայն հետևյալն է. կարող էր արդյոք կլիմայի չորացումը, դրան ուղեկցող երևույթների հետ միասին (սով, բերքի կորուստ, անասունների զանգվածային անկում, բնակչության շարժունակության աճ և այլն) հասցնել այնպիսի իրավիճակի, ինչպիսին այսօր հնարավոր է վերականգնել ճգնաժամային տարբեր տարածքներում առանձին վերցրած և ողջ մերձավորարևելյան-եգեյան տարածաշրջանում ընդհանրապես։

Ուսումնասիրողների մի մասը հակված է ընդունելու նման հնարավորություն։ Այս ուղղությամբ վերջին 3—4 տասնամյակներում կլիմայաբանական կարևոր հետազոտություններ են ընթացել Հունաստանի, Թուրքիայի, Կիպրոսի և Սիրիայի տարածքներում։

Վերոհիշյալ երկրներում գործող թվով 35 օդերևութաբանական կայանների՝ 1951—1976 թթ. գրանցած ամենամյա տեղումների քանակի և ջերմաստիճանի չափումները հանգեցրել են հետևյալ հետաքրքիր ենթադրությունների[15]։

Հունաստանը և Թուրքիան գտնվում են ավելցուկային և պակասավոր խոնավության գոտիների սահմանում, որով էլ պայմանավորված են այս երկրներում նկատվող երաշտային և ոչ երաշտային կոնտրաստները[16]։ Վերոհիշյալ չափագրումների տվյալները առավել լավ են համարվում ուշ բրոնզեդարի վերջին տեղի ունեցած իրադարձությունների կլիմայական հիմքին հատկապես 1972 թ.

հունվարի առումով։ Այսպես, այդ ժամանակահատվածի ընթացքում գրանցված է խիստ չորային կլիմա Պելոպոննեսի հյուսիսում, Դաշտային Կիլիկիայում և Լևանտի հյուսիսային շրջանում[17]։ Իսկ ըստ 1972 թ. հունվարյան չափագրումներից մեկի, խիստ չորային կլիմա է արձանագրված էգեյան ավազանի հյուսիսում (Հարավային Թեսսալիայում), նորմայից ավելի չոր է կենտրոնական և հարավային Հունաստանում, նորմայից ավելի խոնավ է Կիպրոսում, սիրիական ծովափին, Պամֆիլիայում և Կիլիկիայում[18]։

Բ. Վայսի կարծիքով, Առաջավոր Ասիայի և էգեյան ծովի ավազանի տևական չորաշրջանները ժամանակագրորեն համընկնում է արևի ակտիվության անկման, այն դեպքում, երբ դրան նախորդող (մ.թ.ա. 1420—1260 թթ.) և հաջորդող (մ.թ.ա. 820 թ. հետո) փուլերը բնորոշվում են որպես արևի ակտիվության նվազման ժամանակաշրջաններ[19]։

Արևելամիջերկրածովյան ավազանում կլիմայական փոփոխությունների մեկ այլ տարբերակ է առաջարկում Ռ. Կարպենթերը[20]։ Ըստ նրա, մ.թ.ա. XIII դ. վերջերին փոխվել են Ատլանտյան օվկիանոսի կողմից արևելք փչող խոնավ քամիների ուղիները, որոնք ընթացել են դեպի Հյուսիսային Եվրոպա։ Դրա հետևանքով արևելամիջերկրածովյան ավազանում ամառային չորային կլիման շարունակվել է աշնանը և ձմռանը, հասցնելով բերքի անկմանը։

Ամփոփելով մ.թ.ա. XII դ. առաջավորասիական հասարակությունների անկման և ռեգրեսիվ զարգացման խնդրում բնակլիմայական գործոնի խնդիրը, անհրաժեշտ է նշել, որ այս փաստարկը բավական լուրջ է և անհնար է այն իսպառ անտեսել, ինչպես վարվում են ոմանք։ Եթե իրոք նշված չորաշրջանում իրադարձությունների ծավալմանը նպաստող գործոնների թվում եղել է նաև բնակլիմայականը, ապա, հաշվի առնելով կլիմայագետների կողմից կատարված դիտարկումների արդյունքները, կարելի է ենթադրել, որ դրանք չէին կարող միևնույն ներգործությունն ունենալ մերձավորարևելյան տարածաշրջանի տարբեր մասերի վրա։ Իհարկե, տեսականորեն 1972 թ. չափագրումներին համապատասխան իրավիճակ կարող էր լինել մ.թ.ա. XXIII դ. վերջերին-XII դ. սկզբին, բայց միայն այդքանը։ Չի կարելի անտեսել նաև այն հանգամանքը, որ տևական չորաշրջանները տևել է շուրջ 300 տարի, իսկ դա նշանակում է, որ կլիմայի չորացումը ըստ 1927 թ. գրաֆիկի չի կարող բացատրել մ.թ.ա. XII դ. ճգնաժամն ամբողջությամբ։ Ուշբրոնզեդարյան հիպոթեզի

չորացումը պիտի տևեր դարեր, [illegible]

ARAM KOSSIAN

ON THE PERIODIZATION OF ANCIENT NEAR EASTERN AND AEGEAN HISTORY

The article deals with synchronic historical phases (cycles) which are clearly traceable during the III—II mill. B C. history of ancient Near East and Aegean basin. These six phases could be determined as follows:

1). Creation of states and their ascending development. Descending tendencies towards the end of the phase (XXX/XXVIII—XXIII/XXII c. B. C.).

2). Collapse or disintegration of statehood: <First crisis> (XXIII/XXII c. B. C.).

3). Stabilization of civilizations and ascending development. Descending tendencies towards the end of the phase (XXI/XX—XIX/XVIII c. B. C.).

4). Collapse or disintegration of statehood: <Second crisis> (XVIII/XVII c. B. C.).

5). Stabilization of civilizations and ascending development. Descending tendencies towards the end of the phase (XVII/XVI—XIII c. B. C.).

6). Collapse or disintegration of statehood: <Third crisis> (XII/XI c. B. C.).

The author discusses three leading theories dealing with possible cases of the <Third crisis>—1) Internal disintegration, 2) migratory, 3) climatological.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] [illegible]

[2] [illegible] M. Gimbutas, Proto-Indo-European Culture: The Kurgan Tulture During the Fifth, Fourth, and Third Millennia B. C.-In:

«Indo-European and Indo-Europeans» (eds. G. Cardona et al.).-Philadelphia, 1970, (M. p. 128ff):

[3] Մ.թ.ա. XII դարի ճգնաժամի վերաբերյալ տե՛ս «The Crisis Years: the 12th Century B. C. From Beyond the Danube to the Tigris (eds. W. A. Ward and. S. Joukowsky).- Dubuque, 1992; Ա. Կ. Թոսյան, Մ.թ.ա. XII դարի մերձավոր-արևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը (Պատմագիտական ատենախոսության սեղմագիր), Երևան, 1997:

[4] M. Liverani, The Collapse of the Near Eastern Regional System at the End of the Bronze Age: the Case of Syria.—In: «Center and Periphery in the Ancient World» (eds. M. Rowlands, M. Larsen and K. Kristiansen).—Cambridge, 1987, p. 66ff.; W. Hallo, From Bronze Age to Iron Age in Western Asia: Defining the Problem.—In: «Crisis», 1992, 1ff.; J. D. Muhly, The Crisis Years in the Mediterranean World: Transition or Cultural Disintegration?—In: «Crisis», 1992, p. 10ff.; J. Rutter, Cultural Novelties in the Post-Palatial Aegean World: Indices of Vitality or Decline?—In: «Crisis», 1992, 61ff.

[5] Ռադիոածխածնային թվերի մասին է տեղեկացրել Կ. Լոյդը (նշվ. աշխ.):

[6] J. D. Muhly, նշվ. աշխ.; J. Rutter, նշվ. աշխ.

[7] R. D. Barnett, The Sea Peoples.—In: «Cambridge Ancient History», vol. II, ch. XXVIII, 1967, p. 3ff.

[8] Օրինակ, «Ծովային ժողովուրդները. [illegible] (W. Hallo, նշվ. աշխ., p. 2): [illegible] (p. 3): [illegible] (N. K. Sandars, The Sea Peoples.- London, 1978, p. 24):

[9] C. F. A. Schaeffer. In: Ugaritica V.—Paris, 1968, p. 761ff. (Հղումը ըստ՝ J. Neumann and S. Parpola, Climatic Change and the Eleventh-Tenth Century Eclipse in Assyria and Babylonia, «Journal of Near Eastern Studies», vol. 46, 1987, p. 163).

[10] C. F. A. Schaeffer, Enkomi-Alasia. I.—Paris, 1952, p. 358ff. (Հղումը ըստ՝ J. Neumann and S. Parpola, նշվ. աշխ., p. 163).

[11] P. A. Kay and D. L. Johnson, Estimation of Tigris-Euphrates Streamflow from Regional Paleoenvironmental Proxy Date, «Climatic Change» 3, 1981, p. 251ff.

[12] J. Neumann and S. Parpola, նշվ. աշխ., p. 178ff.

[13] H. Klengel, «Hungerjahre» in Hatti, «Altorientalische Forschungen», Bd. 1, 1974. S. 165ff.

[14] R. A. Bryson, H. H. Lamb and Donley, Drought and the Decline of Mycenae, «Antiquity», 43, 1974, p. 46f.

[15] B. Weiss, The Decline of Late Bronze Age Civilization as a Possible Response to Climatic Change, «Climatic Change» 4, 1982, p. 173ff.

[16] D. Donley, Analysis of the Winter Climate Pattern at the Time of the Mycenaean Decline.—Ann Arbor: University of Michigan (Ph. D. thesis, Microfilm) 1971. (Վկայակոչված է՝ B. Weiss, նշվ. աշխ., p. 198).

[17] B. Weiss, նշվ. աշխ., p. 192.

[18] Նշվ. աշխ., p. 189.

[19] Նշվ. աշխ., p. 196.

[20] R. Carpenter, Discontinuity in Greek Civilization.—Cambridge, 1966. Այս տեսակետը վիճարկել են Բրայսոնը և մյուսները R. A. Bryson, H. H. Lamb and D. Donley, նշվ. աշխ., p. 46ff.: Համեմատել նաև՝ H. E. Wright Jr., Climatic Change in Mycenaean Greece. «Antiquity» XLII, 1968, p. 123ff., [illegible] Միկենյան [illegible] չէր։

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱԲՈՒ-Լ ՖԱՐԱՋ ԳՐԻԳՈՐԻՈՍ ԻԲՆ ԱԼ-ԻԲՐԻԻ ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԵՐԿԵՐԸ ՈՐՊԵՍ ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ XIII ԴԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ

Միջնադարյան Հայաստանի և Կիլիկիայի պատմության սկզբնաղբյուրների շարքում հատուկ տեղ են գրավում արաբական (մահմեդական) աղբյուրները, որոնք շատ արժեքավոր տեղեկություններ են պարունակում ինչպես բուն Հայաստանի, այնպես էլ Կիլիկյան Հայաստանի հայկական թագավորությունների ու իշխանությունների քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի տարբեր կողմերի մասին: Սակայն արաբական (մահմեդական) պատմագրության մեջ ինքնուրույն ճյուղ են կազմում արաբալեզու քրիստոնյա (ասորի, ղպտի, հույն և այլն) հեղինակների՝ պատմիչների ու մատենագիրների երկերը, որոնք ներկայացնում են քրիստոնյա արաբական մատենագրությունը[1]:

Քրիստոնյա արաբալեզու պատմիչները և մատենագիրները, մի կողմից, օգտվելով ինչպես հունարեն, այնպես էլ արաբերենի թարգմանված հույն և բյուզանդական հեղինակների երկերից, մյուս կողմից՝ մահմեդական (արաբ, պարսիկ և այլն) պատմիչների աշխատություններից, իրենց երկերի մեջ շարունակել են թե՛ արաբական և թե՛ բյուզանդական պատմագրության ավանդույթները: Բացի դրանից, քրիստոնյա արաբալեզու պատմիչները, ի տարբերություն մահմեդական հեղինակների, իրենց երկերի մեջ մեծ տեղ են հատկացրել քրիստոնեական պետությունների, ինչպես նաև Մերձավոր և Միջին Արևելքի քրիստոնեական համայնքների թե՛ քաղաքական և թե՛ եկեղեցական պատմության հարցերին[2] *ու դրանով առատ նյութ մատակարարել արաբալեզու մահմեդական պատմագրությանը: Այդ իսկ պատճառով նրանց ընձեռած տեղեկություն-*

ները ոչ միայն անաչառ են ու հավաստի, այլև հաճախ բացակայում են մահմեդական հեղինակների պատմագրական երկերում։ Այս տեսանկյունից մեծ արժեք են ներկայացնում քրիստոնյա ասորական ժամանակագրության խոշոր ներկայացուցիչ, եկեղեցական, մշակութային գործիչ, գիտնական-հանրագիտակ և նշանավոր պատմիչ Աբու-լ Ֆարաջ Գրիգորիոս (Յուհաննա) իբն Հարուն իբն Թումայի (1226—1286 թթ.) պատմագրական երկերը (ասորերեն և արաբերեն լեզուներով)։ Արաբական (մահմեդական) պատմագրության մեջ նա հայտնի է Իբն ալ-Իբրի (բառացի՝ Հրեայի որդի), իսկ եվրոպական արևելագիտության մեջ՝ Բար Հեբրեուս (ասոր. Բար Էբրայա տարբերակից) անունով[1]։

Աբու-լ Ֆարաջ Գրիգորիոսը ծնվել է Փոքր Հայքի Մալաթիա քաղաքում 1226 թ.՝ բժշկի ընտանիքում։ 1246 թ. եպիսկոպոս ձեռնադրվելու ժամանակ նա ստացել է Գրիգորիոս անունը, իսկ փոքր հասակում նրան կոչել են Յուհաննա ասորական անունով։ 1246—1253 թթ. նա մի շարք եկեղեցական պաշտոններ է զբաղեցնում Անտիոքում, Գուբասում, Լակաբինում (Մալաթիայի մոտ), 1253 թ. նշանակվում է Հալեպի հակոբիկ ասորական եկեղեցու մետրոպոլիտ, 1260 թ. կրկին դառնում է Հալեպի մետրոպոլիտ և քաղաքի մոնղոլական պաշարման ու նրա բնակչության կոտորածի ժամանակ ներկա է լինում ականատես[2]։ 1264 թ. հունվարի 19-ին Կիլիկիայի Սիս մայրաքաղաքի ասորական եկեղեցական ժողովում Աբու-լ Ֆարաջը ձեռնադրվում է Արևմուտքի և արևելքի մաֆրիան (մաֆրիանը), այսինքն՝ արևելքի երկրների հակոբիկ ասորական եկեղեցու առաջնորդ, Անտիոքի պատրիարքի ընդհանուր փոխանորդ։ Նրա ձեռնադրության արարողությանը ներկա էին Կիլիկիայի հայոց թագավոր Հեթում Ա (1226—1270), վերջինիս որդիները, եղբայրները, հայոց պետության անվանի գործիչներ, հայոց եկեղեցու եպիսկոպոսներ, հայ գիտնականներ, մշակութային գործիչներ, ասորական հակոբիկ եկեղեցու թեմերի առաջնորդներ, վարդապետներ, հայ և ասորի հասարակության հոծ զանգված[3]։

1264 թ. մինչև կյանքի վերջը՝ 1286 թ. Աբու-լ Ֆարաջը կատարել է Արևելքի մաֆրիանի պարտականությունները[4], շրջել է իր հովվապետության ներքո գտնվող բոլոր թեմերում (18 եպիսկոպոսական թեմեր), որոնք գտնվում էին Իրանի մոնղոլական իլխանների տիրապետության տակ, այդ թվում՝ Ասորիքի, Միջագետքի, Գարա-

կաստանի, Ատրպատականի, Իրաքի, Փոքր Ասիայի, Հարավային Հայաստանի և Կիլիկիայի (Անատոլի) տարածքում[7]:

Աբու-լ Ֆարաջ Գրիգորիոսը որպես ասորական եկեղեցու առաջնորդ և մշակութային գործիչ լավ հարաբերությունների մեջ է եղել Հայոց առաքելական եկեղեցու առաջնորդների, աշխարհիկ ու իշխանական դասի ներկայացուցիչների հետ։ Այդ մասին է վկայում հենց նրա ձեռնադրության փաստը կիլիկյան պետության մայրաքաղաք Սսում, Հայ հասարակության աշխարհիկ ու հոգևոր դասերի բարձրաստիճան մարդկանց ներկայությամբ։ Նա համագործակցել է նաև Հայ եկեղեցու սպասավորների հետ, համատեղ դավանաբանական պայքար մղել նեստորականների և քաղկեդոնականների դեմ, ուր ապաստանում վայելել է Կիլիկիայի հայոց թագավորների ու իշխանների հովանավորությունը։

Աբու-լ Ֆարաջ Գրիգորիոսի հարուստ մատենագրական ժառանգությունից մեզ հետաքրքրում են նրա պատմագրական երկերը։ Ասորերեն լեզվով նա գրել է ընդարձակ «Համընդհանուր (Տիեզերական) պատմություն» (1276 թ.), որը հայտնի է «Թարիխ ալ-Զամանա» խորագրով և կազմված է երկու մասից։ Առաջին մասը՝ «Աշխարհիկ (քաղաքական) պատմությունը» Եվրոպայում հայտնի է «Ասորական ժամանակագրություն»[8], իսկ երկրորդ մասը՝ «Եկեղեցական պատմությունը» Եվրոպայում հայտնի է «Եկեղեցական ժամանակագրություն» խորագրով։ «Եկեղեցական պատմությունը» իր հերթին կազմված է երկու մասից, որը թարգմանվել է լատիներեն և հրատարակվել Եվրոպայում[9]։ «Եկեղեցական պատմությունը» (ասորական) ունի նաև համառոտ արաբերեն թարգմանություն, որը հրատարակվել է Բեյրութում 1923—1924 թթ.[10]։

Աբու-լ Ֆարաջի ասորական «Համընդհանուր պատմության» առաջին մասը հայտնի է նաև որպես աշխարհիկ պատմության ընդարձակ խմբագրություն, քանզի հեղինակը կյանքի վերջին տարում՝ 1286 թ. (հուլիս ամսին) վերամշակել է իր ասորական աշխարհիկ (քաղաքական) պատմությունը, հարստացրել նոր աղբյուրների նյութերով և շարադրել է արաբերեն լեզվով՝ իր գրչակից ընկերների և, հավանաբար, տեղի (Մարաղա քաղաքի) իշխանավորների խնդրանքով։ Սակայն անսպասելի հիվանդության պատճառով հեղինակը չի հասցրել արաբերենի վերածել ասորական բնագրի վերջին երեք էջերը, այդ իսկ պատճառով նրա աշխարհիկ պատ-

մության արաբական խմբագրությունը, որը հայտնի է որպես համառոտ խմբագրություն, մնացել է առանց խորագրի[11]:

Աբու-լ Ֆարաջի աշխարհիկ պատմության արաբական խմբագրությանը[12], ինչպես նաև 13-րդ դարի քրիստոնյա արաբ պատմիչ Ջիրջիս ալ-Մաքին Իբն ալ-Ամիդի «Սարակինոսների (մահմեդականների) պատմությունը»[13] եղել են առաջին պատմագրական երկերը, որոնք եվրոպական վերածննդի նախօրեին թարգմանվել են լատիներեն և գրավել եվրոպացի հետազոտողների ուշադրությունը[14]: Ընդ որում, Աբու-լ Ֆարաջի աշխարհիկ պատմության արաբական խմբագրությունը առաջին անգամ հրատարակվել է լատինական թարգմանությամբ և ուսումնասիրությամբ Է. Պոկոկի կողմից 1650—1663 թթ. հետևյալ խորագրով՝ «Թարիխ Մուխթասար ալ-Դուվալ»[15] (Պետությունների համառոտ պատմություն)։ Ըստ երևույթին, Աբու-լ Ֆարաջի պատմության արաբական տարբերակը արաբագետ Է. Պոկոկը համարել է որպես ասորական խմբագրության համառոտ տարբերակ և այդ ձևով էլ գիտական շրջանառության մեջ մտցրել։

Աբու-լ Ֆարաջի «Աշխարհիկ (քաղաքական) պատմության» նորագույն հետազոտողները գտնում են, որ այդ պատմության արաբական խմբագրության «Թարիխ մուխթասար ալ-Դուվալ» (Դինաստիաների համառոտ պատմություն) առաջարկված խորագիրը չի համապատասխանում երկի բովանդակությանը և հատկապես արաբական խորագրի «Մուխթասար» (համառոտ, համառոտագրում) և նրա լատինական, «Կոմպենդիում» (համահավաք) որակմանը։ Նրանք իրավացիորեն նշում են, որ Աբու-լ Ֆարաջի աշխարհիկ պատմության արաբական խմբագրությունը ոչ միայն ասորական խմբագրության համառոտ շարադրանքը չէ, այլ նոր աղբյուրների նյութերի հիման վրա, այլադավան մահմեդական ընթերցողների համար գրված և այլ նպատակներ հետապնդող աշխատություն է, որը միանգամայն տարբերվում է նույն հեղինակի պատմության ասորական խմբագրությունից։ Որակապես նրանք տարբեր աշխատություններ են[16]:

Աբու-լ Ֆարաջի՝ 1650 թ. Է. Պոկոկի կողմից հրատարակված աշխարհիկ պատմության արաբական բնագիրը 1783 թ. թարգմանվել է գերմաներեն և հրատարակվել Գ. Բաուերի կողմից[17]: Ավելի ուշ՝ 1890թ. հայտնի բնագրագետ Անտոն Սալիհանին բազմաթիվ նոր

ձեռագրերի հիման վրա հրատարակվեց Աբու-լ Ֆարաջի «Աշխարհիկ պատմության» արաբերեն բնագիրը[18], որը լրամշակվել, սրբագրվել, ծանոթագրվել ու վերահրատարակվել է Բեյրութում նույն Ա. Սալիհանիի կողմից[19] 1958 և 1983 թթ.[20]:

Իսկ Աբու-լ Ֆարաջի «Աշխարհիկ պատմության» (ասորական բնագրական խմբագրության) 10-րդ և 11-րդ գլուխները, որոնք նվիրված են Աբբասյան խալիֆաներին, սելջուկյան սուլթաններին և մոնղոլական տիրակալներին, առաջին անգամ թարգմանվել են արաբերենի Իսհակ Արմալեհի կողմից և հրատարակվել Բեյրութում 1986 թ.[21]: Արաբական թարգմանության համար հետազոտող Իսհակ Արմալեհը համեմատել է ոչ միայն Աբու-լ Ֆարաջի արաբական և ասորական խմբագրությունների բնագրերը, այլև հեղինակի օգտագործած տարաբնույթ աղբյուրների բուն նյութերը[22]:

Այսպիսով, սույն հոդվածի սահմաններում փորձ է արվում Աբու-լ Ֆարաջի աշխարհիկ պատմության թե՛ արաբական և թե՛ ասորական բնագրերի նյութերի հիման վրա քննության ենթարկել XIII դարի 20—50-ական թվականների Կիլիկիայի Հայոց պետության ռազմաքաղաքական պատմության դեպքերը:

Ինչպես, Կիլիկիայի Հայոց թագավոր Լևոն Բ Մեծագործի (1198—1219) մահից հետո գահի շուրջ տարբեր իշխանների ու խմբավորումների միջև պայքար ծավալվեց, և գահը թափուր մնաց մոտ վեց տարի: Սակայն Լևոն Բ դեռևս իր կենդանության օրոք Կիլիկյան պետության թագաժառանգ էր նշանակել իր մանկահասակ դուստր՝ Զաբելին և հոր կամքով նրա խնամակալներ էին նշանակվել, ինչպես այդ մասին հաղորդում է ասորի հեղինակ Աբու-լ Ֆարաջը, «ծովամերձ ամրոցների տեր Սիր Ադան պայլը (սպարապետը) և Լամբրոն ամրոցի տեր Հեթում իշխանի որդի Կոստանդինը»[23]: Ընդ որում, Սիր Ադան պայլը ոչ միայն Զաբելի խնամակալն էր, այլև Հայոց թագավորության կառավարիչը (պայլիկոսն՝ նաև պետության խնամակալ) և երկիրը կառավարել է մոտ երկու տարի[24]: Սակայն նույն Աբու-լ Ֆարաջի վկայությամբ 618/1221 թ Սիր Ադան պայլը (բայլի) զոհվում է Սիս քաղաքի մոտակա լեռնային կիրճում՝ իսմայիլականների դեմ մղած ճակատամարտում[25]: Աբու-լ Ֆարաջի այս վկայությունը հաստատվում է նաև Միքայել Ասորու և Սմբատ Սպարապետի տվյալներով. «Այրոյ ննջեալ Ադենին բատ բնական ատելութեանն Յունաց ընդ ազգիս Հայոց. քանզի Հոռոմ էր ազգաւ,

խորհէր ի միտս յինքն առնուլ զիշխանութիւնն վասն որոյ... սպա-նաւ ի Հաշիշեացն[26] սակաւ ժամանակս ինչ կալեալ զպայազատութիւ-նսն[27]։ Հայ պատմիչը չի տալիս Դասաոն ամրոցի տեր Սիր Ադամի սպանության տարեթիվը, սակայն Աբու-լ Ֆարաջն այն տեղադրում է 1221 (հիջրայի 618) թվականի դեպքերի մեջ։ Եթե Սիր Ադամը երկու տարի է կառավարել՝ Լևոն Բ թագավորի մահվանից (1219 թ.) հետո, ապա նրա սպանությունը պետք է կատարված լի-նի 1221 թ., որը ընդունելի է և համահունչ Աբու-լ Ֆարաջի տված 1221 թ. տարեթվի հետ։

Այնուհետև Աբու-լ Ֆարաջը հիշատակում է, որ «ծովափնյա ամ-րոցների տեր Սիր Ադամի սպանությունից հետո նրան հաջորդում է պարոն (բարոն) Կոստանդին պայլը (բայլի), որը Լևոն թագավո-րի քեռի՝ պարոն Վասիլի (Բասիլ) որդին է»[28]։ Նա մնում է որպես թագաժառանգ Զաբելի միակ խնամակալը և երկրի փաստացի կա-ռավարիչը։

1220 թ. աշխուժանում են ինչպես Կիլիկիայի ներսում առկա կենտրոնախույս ուժերը, այնպես էլ երկրից դուրս գտնվող սատար (հույն, լատին) թագավորներն ու իշխանները, որոնք ձգտում էին տիրել Հայոց թագավորական գահին[29]։ Երկրի ներսում գլուխ բարձ-րացրին Տարսոնի և Մսիսի հույն և հայ իշխանները, որոնք Կո-ռիկոս ամրոցի տեր Վահրամ (Մարաջախտ) իշխանի գլխավորու-թյամբ խռովություն կազմակերպեցին Կոստանդին պայլի գլխավոր-ված կենտրոնական իշխանության դեմ։ Նրանց էր միացել նաև Ան-տիոքի իշխան Ռուբեն-Ռայմոնդը։ Աբու-լ Ֆարաջը 618/1221 թ. դեպքերի մեջ մանրամասն տեղեկություններ է հաղորդում այս խռո-վության մասին։ Նա նշում է, որ խռովարարները գրավեցին Տար-սոնը, Ադանան և հարձակվեցին Մսիսի (Մամիստա) վրա։ Սակայն պարոն Կոստանդին պայլը հավաքեց իր զորքերը և շարժվեց խռո-վարարների դեմ։ Վահրամը իր զինակիցների հետ ճակատամար-տում փախուստի է դիմում, Կոստանդին պայլը հետապնդելով ձեր-բակալում է նրանց, այդ թվում, Անտիոքի իշխան Ռուբեն-Ռայմոն-դին, Կոռիկոսի տեր Վահրամ իշխանին և նրա կնոջը, ապա նրանց սպանում[30]։ Ըստ հայ մատենագիրների տվյալների, իշխան Կոս-տանդին պայլը ձերբակալում է խռովարարներին ու բանտարկում Տարսոնի բերդում, որտեղ նրանք մահանում են[31]։

Դահի շուրջ բորբոքված կռիվների մեջ իշխան Կոստանդին պայ-

յր հաղթանակ է տանում ընդդիմադիրների նկատմամբ, սակայն չի կարողանում օգտվել տարած հաղթանակի պտուղներից։ Նա դեռևս վախենում էր կենտրոնախույս Հայ իշխանների ուժեղ դիմադրությունից, այդ իսկ պատճառով խուսափում է իշխանության ղեկը զիջել իր որդի Հեթումին՝ առաջ քաշելով նրա թեկնածությունը որպես թագաժառանգ Զաբելի փեսացու։ Պատմաբան Վ. Տեր-Ղևոնդյանը արդարացիորեն նշում է, որ Կիլիկիայի Հայ իշխանների մեջ գնալով թաքնված թշնամանք կար Ռուբինյան տոհմի նկատմամբ։ Այդ էր պատճառը, որ 1221 թ. հրավիրված ժողովում Կոստանդին պայլը չհամարձակվեց իր որդիներից որևէ մեկի թեկնածությունը առաջադրել որպես թագաժառանգ Զաբելի փեսացու[32]։ Կոստանդին պայլը, մնալով որպես Զաբելի միակ խնամակալը ու երկրի փաստական կառավարիչը, ձգտում էր լուծել թագաժառանգ Զաբելի ամուսնության և, հետևաբար, գահակալության հարցը։

Այդ ծանր օրերի, Զաբելի փեսացուի ընտրության շուրջ ստեղծված բարդ իրավիճակի մասին 618/1221 թ. դեպքերի մեջ Աբու-լ Ֆարաջը հաղորդում է. «Կոստանդին պայլը հույս ուներ, որ Հայ իշխանները մատնացույց կանեն իր հինգ որդիներից մեկին՝ որպես Լևոն թագավորի դստեր (Զաբելի—Ա. Խ.) փեսացու, նրա հետ ամուսնանալու և թագավորության հարցը լուծելու նպատակով։ Սակայն նրանք ոչ մի բան չառաջարկեցին այդ կապակցությամբ։ Նա հուսախաբ եղավ նրանց վերաբերմունքից և փոխեց իր քաղաքականությունը նրանց նկատմամբ։ Իսկ Հայ իշխանները լուր ուղարկեցին և (Կիլիկիա) հրավիրեցին Անտիոքի պրինցի (իշխան) որդի Ֆիլիպին և նրան պսակեցին Լևոն թագավորի դուստր Զաբելի (Իզաբել) հետ ու նրան հանձնեցին Կիլիկիայի (թագավորության) կառավարումը»[33]։

Այսպիսով, 1221 թ.[34] թագաժառանգ Զաբելը ամուսնացավ Անտիոքի իշխան Բոհեմունդի 16-ամյա որդի Ֆիլիպի հետ, որը, ըստ պայմանավորվածության, երկիրը պիտի կառավարեր՝ հետևելով հայկական կենցաղին և հայոց եկեղեցու ծեսերին։ Սակայն Ֆիլիպի գահակալությունը Կիլիկիայում երկար չի տևում, քանի որ, ինչպես այդ մասին վկայում են Սմբատ Սպարապետը և Կիրակոս Գանձակեցին, երկու տարի անց նա խախտում է վերոհիշյալ պայմանները և ոչ միայն մեկուսացնում է Կոստանդին պայլին ու Հայ իշխաններին, այլև իր հոր խորհրդով Անտիոք ուղարկում թագն

Լևոնի արքայի և զպղնձեան արքունական, զոր յերկնից ասուրս կանգնէր, և այլ գանձս ոսկւոյ և արծաթոյ[35]:

Ֆիլիպի երկու տարվա (1221—1223) գահակալության ու նրա՝ հայ իշխանների նկատմամբ վարած քաղաքականության մասին Աբու-լ Ֆարաջը մանրամասն տեղեկություններ է հաղորդում, որոնք լրացնում ու ամբողջացնում են հայ հեղինակների տված պատկերը։ Նա գրում է, որ Ֆիլիպը երկու տարի սանձարձակ քաղաքականություն է վարել հայ իշխանների նկատմամբ։ Ջանալով հայերին վերացնել ու նրանց տեղը եվրոպացիներ բերել, նա իր դեմ բորբոքեց հայերի զայրույթը, որոնք ոչնչացել էին նրան թագավորելու համար և այլևս չէին հանդուրժում նրա վարքը։ Հայ իշխանները խնդրեցին Կոստանդին պայլին՝ Ֆիլիպից իրենց ազատելու։ Վերջինս կատարում է նրանց կամքը և գիշերով ասպատակում է Ֆիլիպին, ձերբակալում, Թիլ Համդունից տեղափոխում Սիս և այնտեղ բանտարկում։ Նրա հայրը՝ Բոհեմոնդը փորձում է բանտարկությունից ազատել որդուն, և հայերին առաջարկում, որ իր որդուն ազատելու դեպքում ինքը կհրաժարվի Կիլիկիայի գահից։ Այդ հարցով հայերը բազում պատվիրակներ է ուղարկում, ապա ինքն է գալիս որդուն ազատելու, սակայն ապարդյուն։ Բոհեմոնդին հայտնում են, որ Ֆիլիպին տեղափոխել են Ամուդ ամրոցը, որտեղ նա թույն է խմել և մահացել[36]:
Հայ հեղինակների տեղեկությունները Ֆիլիպի գահակալության, նրա վարած քաղաքականության ու վախճանի մասին, ընդհանուր առմամբ, համընկնում են Աբու-լ Ֆարաջի հաղորդումների հետ։ Սակայն Սմբատ Սպարապետը և Կիրակոս Գանձակեցին վկայում են, որ Ֆիլիպը մահացել է Թիլ (Թիլ Համդուն) ամրոցում[37], և ոչ թե Ամուդ (Ամուտա) ամրոցում, ինչպես վկայում է ասորի հեղինակը։ Վերջինի տարբերակը ավելի հավանական է թվում մեզ։ Վ. Տեր-Ղևոնդյանը Ֆիլիպի մահվան տարեթիվը տեղադրում է 1224—1225 թթ. միջև[38], մինչդեռ ավելի հավանական է թվում 1226 թ., քանզի այդ տարեթիվը հաստատվում է նաև Իբն ալ-Ասիրի տվյալներով[39] (Հիջրայի 623 թ.—1226 թ.)։

Հայ պատմիչները 1224—1226 թթ. ռազմաքաղաքական իրադարձությունների մասին գրեթե ոչինչ չեն հաղորդում, մինչդեռ արաբալեզու հեղինակների տեղեկությունները նոր փաստեր են արձանագրում, որոնք վստահություն են ներշնչում։ Այսպես, Իբն ալ-Ասիրի վկայությամբ 1225 թ. (622) վերջերին Իկոնիայի սուլթան

Քայ Կուբադը Հյուսիսից Կիլիկիա է ներխուժում, չորս բերդ է գրավում, սակայն ձմեռը վրա հասնելուն պես, սարսափած Կիլիկիայից հետ է քաշվում և գնում է իր երկիրը[40]:-

Բացի դրանից, Իբն ալ-Ասիրը վկայում է, որ 623 թ. (1226 թ. հունվարի 3—1226 թ. դեկտեմբերի 2) Կիլիկիա է ներխուժում վերահիշյալ Ֆիլիպի հայր Բոհեմոնդը և պահանջում է հայ իշխաններից որդուն ազատ արձակել, սակայն վերջիններս մերժում են նրան: Բոհեմոնդը առաջ է շարժվում, պատերազմում է հայ իշխանների հետ, սակայն պարտվելով, վերադառնում է իր երկիրը[41]: Իբն ալ-Ասիրը մանրամասն տեղեկություններ է տալիս Անտիոքի իշխան Բոհեմոնդի և Իկոնիայի սուլթան Քայ Կուբադի (1219—1237) միջև ձեռք բերված համաձայնության մասին՝ Կիլիկիա ներխուժելու համար: Մյուս կողմից, Կիլիկիայի փաստական կառավարիչ Կոստանդին պայլը թշնամիների հարձակմանը դիմագրավելու համար կարողացել էր իր կողմը գրավել Հալեպի Այյուբյան սուլթաններին և նույնիսկ զորք ու զենք ստանալ նրանցից[42]:

1225—1226 թթ. Կոստանդինը կարողանում է դիմագրավել հյուսիսային և հարավային թշնամիների հարձակումներին, երկու անգամ հաղթանակ տանել Անտիոքի իշխան Բոհեմոնդի դեմ և իր կողմը գրավել Հայոց կաթողիկոս Կոստանդինին և խոշոր ավատատերերին[43]: Կիլիկիայում իրադրությունը փոխվել էր, Կոստանդին պայլը կրկին առաջ քաշեց Զաբելի համար փեսացու ընտրելու հարցը:

Իշխանական խորհուրդը երկրի կառավարիչ նշանակեց Կոստանդին պայլին (1224—1226), սակայն թագավորական գահը դատարկ, թափուր մնաց: Կոստանդինը առաջարկում է գահի համար թեկնածու ընտրելու հարցը: Հայոց կաթողիկոսի և հայ ամենամեծ ֆեոդալների համաձայնությամբ այս անգամ որոշվեց Զաբելին ամուսնացնել Կոստանդին պայլի որդի Հեթումի հետ և միաժամանակ նրան ճանաչել Կիլիկիայի թագավոր[44]: Զաբել թագուհին սկզբից չհամաձայնվեց ամուսնանալ Հեթումի հետ, քանզի վերջինս մանկահասակ պատանի էր: Այդ պատճառով նա ապստամբեց և մորը տեսնելու պատրվակով (մայրը Կիպրոսի խաչակիրներից էր) «Փախաւ ի Սելևկիա առ Ֆռանկսն»[45] Հյուրընկալների հզոր ասպետական օրդենի Պարզական ամրոցը: Սակայն զայրացած Զաբելի արարքից և խաչակիրների վերաբերմունքից, հայ իշխանները պահանջ

առիթ գտան պատժելու հյուրընկալների որդենին[40]: Ըստ հայ մատենագիրների, դեպքերի հետագա զարգացումը այսպես է ընթացել: Կոստանդինի գլխավորությամբ հայկական բանակը պաշարեց Սելևկիան: Հյուրընկալները չդիմադրեցին, հանձնեցին բերդը և թագուհուն[41]: Սակայն Իբն-ուլ Ասիրը 1225 թ. (հիջրայի 622 թ.) դեպքերի ընթացքը այլ կերպ է ներկայացնում. «Այդ ժամանակաընթացքում պարոն (տիրակալ) Կոստանդին պայլը պատվիրակ ուղարկեց մեր, նորին սրբություն պատրիարք Իգնատիոսի (1222—1252) ու հայոց կաթողիկոս Կոստանդինի մոտ այն խնդրանքով, որպեսզի երկուսով գնան Լևոն թագավորի դստեր (Զաբելի—Ա. Խ.) մոտ, Սելևկիայից նրան հետ բերեն, հաշտեցնեն ու նրա հետ համաձայնության գան՝ բոլոր քրիստոնյաներին օգուտ տալու նպատակով: Մինչդեռ Հռոմների երկրի (Փոքր Ասիա—Ա. Խ.) տեր սուլթան Ալա ալ-Դինը օգտագործեց նրանց (հայերի) մեջ եղած տարաձայնությունների առիթը և գրավեց Կիլիկիայի շատ բերդեր: Վերոհիշյալի համաձայն, երկու վեհափառները գնացին նրա մոտ և նրանից համառորեն պահանջեցին հետ գալ ու խորհուրդներ տվեցին նրան: Սակայն նա ոչ միայն չհամոզվեց, այլև մեղադրեց երկու վեհափառներին էլ, որ իրենք դաշնակցել են անմեղ արյան թափող գահերի (այսինքն՝ Կոստանդին պայլի—Ա. Խ.) հետ: Նրանք չկարողացան հակազդել թագուհու սաստերը, թողեցին նրան և վերադարձան առանց որևէ արդյունքի: Դրանից հետո, Կոստանդին պայլը անձամբ գնաց նրա մոտ և հյուրընկալների (ֆրեր) միաբաններին խնդրեց, որ նրան (թագուհուն—Ա. Խ.) հարկադրաբար հանձնեն իրենց: Նրանք պատասխանեցին. «Մեր անձը և ամրոցները քրիստոնյաների պաշտպաններն են, և մենք չենք կարող հանձնել թագուհուն մի կնոջ, որը մեզնից օգնություն է հայցել: Պայլը խորամանկություն գործեց և նրանցից գնեց ամրոցը իր ողջ ունեցվածքով, ապա նրանց հանել տվեց այնտեղից: Կարգադրելու և արգելելու իրավունքը (իշխանությունը) իր ձեռքը վերցնելով, բռնեց թագուհուն, հետ բերեց ու հարկադրաբար տեղափոխեց Տարսոն (Տարսուս): Այնուհետև նա հրավիրեց պատրիարքներին, եպիսկոպոսներին ու քահանաներին և նրա պսակադրությունը կատարեց իր որդի Հեթումի հետ: Հեթումին նրանք Կիլիկիայի թագավոր հռչակեցին՝ հունաց 1537 թվականի հունիսի 14-ի հոգեգալստյան (տոնի) կիրակի օրը (1226 թ.): Զաբել (Իզաբել) թագուհին տաս տարի շա-

րունակ թույլ չտվեց Հեթում թագավորին, որ իրեն հանձնի։ Դրանից հետո, նա համաձայնության եկավ նրա հետ ու նրա համար դղյակներ ու ամրոցներ ընծայաբերեց[48]։

Այսպիսով, 1226 թ. Հեթումի և Զաբելի ամուսնությամբ վերջացավ Հեթումյանների և Ռուբինյանների երկարատև պայքարը իշխանության համար, և այդ երկու իշխանական տները միավորվեցին, իշխանության գլուխ անցավ Հեթումյանների հարստությունը։ Երկրում իշխանությունն ամրապնդելու համար պետական բարձր պաշտոններն ու գործակալությունները կենտրոնացվեցին Հեթումյան տոհմի ներկայացուցիչների ձեռքում։ Հեթումի հայրը՝ Կոստանդինը, նշանակվեց թագավորահայր և ավագ պարոն։ Նրա եղբայրներին հանձնվեցին խոշոր գործակալությունները։ Սպարապետությունը տրվեց ավագ եղբորը՝ Սմբատին։ Սպառազինման և մատակարարման գծով բանակի հրամանատարությունը (մարաջախտ)՝ Լևոնին, միաժամանակ նրան տրվեց իշխանաց իշխանի կամ պարոնաց պարոնի բարձր պաշտոնը։ Օշինը նշանակվեց պայլ, Բարսեղը՝ Վանահայր, Սսի արքեպիսկոպոս և արքեպիսկոպոսյան աթոռի նախագահ[49]։

Մոնղոլական արշավանքներից և 1243 թ. Քյոսեդաղի՝ Չմանկատուկ քաղաքագյուղի մոտ մոնղոլական զորքերի և Իկոնիայի սելջուկյան սուլթանության զորքերի միջև տեղի ունեցած ճակատամարտում սելջուկների պարտությունից հետո Մերձավոր Արևելքում և Փոքր Ասիայում փոխվեց ուժերի հավասարակշռությունը և քաղաքական իրավիճակը։ Կիլիկյան հայկական պետության ղեկավարները մոնղոլների ասպատակություններից երկիրը զերծ պահելու նպատակով որոշեցին վերանայել իրենց քաղաքականությունը հարևան պետությունների հետ և որդեգրեցին սելջուկներին չօգնելու ու մոնղոլների հետ բարեկամություն հաստատելու ճիշտ քաղաքականությունը[50]։ Այդ կապակցությամբ մոնղոլների հետ բանակցելու և հայ-մոնղոլական դաշինք կնքելու համար հայկական պատվիրակությունը ուղարկվեց Կարակորում (Մոնղոլիա)՝ Գույուկ-խանի մոտ։ Այդ պատվիրակության ուղևորության ու նրա վարած բանակցությունների արդյունքների մասին արժեքավոր տեղեկություններ է տալիս Աբու-լ Ֆարաջը իր աշխարհիկ պատմության թե՛ ասորական և թե՛ արաբական խմբագրությունների մեջ։ Ըստ Աբու-լ Ֆարաջի ասորական ժամանակագրության, հայ պատվիրակությունը

Մոնղոլիա է մեկնել հիջրայի 644 թ. (1246 թ.) մոնղոլական նոր ղաղանի ընտրության արարողությանը մասնակցելու և նրա հետ քաղաքական հարաբերություններ հաստատելու համար: Հայկական պատվիրակությունը, ըստ Աբու-լ Ֆարաջի, գլխավորում էր Հեթում (Ա) թագավորը: Կարակորում էին եկել նաև մի շարք այլ երկրների պատվիրակություններ, այդ թվում Վրաստանից՝ «Մեծ և Փոքր Դավիթները»: Մոնղոլական պետության նոր ղաղանը ընտրվեց Գույուկ-խանը, որը, իրավիճակը հանդարտվելուց հետո սկսեց լավ վերաբերվել [այլ իշխանավորների հետ—Ա. Խ.]: Այնուհետև 645/1247/8 թթ. Գույուկ-խանը որպես Ռում երկրի (Փոքր Ասիա), Վրաստանի (Գուրջ), Մոսուլի, Ասորիքի և Կիլիկիայի ընդհանուր կառավարիչ նշանակեց Իլչիգիդային[51]: Ապա Հեթում թագավորին, վրացիներին և ֆրանկներին պատիվ անելով ճանապարհեց դեպի իրենց երկրները[52]:

Ուշագրավ է, որ նույն այս դեպքերի մասին Աբու-լ Ֆարաջը հաղորդում է նաև իր արաբական ժամանակագրության մեջ, սակայն այստեղ նա այլ տեղեկություններ է տալիս հայ պատվիրակության դերակատարության և կազմի մասին: Այսպես, նա հաղորդում է, որ 646/1246 թ. գարնանը մոնղոլների համաժողովին մասնակցելու համար հավաքվել էին, ինչպես խանի (կաան) որդիները, թոռները և մոնղոլ ամիրաները, այնպես էլ ոչ-մոնղոլ «մեծամեծները» (իշխանավորները՝ Միջին Ասիայից (Մավերաննահր), Թուրքեստանից, Խորասանից, Իրաքից, Լուրիստանից, Ադրբեջանից (Ազարբայջան), Շիրվանից, Փոքր Ասիայից (Ռում), Կիլիկյան Հայաստանից (ալ-Արման), ընդ որում, Կիլիկյան Հայաստանից նա նշում է, որ մասնակցում էր «Հեթում (Հաթիմ) թագավորի եղբայր Գունդստաբլը», իսկ Վրաստանից (Գուրջիստան) «Մեծ և Փոքր Դավիթները»[53]:

Աբու-լ Ֆարաջի երկու ժամանակագրությունների համեմատությունը ցույց է տալիս, որ հայկական պատվիրակությունը Մոնղոլիա (Կարակորում) է մեկնել 646/1246 թ., ոչ թե Հեթում թագավորի, այլ նրա եղբայր՝ Սմբատ Սպարապետի (Գունդստաբլ) գլխավորությամբ: Ընդ որում, հայ պատվիրակության այս առաջին ուղևորությունը հայկական աղբյուրները թվագրում են ոչ թե 1246, այլ 1248 թ.[54]: Ինչպես երևում է, Սմբատ Սպարապետի գլխավորած պատվիրակությունը Մոնղոլիայում նախապատրաստել է Հեթում Ա

թագավորի հետագա այցելությունը, համաձայնեցնել է փոխադարձ հարաբերությունները, ճշտել Կիլիկիայից պահանջված հարկի չափերը և բարեկամության դաշինք կնքել[55]: Դրա փոխարեն մոնղոլները խոստացել են ռազմական օգնություն ցույց տալ Կիլիկիային՝ Իկոնիայի սուլթանության հարձակումների ժամանակ և, ինչպես վկայում է Աբու-լ Ֆարաջը, Հեթում թագավորի եղբայրը (Սմբատ Սպարապետը) Գույուկ-խանից ստացավ «Դաշինքի և անվտանգության յառլիղ»[56]: Այս փաստը հաստատվում է նաև Գրիգոր Ակներցու (Մաղաքիա Աբեղայի) տվյալներով՝ «Ալթամղա յառլախ և փայզայա ոսկիա»[57]:

Աբու-լ Ֆարաջի արաբական ժամանակագրությունը, ըստ էության, խոսում է 1246 թ. հայկական պատվիրակության առաջին այցելության մասին՝ Սմբատ Սպարապետի գլխավորությամբ[58], մինչդեռ նրա ասորական ժամանակագրությունը խոսում է 2-րդ հայկական պատվիրակության՝ Մոնղոլիա կատարած այցելության մասին Հեթում Ա թագավորի գլխավորությամբ, որի մասին ասորի պատմիչը մանրամասն տեղեկություններ է հաղորդում:

Ժամանակակիցները, հիմք ընդունելով հայ պատմիչների տեղեկությունները Հեթում Ա թագավորի՝ մոնղոլական պետության մայրաքաղաք Կարակորում կատարած այցի մասին, այդ ուղևորությունը թվագրում են 1254 թ.[59]: Սակայն Աբու-լ Ֆարաջի տվյալները թույլ են տալիս վերանայելու Հեթում Ա թագավորի այցելության տարեթիվը: Այս կարևոր այցելության մասին ասորի մատենագիրը տեղեկություններ է տալիս թե՛ ասորական և թե՛ արաբական ժամանակագրությունների մեջ: Ըստ Աբու-լ Ֆարաջի արաբական ժամանակագրության, Հեթում Ա թագավորը Մոնղոլիա է մեկնել Բաթու-խանի միջոցով ստացած հրավերով, 650 [1252 թ. մարտի 14—1253 թ. մարտի 3—սելևկյան 1563 թ.] հիջրաթի տարվա զատիկի հաղորդությունն անձամբ հետո և ճանապարհ է ընկել Խաչվերացի տոնի ուրբաթ օրը՝ Սիս քաղաքից[60]: Նույն այս տեղեկությունը ամենայն ճշգրտությամբ բերվում է նաև ասորական ժամանակագրության մեջ[61]:

Հայ պատվիրակության առաջին այցը Սմբատ Սպարապետի գլխավորությամբ, ինչպես նշվեց, կատարվել է 1246 թ., որի ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել Հեթում Ա-ի Կարակորում կատարելիք այցելության մասին: Սակայն այս այցելու-

թյունը ձգձգվել է, ինչպես արդարացիորեն նկատել են հետազոտող-ները, ոչ միայն այն պատճառով, որ Իկոնիայի սուլթանը հարձակում է գործել Կիլիկիայի վրա, այլ որ XIII դարի 50-ական թթ. սկզբին Կարակորումում պայքար էր ծավալվել գահի և իշխանության համար մոնղոլական տարբեր տոհմակալների միջև[52]: Այդ պայքարը վերջացավ 1251 թ. հուլիսի 3-ին մոնղոլական կուրուլթայում (համաժողովում) Մանգուին (Մոնգե, Մենգու) հռչակելով մեծ խան (կաան) Մոնղոլիայում և Հյուսիսային Չինաստանում[53]: Բացի դրանից, Չինգիզ խանի որդի Տուլուի որդի Մանգու-խանը, Գույուկի մահից (1249 թ.) հետո դարձավ Չինգիզյանների նոր ճյուղի՝ Մանգուի ճյուղի կամ գիծատոհմի հիմնադիրը[54]: Դրա հետ միասին, Հեթում Ա թագավորի այցի ուշացման պատճառներից է նաև Զաբել Թագուհու մահը, որը տեղի է ունեցել հենց 1252 թ. (հունվար), ինչպես վկայում են հայկական աղբյուրները[55], և ոչ թե 1251 թ. հունվար ամսին (հիջրայի 648 և սելևկյան տոմարի 1562 թ.), ինչպես այդ մասին սրբաշխիորեն վկայում է Աբու-լ Ֆարաջը[56]:

Ուշագրավ են նաև Աբու-լ Ֆարաջի տեղեկությունները Հեթում Ա թագավորի այցելության ուղերթի և գաղտնիության հանգամանքի մասին: Ըստ նրա, հայոց թագավորը իր ուղևորությունը կատարել է բուն Հայաստանի վրայով, ընդ որում, նա գաղտնի է համփորդել՝ ծառայի կերպարանքով զգեստափոխված, ուղեհանգակի և թիկնապահ ոչնչական ուղեկցությամբ, անցել է Արևմտյան Հայաստանի մի շարք քաղաքներով (Կեսարիա, Սեբաստիա, Երզնկա և այլն) մինչև Վրաստանի սահմանները: Այդ ընթացքում հայ թագավորը զգուշացել է Իկոնիայի սուլթանների թշնամական վերաբերմունքից և գավառապետություններից, սակայն Վրաստանի սահմանն անցնելուն պես բացահայտել է իր ինքնությունը: Նրա ուղևորությունը տևում է երկուսուկես տարի[57] (այսինքն՝ Սիս մայրաքաղաքից մեկնելու օրվանից մինչև վերադարձը Կիլիկիա): Այս բոլորի մասին իրեն պատմել է հենց Հեթում թագավորը՝ Սսում կայացած հանդիպման ժամանակ, խոստովանում է Աբու-լ Ֆարաջը[58]:

Հեթում Ա թագավորի՝ դեպի Մոնղոլիա կատարած ուղևորությունը Աբու-լ Ֆարաջը անդրադառնում է նաև այլ կապակցությամբ: Այսպես, 652(1255 թ.) դեպքերի մեջ նա հաղորդում է. «Այս տարում (հիջրայի 653, հռոմեական 1566 և քրիստոնեական 1255) Բաչջու Նոյինի (Նոյոն) ուղեկցությամբ Կիլիկիա ժամանեց Հեթում թա-

գավորը, որը վերադարձավ Մեծ խանին ծառայություն մատուցելուց (այցելությունից) և իր Հայրենիքը հասավ սեպտեմբերի 1-ի սուրբ օրը ու քրիստոնյա ժողովուրդը մեծ ուրախություն ապրեց[69]: Աբու-լ Ֆարաջի այս հաղորդումը հաստատվում է նաև Կիրակոս Գանձակեցու տվյալներով, որի համաձայն, Հեթում թագավորը Հայաստան (Կիլիկիա) է հասել Հայոց թվականի 704 (1255) թվում[70]: Այսպիսով, Հեթում թագավորը Կիլիկիայից մեկնել է ≈1252 թ. խաչվերացի տոնի օրը (մարտ ամսին) և Կիլիկիա է վերադարձել 1255 թ. սեպտեմբերի 1-ին, այսինքն նրա ուղևորությունը տևել է երեքուկես տարի, ինչպես այդ մասին վկայում է սույն հեղինակը:

Խոսելով Հեթում Ա թագավորի՝ Մոնղոլիա գնացող պատվիրակության կազմի մասին, Աբու-լ Ֆարաջը հիշատակում է, մասնավորապես, հայազգի Բարսեղ Վանականին, որը եղել է հայերի գնապանը (բանագնացը) մոնղոլների մոտ[71]: Այս Բարսեղ Վանական գնապանի մասնակցությունը Հեթում Ա-ի պատվիրակության մեջ հաստատվում է նաև Կիրակոս Գանձակեցու և Սմբատ Սպարապետի տվյալներով, որոնք վկայում են, որ Բարսեղ Վանականը եղել է Մանգու-խանի մոտ գնացող պատվիրակության մեջ[72]: Սակայն վերադառնալու ճանապարհին Հեթում Ա թագավորը նրան ուղարկում է Բաթու-խանի մոտ, որպեսզի նրան ցույց տա Մանգու-խանի տված գիրը (փաստաթուղթը) և հրամանը, որ վերջինս նոր հրովարտակ գրի Մանգու-խանի տվածին համապատասխան[73]: Աբու-լ Ֆարաջի վկայությամբ, Բարսեղ գնապանը (վանականը) սպանվել է 1257 թ. Իկոնիայի սուլթանության մոնղոլական կառավարիչ Մուին ադ-դին Փարվանայի սադրանքի հետևանքով[74]:

Հեթում թագավորը Կիլիկիա վերադառնալիս Թալասում հանդիպում է Մանգու-խանի եղբայր Հուլավուին, որը նշանակված էր մոնղոլական խանության արևմտյան տերությունների խան և Մերձավոր Արևելքում գտնվող մոնղոլական զորքերի հրամանատար ու այդ երկրների կառավարիչ, և նրան հանձնում Մանգու-խանի ուղարկած գրությունները[75]:

1258 թ. Բաղդադի գրավումից և Աբբասյան խալիֆայության կործանումից հետո Հուլավուն (1256—1265) ձեռնարկում է Միջագետքի մյուս քաղաքների և Սիրիայի գրավումը: Մոնղոլները նպատակ ունեին Մամլուքներից խլել Սիրիան և Եգիպտոսը և 1259—1260 թթ. այդ ուղղությամբ կազմակերպեցին մի շարք արշավանք-

ներ, որոնք անհաղթողության մասնակցին[76]: Հուլավուն սկսեց մոնղոլական մեծ խանի անունից հրապարակել ամբողջ Իրանը, Իրաքը, Կովկասը և Փոքր Ասիան և ընդունեց «իլ-խան», այսինքն՝ «Մեծ խանին ենթարկվող, հնազանդվող» տիտղոսը և դարձավ Իրանի մոնղոլական պետության՝ իլխանության հիմնադիրը[77]:

Մասնագիտական գրականության մեջ տիրապետում է այն կարծիքը, որ Հեթում Ա թագավորի մասնակցությունը մոնղոլական նվաճումներին սկսվում է 1253 թ.[78]: Ըստ որում, հայկական աղբյուրները նշում են, որ Հեթում Ա թագավորը մասնակցել է Սիրիայի նվաճմանը Հուլավուի առաջարկությամբ՝ «սուրբ երկիրը ազատելու համար»[79]: Սակայն հայկական զորագնդերի հետագա ռազմական գործողությունների մասին հայ պատմիչները լռում են:

Հալեպի գրավման մասին մանրամասն տեղեկություններ են տալիս թե՛ Աբու-լ Ֆարաջը և թե՛ ժամանակակից հեղինակները: Ըստ Աբու-լ Ֆարաջի, Հուլավուն իր զորքերի մի մասը ուղարկում է Սիրիայի տարբեր շրջաններ ասպատակելու, իսկ ինքը անձամբ ձեռնարկում է Հալեպի պաշարումը և գրավումը: Մոնղոլական այս գրոհի ժամանակ Հալեպում էր գտնվում հենց ինքը՝ Աբու-լ Ֆարաջը, որը շատ դեպքերի ականատես է եղել: Նա վկայում է, որ մոնղոլական զորքը Հալեպ ներխուժեց սաֆար ամսի 9-ին 658/1260 թ. հունվարի 23-ին, կիրակի օրը և ավելի շատ մարդ սրի քաշեց, քան Բաղդադի գրավման ժամանակ[80]: Նա գրում է. «Այդ ժամանակ նվաստս Հալեպի (ասորիների—Ա. Խ.) մետրապոլիտն էի: Վախից դրդված դուրս եկա և գնացի Հուլավուին հպատակություն հայտնելու, բայց բանտարկվեցի նույն ամրոցում: Հալեպի մեր (քրիստոնյա) ժողովուրդը մնաց առանց հովվապետի, նրանց մեծ մասը ապաստան գտավ Հալեպի հույների եկեղեցում: Թաթարները (մոնղոլները—Ա. Խ.) հարձակվեցին նրանց վրա, մի մասին կոտորեցին, իսկ մյուսին՝ գերեվարեցին: (Գերեվարած) քրիստոնյաներին փրկելու համար նախաձեռնություն ցուցաբերեց Մար Կոստանդինի (Հայոց կաթողիկոսի—Ա. Խ.) եղբորորդի, հայազգի Թոռոս քահանան, որին միացավ նաև Գեորգ Վանականը: Նրանք միասին գնացին մոնղոլների մոտ ու գերությունից ազատեցին կենդանի մնացածներին ու առաջնորդեցին նրանց դեպի մեր եկեղեցին»[81]: Հալեպի գրավման ժամանակ մոնղոլների կողմից սրի է քաշվել 50 հազար բնակչություն[82], որոնց մեջ զգալի թիվ են կազմել նաև քրիստոնյաները:

Վարդան պատմիչը վկայում է, որ Հեթում թագավորի հետ էր գը-
նացել նաև Կոստանդին կաթողիկոսը[83]: Սակայն մահմեդական հե-
ղինակները լռում են Հեթում թագավորի մասնակցության մասին
Հալեպի ռազմական գործողություններին, հանգամանք, որը հա-
զիվ թե վրիպեր ժամանակակից մահմեդական պատմիչների ուշա-
դրությունից: Այնուհանդերձ, արաբ հետազոտողները գտնում են,
որ Հեթում թագավորը, ելնելով հայ-մոնղոլական դաշինքի պարտա-
վորություններից, հյուսիսի՝ անցումների և հարավի՝ ճամփուղիների
վտանգից, իր թագավորությունը պաշտպանելու համար միացել էր
Հուլավուին[84]: Կարելի է ենթադրել, որ Հեթում թագավորը որպես
մոնղոլների դաշնակից անձամբ իր զորագնդով չի մասնակցել ռազ-
մական գործողություններին, բայց օգնել է նրանց անասնամթերքով,
ձիերով ու հացահատիկով[85]:

Հալեպի գրավումից հետո Հուլավուի զորքերը շարժվում են դե-
պի Հարիմ ամրոցը, որի բնակիչները մոնղոլական սարսափից զըր-
կված ապաստան են գտնում բերդում և որոշում են կամավոր չը-
հանձնվել: Սակայն Հուլավուն կարգի մեջ մտնելով ամրոցի կա-
ռավարիչ Ֆախր ադ-Դինի հետ, համաձայնության եկավ, որ եթե
բնակիչները կամավոր բերդից դուրս գան, ապա մոնղոլ տիրակալը
ոչ մեկին ձեռք չի տա, և կառավարիչը երդում տվեց բնակիչներին
այդ մասին: Մոնղոլ տիրակալը խաբեությամբ բացել տվեց ամրո-
ցի դարպասները, իր երդումը չհարգեց, ու մոնղոլական զորքը, ինչ-
պես հաղորդում է Աբու-լ Ֆարաջը, սկսեց առանց խտրականության
սրի քաշել բոլորին, այդ զանգվածային կոտորածից փրկվեց միայն
հայազգի մեկ դարբնագործ մարդ[86]:

Մոնղոլական տիրակալ Հուլավուն մտադիր էր գրավել նաև
Դամասկոսը: Սակայն Դամասկոսի Այյուբյան սուլթան ալ-Նասիրը
(1237—1260) որոշեց քաղաքը առանց արյունահեղության հանձնել
մոնղոլներին: Այդ մասին բանակցությունները պայմանավորվեցին, սա-
կայն Հուլավուն անձամբ Դամասկոս չներկայացավ, այլ հատուկ
հրովարտակով (ֆերման) Դամասկոսում պաշտոնյաներ նշանակեց
(քաղաքի կառավարիչ, կադի և այլն): Դամասկոսի հանձնումը
մոնղոլական ներկայացուցիչներին տեղի է ունեցել 658 թ. ջումա-
դա առաջին ամսվա կեսին (1260 թ. ապրիլի 29-ին)[87]:

Հուլավուն, շարունակելով ամբողջ Սիրիայի ու Պաղեստինի նվա-
ճումը և սահմանելով իր եղբոր՝ Մանգու-խանի մահվան (655)

1257 թ.) լուրը, շտապում է Կարակորում։ Նա Սիրիայում 10 հազար զորք է[28] թողնում, հրամանատարությունը, ինչպես նաև Հալեպում իրեն փոխարինելու պաշտոնում նշանակելով Քիթբուղա զորավարին, վերջինիս շնորհելով նոյին (նոյոն) տիտղոսը։ Դամասկոսում փոխանորդ է նշանակվում հրամանատար Բիդրան[29]։

Տեղեկանալով Հուլավուի հեռանալու մասին, Եգիպտոսի մամլուքյան սուլթան ալ-Մուզաֆֆար Սայֆ ալ-Դին Կութուզը (1259—1260) որոշում է հակահարված տալ մոնղոլական զորքերին, որոնք գրավել էին Սիրիայի մի շարք քաղաքներ և պաղեստինյան երկիրը։ Մամլուքյան առաջապահ զորքը դուրս է գալիս մոնղոլական ջոկատների դեմ՝ Պաղեստինի Բեյսան ու Նաբլուս քաղաքների միջև՝ Այն Ջալութ կոչված վայրում (Նազարեթի մոտ), և նրանց միջև առաջին ճակատամարտը տեղի է ունենում 658 ռամադան ամսի 25-ին (1260 թ. սեպտեմբերի 3-ին)։ Մոնղոլական զորքը պարտություն է կրում, նրա հրամանատար Քիթբուղան սպանվում է։ Երկու օր հետո զորքերի միջև տեղի է ունենում երկրորդ բախումը, սակայն այս անգամ էլ մոնղոլական զորքը խայտառակ պարտություն է կրում, նրանց ամենամեծները (հրամանատարները) սպանվում են 658 թ. ռամադանի 27-ին (1260 թ. սեպտեմբերի 5-ին)։ Մոնղոլ զորավար Քիթբուղայի գլուխը տարվում է Կահիրե՝ հաղթանակի մասին ավետելու[30]։ Լսելով մոնղոլական զորքի պարտության մասին, Հուլավուն վերադառնում է Սիրիա։ Նրա հետագա ռազմաքաղաքական գործողությունները նկարագրվում են Աբու-լ Ֆարաջի թե՛ արաբական և թե՛ ասորական ժամանակագրությունների մեջ[31]։

XIII դարի 60-ական թվականների սկզբից մամլուքները հասել էին քաղաքական ու տնտեսական հզորության գագաթնակետին։ Նրանք փաստորեն կասեցրեցին մոնղոլների հետագա առաջխաղացումը Մերձավոր Արևելքում և կոտրեցին իսլամական աշխարհում մոնղոլների անպարտելիության նկատմամբ առկա համընդհանուր հավատը։ Բացի դրանից, Իրանի իլխանների նկատմամբ մահմեդականների ընդհանուր ատելությունը նպաստեց մամլուքների և Ոսկե Հորդայի քաղաքական և առևտրական դաշինքի կայացմանը։ Իսկ իլխանները իրենց հերթին փորձեցին կազմակերպել հակամահմեդական դաշինք և իրենց կողմը գրավել Եվրոպայի քրիստոնեական տերություններին, Լևանտի (Մերձավոր Արևելք) ծովափնյա քաղաքների խաչակիրներին և Կիլիկիայի թագավորներին[32]։ Ահա

այս նոր ռազմաքաղաքական իրավիճակում Կիլիկիայի հայկական թագավորությունը շարունակում էր մնալ մոնղոլների գլխավոր պատնեշը Եգիպտոսի ու Սիրիայի մամլուքների դեմ պայքարում։ Եթե մինչև Բաղդադի գրավումը (1258) ռազմաքաղաքական գերակշռությունը մոնղոլների կողմն էր, իսկ Կիլիկյան թագավորության արտաքին քաղաքականության դիրքորոշումը ելնում էր ուժերի իրական վիճակի հաշվառումից, ապա 1262 թ. հետո այդ քաղաքականությունը, ինչպես արդարացիորեն նկատել է պատմաբան Ս. Բոռնազյանը, հենվում էր խարխուլ պատվանդանի վրա, այսինքն մոնղոլների վրա, որովհետև 1262 թ. իլխանությունը ստիպված էր 15 տարի շարունակ պատերազմել Ոսկե Հորդայի դեմ, որը դարձել էր Եգիպտոսի մամլուքների դաշնակիցը և սերտ հարաբերություններ հաստատել նրանց հետ[23]:

Եվրոպացի հետազոտողների մոտ իշխում է այն տեսակետը, որ Կիլիկիայի հայկական պետությունը մի նահանգ էր, որը մտնում էր Իրանի մոնղոլական իշխանության կազմի մեջ[24]։ Արաբ հետազոտողները ավելի մեղմ տեսակետ են առաջ քաշում։ Մոնղոլական ժամանակաշրջանի հայտնի հետազոտողներ Ջ. Աշուրը և Լ. Ջալյաթը գտնում են, որ Կիլիկիայի հայկական թագավորությունը 1252 թ. հայ-մոնղոլական դաշինքի բերումով դարձել էր մոնղոլական իշխանության ենթակա, այլ խոսքով, նրա ազդեցության ոլորտում գտնվող պետություն։ Կիլիկիայի Հեթում Ա թագավորը միացել էր մոնղոլ տիրակալ Հուլավուին, հուսալով՝ Իկոնիայի սելջուկյան և հատկապես՝ Եգիպտոսի ու Սիրիայի մամլուքյան սուլթաններից իր պետությունը պաշտպանելու նպատակով[25]:

Կիլիկիայի հայկական պետության միջազգային կարգավիճակի մասին վերոհիշյալ տեսակետները ոչ միայն հիմնավորված չեն, այլև չեն դիմանում գիտական քննադատության։ Կիլիկիայի հայկական պետությունը, անշուշտ չի մտել Իրանի մոնղոլական պետության՝ իլխանության կազմի մեջ և մնացել է ինքնուրույն և անկախ պետություն[26]: Սակայն XIII դարի 60-ական թվականներից ուժեղանում է մոնղոլների քաղաքական ազդեցությունը Կիլիկիայի պետության արտաքին քաղաքականության հետագա ընթացքի վրա, քաղաքականություն, որը արդեն չէր հենվում Մերձավոր ու Միջին Արևելքի ռազմաքաղաքական ուժերի իրական վիճակի հաշվառումից։

Խոսելով Հուլավուի 10-ամյա գահակալության ժամանակ Իլխանական պետության մեջ մտնող երկրների մասին, միջնադարյան պատմաբանը հաղորդակցիները ներկայացնում են մի ընդարձակ ցանկ՝ Խորասանը, Իրանական Իրաքը (Ջիբալ), Արաբական Իրաքը, Ֆարս, Քերմանը, Խուզիստանը, Դիար-Բաքրը, Ռում երկիրը (Փոքր Ասիա) և Կովկասյան երկրները՝ բուն Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը (Շիրվան և Ատրպատական)[17]։ Սակայն Կիլիկիայի հայոց պետությունը չի մտնում այդ ցանկի մեջ, այսինքն՝ Իլխանության մեջ մտնող երկրների մեջ չի հիշատակվում, հետևաբար, միջնադարյան արաբ պատմիչները Կիլիկյան պետությունը դիտել են որպես ինքնուրույն և անկախ պետություն։

Կիլիկիայի՝ 1260-ական թվականների և հետագա ժամանակաշրջանի ռազմաքաղաքական գծագիրը նոր փուլ են կազմում, որոնց ընկալումը նոր ուսումնասիրության է պահանջում և դուրս է գալիս սույն հոդվածի շրջանակներից։

ALEXANDER KHATCHATRIAN

THE NARRATIVE WORKS OF ABU-L FARAJ IBN AL-IBRI (BAR HEBRAEUS) AS A SOURCE OF THE HISTORY OF CILICIAN ARMENIA (XIII CENTURY)

The investigation of Abu-l Faraj Gregory Ibn al-Ibri's reports in his Syriac «Tarikh al-Zaman» and Arabic «Tarikh mukhtasar al-duwal» chronographies, exposes some not very known or unknown facts about military and political activities of Costantin the Regent after the death of Levon II in 1219 A. D., who ruled for about ten years.

According to Ibn al-Ibri, the internal struggle for the Armenian throne between different princes and kings (Armenian, Greek, Latin etc) had find its end in the year 1226 A. D. by the coronation of Hetum I (1226—1270) and his marriage to Zabel (1226).

The analysis of Ibn al-Ibri's reports allows to revise the date of the first Armenian delegation's journey to Mongolia (1246), headed by Smbat Sparapet (Gundstable) and illustrate the activities of the Armenian ambassador Barsegh the Monk in Mongolia. The second journey of the Armenian delegation to Mongolia (Karakorum), headed by the king Hetum I, was dated to 1252—1255 A. D.

In this paper the author examines the problem of the participation of king Hetum's Armenian troops in the Mongol conquest of Syria in 1259—1260 A. D. as well as the political status of Armenian kingdom of Cilicia with the Mongols (Ilkhans) during the reign of Hetum I, regarding it as a sovereign and independent state.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] *Տե՛ս* **G. Graf**, Geschichte der christlichen arabischen Literatur, Bd. 5, Vatican City, 1953—1955, **C. Brockelmann**, Die Syrische und Christlich-arabische Literatur, Leipzig, 1907:

[2] **Х. А. Р. Гибб**, Мусульманская историография.—Арабская литература. Классический период. М., 1960, с. 138 (далее: **Гибб**, Историографии).

[3] *Նրա մասին տե՛ս* **C. Brockelmann**, «Barhebräus».—EI[1], vol. I, Leyden—Paris, 1913, S. 684, **J. B. Segal**, «Ibn al-Ibri».—EI[2], vol. 2, Leiden—London, 1979, p. 804, **G. P. Behnam**, Bar Hebraeus's Biography and poems, Aleppo, 1984 (*այսուհետև՝* Behnam, Bar Hebraeus), p. 10, I. **Barsoum**, History of Syriac Sciences and Literature, with introduction by G. Y. Ibrahim, Aleppo, Syria, 1987 (*այսուհետև՝* Barsoum, History), p. 413; **Р. Гусейнов**, Сирийские источники), с. 55; **И. Ю. Крачковский**, Арабская географическая литература.—Избранные сочинения, т. 4, М.—Л., 1957, с. 373—374; **Н. В. Пигулевская**, Культура сирийцев в средние века, М., 1979, с. 169.

[4] Ibn al-Ibri Gregorius, **Tarikh Mukhtasar** al-duwal, edited by A. Salihani, Beyrouth, 1958 (*այսուհետև՝* Tarikh Mukhtasar), **P. J. Segal** «Ibn al-Ibri», p. 804, **Behnam**, Bar Hebraeus, p. 14—15:

[5] **Abu al-Farkj Jamal al-Din Ibn al-Ibri**, Tarih al-Zaman, d'apres la traduction arabe du p. Ishaq Armaleh, introduction du F. Jean-Maurice Fiey, Beyrouth, 1986 (*այսուհետև՝* Tarih al-Zaman), p. 297, Tarikh Mukhtasar, p. D, Behnam, Bar Hebraeus, p. 21—22, **Brockelmann**. «Barhebräus», S. 674, **Гусейнов**, Сирийские источники, с. 55.

[6] *[illegible] (Արաբերեն) [illegible] 630 թ.: [illegible] ներ Լ. Հ. Տեր-Պետրոսյանի, Երևան, 1982, էջ 234 (ծան. 489):*

[7] **Tarih al-Zaman**, I. 12, **Tarikh Mukhtasar**, p. D-H, **Behnam**, Bar Hebraeus, p. 21—35, **Segal**, Ibn al-Ibri, p. 804—805, **Brockelmann**, Barhebräus, S. 674—675; **Гусейнов**, Сирийские источники, с. 55—56.

[8] Gregorii Abul Pharagii sive Barhebraei Chronicon syriacum e codiciis Bodleianis descripsit maximam partem vertit notisque illustravit, P. J. Bruns., edidit ex parte vertit notasque adiecit **G. G. Kirsch**, Lipsiae, 1789:

[9] Gregorii Barhebraei, Chronicon ecclesiasticum. Quode codice musei Britannici descriptum conjuncta opera ediderunt, latinitate donarunt annotationibusque theologicis, historicis, geographicis et archeologicis illustrarunt I. B. Abbeloos et T. I. Lamy. Sectio prima, t. I, Lovanii, 1782, t. II, Parisiis—Lovanii, 1874, Sectio secunda, t. III, Parisiis—Lovanii, 1877:

[10] Ibn al-Ibri Grigorius, al-Tarikh al-Kanasi. Naqalahu ila al-arabiya Bikhtisar al-abb Ishaq Armaleh, Beyrouth,—«al-Mashriq», mujallad 21 (1923), ss. 494—507, 589—599, 660—671, mujallad 22 (1924), ss. 182—192, 272—281, 364—372, 417—427, 519—527, 604—614:

[11] Tarih al-Zaman, p. 10 (arabic texte p. 18):

[12] Historia compendiosa dynastiarum authore Gregorio Abul-Pharajio, Malatiensi Medico ... Arabice edita latine versa ab Eduardo Pocockio, Oxoniae (Oxford), 1663, նույնի՝ Specimen Historiae Arabum, sive Gregorii Abul Farajii .. de origine et motibus Arabum ... Opera et studio Edvardi Pocockii, Oxoniae, 1650:

[13] Historia Saracenica ... Arabice olim exarata à Georgio Elmacino ... et Latine reddita opera et studio Thomae Erpenii, Lugduni Batavorum (Leiden), 1625:

[14] Jirji Zaidan, Tarikh adab al-lughati al-arabiyati, al-juz' al-salis al-Qahira, Dar al-Hilal, s. 215; В. В. Бартольд, Туркестан в эпоху монгольского нашествия.—Сочинения, т. I, М., 1963, с. 46.

[15] Historia compendiosa dynastiarum authore Gregorio Abul Pharajio.., ed. E. Pocock, Oxford, 1663; Հմմտ. Tarih al-Zaman, p. 7, 18—19, Tarikh Mukhtasar, p. W, Segal, «Ibn al-Ibri», p. 805:

[16] Tarih al-Zaman, p. 10 (arabic texte p. 19), Հմմտ. Tarikh Mukhtasar, p. W:

[17] Das Gregorius Abulfaradsch kurze Geschichte der Dynastien oder Auszuder allgemeinen Weltgeschichte besonders der Geschichte der Chalifen und Mongolen über von G. L. Bauer, Bd. 1—2, Leipzig, 1783—1785:

[18] Grigorius al-Malati Ibn al-Ibri, Tarikh Mukhtasar al-duwal, edited and annotated by Anton Salihani, first edition, Beirouth, 1890 (այսուհետև՝ Tarikh Mukhtasar).

[19] Grigorius al-Malati Ibn al-Ibri, Tarikh Mukhtasar al-duwal, edited and annotated by Anton Salihani, Second edition, Beirouth, 1958:

[20] Grigorius al-Malati Ibn al-Ibri, Tarikh Mukhtasar al-duwal, edited and annotated by Anton Salihani, Third edition, Beirout, 1983:

[21] Tarih al-Zaman, p. 8, 13:

[22] Նույն տեղում, էջ 14։

[23] Tarih al-Zaman, p. 258, Հմմտ. Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, Երևան, 1976 (այսուհետև՝ Հայ ժողովրդի պատմություն, 3), էջ 658։

[24] Tarih al-Zaman, p. 258—262:

[25] Նույն տեղում, էջ 258, 262։

[26] Անդրկովկասի ... Միջին Արևելքի ... (1100—1270) և Իրանի (1090—1256) ... (ուսումնասիրություն), Երևան, ...

գահի ժառանգական [illegible] համար, իսկ թե, [illegible] էին սելջուկ [illegible]՝ [illegible] [illegible]։ [illegible] [illegible] (թեմարչեր) [illegible] է [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] (Կոնիայի [illegible]), [illegible] [illegible] [illegible] [illegible] (տե՛ս К. Э. Босворт, Мусульманские династии. Справочник по хронологии и генеалогии. Пер. с англ. и прим. П. А. Грязневича, М., 1971 (այսուհետև՝ Босворт, Мусульманские династии) с. 176):

27 Միքայել Ասորի, Ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1871 (այսուհետև՝ Միքայել Ասորի), էջ 50, Հմմտ. Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, Վենետիկ, 1956 (այսուհետև՝ Սմբատ Սպարապետ, 1956), էջ 223։

28 Tarih al-Zaman, p. 262:

29 Վ. Ա. Տեր-Ղևոնդյան, Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական երկրները 1145—1226 թթ., Երևան, 1994 (այսուհետև՝ Տեր-Ղևոնդյան, Կիլիկյան Հայաստանը), էջ 126, 128, Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 695։

30 Tarih al-Zaman, p. 262:

31 Հեթում Պատմիչ, Պատմութիւն Թաթարաց, Փարիզ, 1859, էջ 217—218, Միքայել Ասորի, էջ 515—516, Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 696։

32 Տեր-Ղևոնդյան, Կիլիկյան Հայաստանը, էջ 128։

33 Tarih al-Zaman, p. 262:

34 Ժամանակագրական [illegible] մեջ այն [illegible], որը [illegible] [illegible] [illegible] է [illegible], թվագրվում է 1222 թ. (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 695, Տեր-Ղևոնդյան, նշվ. աշխ., էջ 128—129)։ Սակայն [illegible] [illegible] 618/1221 [illegible] [illegible] [illegible] և [illegible] է [illegible]։ Հմմտ. Հ. Հակոբյան և [illegible], Հայ ժողովրդի պատմության [illegible] [illegible] XVIII դարի [illegible], Երևան, 1975 (այսուհետև՝ [illegible]), էջ 528։

35 Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, 1956, էջ 225, Հմմտ. Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխ. Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961 (այսուհետև՝ Կիրակոս Գանձակեցի), էջ 189։

36 Tarih al-Zaman, p. 262—263:

37 Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, 1956, էջ 225, Կիրակոս Գանձակեցի, էջ 189։

38 Տեր-Ղևոնդյան, Կիլիկյան Հայաստանը, էջ 129։

39 Ibn al-Athir, al-Kamil fi al-Tarikh, vol. XII, Beirouth, 1982, p. 454—456; Հմմտ. Իբն ալ-Ասիր. Քաղվածություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ա. Ն. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1981, (այսուհետև՝ Իբն ալ-Ասիր), էջ 331—332։

40 Ibn al-Athir, al-Kamil, v. XII, p. 455, Հմմտ. Իբն ալ-Ասիր, էջ 332։

41 Ibn al-Athir, al-Kamil, v. XII, p. 455—456, Հմմտ. Իբն ալ-Ասիր, էջ 331—332։

42 Նույն տեղում։

43 1225—1226 թվականների Կիլիկիայում ընթացող [illegible] դեպքերի մասին տե՛ս Տեր-Ղևոնդյան, Կիլիկյան Հայաստանը, էջ 130—134։

44 Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, 1956, էջ 225, Միքայել Ասորի, էջ 508, Կիրակոս Գանձակեցի, էջ 189, Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 697։

45 Կիրակոս Գանձակեցի, էջ 189։

46 Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 698։

47 Նույն տեղում։

48 Tarih al-Zaman, p. 271:

49 Այդ մասին մանրամասն տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 693—699, Ժամկոչյան, էջ 528—529։

50 Նույն տեղում, էջ 699—701։

51 Tarikh Mukhtasar, p. 256—257. Tarih al-Zaman, p. 291:

52 Tarih al-Zaman, p. 291:

53 Tarikh Mukhtasar, p. 256—257. Տե՛ս. Армянские источники о монголах. Извлечения из рукописей XIII—XIV вв. Перевод с древнеармянского, предисловие и примечания А. Г. Галстяна, М., 1962 (далее: Армянские источники), с. 71.

54 Ժամկոչյան, նշվ. աշխ., էջ 529։ Պատմաբան Ս. [illegible] ընդունում է 1248 [illegible] (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 701. Տե՛ս. Армянские источники, с. 48, 121 (прим. 139).

55 Կիրակոս Գանձակեցի, էջ 317—318, 364, «[illegible]» [illegible], 1870, էջ 17։

56 Tarikh Mukhtasar, p. 257:

57 Գրիգոր Ակներցի (Մաղաքիա աբեղա), էջ 17, Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 701։

58 Տե՛ս. Կիրակոս Գանձակեցի, էջ 317—318, 364, Գրիգոր Ակներցի (Մաղաքիա աբեղա) էջ 17, Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 701։

59 Ա. Գ. Սուքիասյան, Կիլիկյան հայկական պետության և իրավունքի պատմություն, Երևան, 1978, էջ 73, Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 702, Ժամկոչյան, նշվ. աշխ., էջ 530։

60 Tarikh Mukhtasar, p. 262, Tarih al-Zaman, p. 297:

61 Tarih al-Zaman, p. 297:

62 Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 702։

63 al-Maqrizi, Ahmad, Kitab al suluk limarifat duwal al-muluk, edited by Muhammad Mustafa Ziada, vol. 1, part 2, Second edition, Cairo, 1957 (Այսուհետև՝ Maqrizi, al-suluk), p. 283 (note 2). Tarikh Mukhtasar, p. 261, Tarih al-Zaman, p. 295—296:

64 Босворт, Мусульманские династии, с. 194, 192.

65 Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 702, Ժամկոչյան, նշվ. աշխ., էջ 530, Армянские источники, с. 48, 71:

66 Tarih al-Zaman, p. 297:

67 Tarikh Mukhtasar, p. 262—263. Tarih al-Zaman, p. 297—298:

68 Tarikh Mukhtasar, p. 263:

69 Tarih al-Zaman, p. 320:

70 Կիրակոս Գանձակեցի, էջ 372։ [illegible] 705 (1256) [illegible] (տե՛ս Армянские источники, с. 49):

71 Tarih al-Zaman, p. 326:

[73] Կիրակոս Գանձակեցի, էջ 368, 370. Հմմտ. Армянские источники, с. 68, 71։

[74] Նույն տեղում։

[75] **Tarih al-Zaman**, p. 326, 334:

[76] Կիրակոս Գանձակեցի, էջ 368. *Հայ ժողովրդի պատմություն*, հ. 3, էջ 706, ծանոթագրություն, նշվ. աշխ., էջ 521։

[77] **B. Spuler**, «Ilkhans».—EI₂, vol. 3, Leiden—London, 1979, p. 1121:

[78] **Ph. Hitty**, History of the Arabs, Fifth edition, London, 1951, p. 488; **Босворт**, Мусульманские династии, с. 201.

[79] **F. H. Ashur**, The political relation between the Mamluks and the Monghols at the first mamlukide state. Introduction by Josef Nasim, Cairo, Dar al-Maarif, 1976 (*այսուհետև՝* Ashur, Political relations), p. 40, 90, *Հայ ժողովրդի պատմություն*, հ. 3, էջ 705—707, ծանոթագրություն, նշվ. աշխ., էջ 521։

[80] *Տե՛ս* Армянские источники, с. 53; *Հայ ժողովրդի պատմություն*, հ. 3, էջ 706—707, ծանոթագրություն, նշվ. աշխ., էջ 521։

[81] **Tarikh Mukhtasar**, p. 279: *Արաբ ժամանակագրական պատմիչներ Աբու-լ Ֆիդան, Մակրիզին, Իբն ալ-Վարդին Հուլավի զորավարի* [illegible] *658 թվականի ռամազան ամսի 3-ով (1260 թ. սեպտեմբերի 3-ը)* [illegible] *տե՛ս* Abu-l Fida Ismail, al-Mukhtasar fi akhbar al-bashar (=Tarikh Abu-l Fida), part 3, Beirouth, Dar al-Maarif, p. 200—202, 209, **Maqrizi**, al-Suluk, 1/2, p. 422—423, Ibn al-Wardi, Tatimmat al-mukhtasar fi akhbar al-bashar, edited by A. R. Badrawi, part 2, Beirouth, 1970, p. 292—294):

[82] **Tarih al-Zaman**, p. 316:

[83] **Hitty**, History of the Arabs, p. 487:

[84] Վարդան Բարձրբերդցի. *Պատմություն տիեզերական ի լույս ընծ. Մ. Էմին, Մոսկվա, 1861, էջ 198. Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 707*, ծանոթագրություն, նշվ. աշխ., էջ 521։

[85] **Maqrizi** al-Suluk, 1/2, p. 510 (note 1), Ashur, Political relations, p. 83:

[86] *Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 707*։

[87] **Tarikh al-Zaman**, p. 316:

[88] *Դամասկոսի հանձնման մասին հաղորդում են՝* **Maqrizi**, al-Suluk, 1/2 423—424. **Abu-l Fida**, Tarikh, III, p. 203, **Abu Shama**, **al-Zail**, ala raudatein, introduction by Muhammad Zahid Ibn al-Hasan al-Kathari, Beirouth, Dar al-Jil, 1974, p. 203—204:

[89] *Կիրակոս Գանձակեցին, որը զգուշաբար է խոսում ճակատամարտի մասին, նշում է, որ Հուլավուն Սիրիայից հեռանալով այնտեղ թողել էր 20 հազարանոց զորք (տե՛ս* Կիրակոս Գանձակեցի, էջ 388), *Աբուլ Ֆարաջի կարծիքով 10 հազար թվաքանակը (տե՛ս* Tarih al-Zaman, p. 317, Tarikh mukhtasar, p. 280) *ավելի հավանական է թվում*։

[90] **Maqrizi**, **al-Suluk**, 1/2, p. 427, **Abu-l Fida**, Tarikh, III, p. 205, **Ibn al-Wardi**, Tatimmat al-mukhtasar fi akhbar al-bashar, ed. by A. R. Badrawi, part 2:

[60] **Maqrizi, al Suluk**, 1/2, p. 430—431, **Abu-l Fida**, Tarikh, III, p. 203, **Abu Shama**, al Zail, p. 207—208, **Ibn al-Wardi**, Tatimmat, II, p. 297:

[61] **Tarih al-Zaman**, p. 317, **Tarikh Mukhtasar**, p. 280:

[62] **Босворт**, Мусульманские династии, с. 201.

[63] **Hitty**, History of the Arabs, p. 487, **Босворт**, Мусульманские династии, ст. 201. *Հայ ժողովրդի պատմություն, Հ. Գ, էջ 707։*

[64] **C. Cahen**, «Arminiya»,—EI[2], vol. I, Leiden—London, 1979, p. 660, **B. Spuler**, «Ilkhans», EI[2], vol. III, Leiden—London, 1979, p. 1121, The Cambridge Medieval History, vol. IV, London, 1927, p. 175:

[65] **Maqrizi, al-Suluk**, 1/2, p. 510 (note 1), **Ashur**, Political relations, p. 83:

[66] *Հայ ժողովրդի պատմություն, Հ. Գ, էջ 705, 708։*

[67] **Maqrizi, al-Suluk**, 1/2, p. 541 (note 4), **Abu-l Fida**, Tarikh, IV, p. 3, **Ashur**, Political relations, p. 90: **Босворт**, Мусульманские династии, с. 201.

ЭДУАРД ХУРШУДЯН

МОНЕТА МИТРИДАТА ЦАРЯ ТОСПА

В июле 1997 года я получил письмо от Дэвида Пристли—казначея британского «Восточного нумизматического общества» (Oriental Numismatic Society)[1], где он предложил мне прочесть надпись на неизвестной медной монете (из своего частного собрания), которую он приобрел в Стамбуле (Турция). Относительно точного места происхождения этой монеты Пристли (со слов поставщика монеты) сообщает, что она как будто бы происходит из Вана (Западная Армения). Однако, как признается сам владелец монеты, он не может ручаться за достоверность этой информации. При этом он добавляет, что место находки монеты могло бы сыграть значительную роль в идентификации монеты.

Согласно Пристли, монета в неплохой сохранности, диаметром 20—22 мм, на реверсе, по-видимому, имеется арамейская надпись. Пристли затратил много усилий, чтобы идентифицировать эту монету у многих признанных экспертов, однако безрезультатно.

Описание монеты. Медная монета средней сохранности. Имеет трещины по краям. Диаметр 20—22 мм. На аверсе изображен бюст бородатого мужчины. Профиль влево; тиара-ашхарананд. В ухе серьга из шариков в три ряда. На реверсе имеется арамейская надпись в три строки. Первая строка из 4-х знаков, вторая строка—из 5-ти, третья—из 4-х. Некоторые знаки сохранились плохо, остались лишь следы.

Дукт надписи. Надпись принадлежит к арамейским надписям парфянского круга. Очертания арамейских букв во многом напоминают знаки арамейского письма парфянских монет.

Датировка монеты. В датировке монеты играют большую роль следующие основные факторы: а) с Вологеза I (51—78 гг.) греческие легенды на монетах Парфянского

царства и государства парфянского круга начинают постепенно заменяться парфяно-арамейскими; б) завязка/узел на задней части тиары-ашхараванда появляется на парфянских монетах также приблизительно с I в. н. э. Следовательно, нашу монету можно приблизительно датировать I—II в. н. э.

Чтение надписи. Исходя из данных парфяно-арамейского письма, мы попытались дать следующее чтение надписи: стр. 1) tsp (?)[2], стр. 2) mtrd[t], стр. 3) M[LK']- Tosp Mihrdāt-šāh «Михрдат-царь (страны/царства) Тосп».

Имя собственное правителя. Имя правителя с титулом MLK' - šāh (арамейская идеограмма MLK' соответствует парфянскому титулу šāh) достаточно хорошо вписывается в парфянскую ономастику. Так, например, легенда на монете парфянского царя Митридата IV (140 г. н. э.) гласит: mtrdt MLK'—Mihrdāt—šāh[3].

Характерные черты иконографии.

Тиара-ашхараванд. Изображенный ашхараванд очень похож на «tiara armeniaca». Под армянской тиарой следует понимать любой иранский головной убор в широком смысле с лацканами и горжеткой[4].

Борода. Как показывают исследования, в области иконографии такой элемент, как борода, является характерной особенностью для правителей царств, расположенных к юго-западу от Армении—Парфия, Элимаида, Харакена, Персида и т. д. Даже те правители, которые по своей природе были безбородыми, например, Селевкиды, иногда изображались с бородами. Примечательно, что Тигран II Великой Армении никогда не изображался с бородой, в то время как почти все правители других царств изображались таковыми[5].

Поворот бюста. В отличие от монет Парфянской державы поворот бюста влево или вправо на монетах полунезависимых стран/царств имел огромное значение. Так, например, поворот влево может указывать на самостоятельность царя, между тем как поворот вправо указывает на политическую зависимость царя/правителя[6].

Особенности надписи. Следует отметить некоторые особенности легенды.

Название царства/страны. При идентификации этого элемента надписи помимо данных арамейской графики определенную роль сыграло предполагаемое место происхождения монеты—город Ван, однако мы даем себе отчет, что

это обстоятельство не может считаться решающим в идентификации монеты.

С первого взгляда очень странным кажется упоминание названия царства/имения в легенде монеты, ибо такое сочетание имени правителя и названия царства большая редкость. Однако если обратиться к известным монетам парфянского времени, то можно заметить, что обозначения топонимов на парфянских монетах присутствуют в виде греческих монограмм-АГ. АГТ-Экбитаны, РГ-Рага/Рей МΘ, МΘТ -Михрдаткирт, NI-Ниса и т. д.[7], а также достойна упоминания монета правителя полунезависимого царства Адиабена, на которой обозначены также имя собственное правителя+титул+царство-[ΒΑΣ]Ι·ΛΕ[ΟΣ] [ΑΒ]ΔΙΣΣΑΡΟΥ [Α]ΔΙΑΒΗΝΟΥ «Царь Адиабенны Абдиссарес»[8].

Аналог монеты. Аналогичная медная монета была найдена в ходе археологических раскопок в Арташате—в древней столице Армении[9]. Монета эта подъемная—найдена с поверхности раскопок.

Описание монеты. Медная монета, квадратной формы, размеры 18+20 мм, вес—5,2 г. Аверс монеты тот же, что и монеты из Вана—профиль бородатого мужчины влево, на реверсе имеется арамейская надпись в две строки. Третья строка, по-видимому, не сохранялась или из-за неправильного чекана, или из-за химического или механического повреждения монеты. Над надписью имеется полумесяц рожками вверх. М. Зардарян[10], исследователь арташатских монет, считает, что монета изначально имела чекан квадратной формы и поэтому она, скорее всего, происходит из Центральной Азии и попала в Армению по «Великому шелковому пути». Известно, что квадратными были монеты индо-парфянского круга и монеты из северо-западной Индии, Харахосты и т. д.

Однако, как нам кажется, квадратную форму она приобрела вследствие неправильного чекана, что очень часто происходило с медными монетами. Таких примеров более чем достаточно.

Мнения ученых и специалистов по поводу происхождения монеты.

Согласно Д. Пристли, тип монеты совершенно определенно можно отнести к парфянскому, бюст на аверсе монеты, по-видимому, по типу напоминает поздние парфянские монеты, например, Вологеза IV (147—191 гг.), между тем Нерсесян (из Калифорнии) считает, что она по типу напо-

минает монету Вонона (8—12 гг.). Пристли в связи с этой монетой выдвинул гипотезу, согласно которой она могла принадлежать к Аршакидской династии Армении. Как известно, до сих пор армянских аршакидских монет не обнаружено. Относительно происхождения этой монеты один из известнейших знатоков парфянских монет Ф. Шор воздерживается что-либо конкретное сказать, ссылаясь на то, что такую вещь он видит впервые, при этом отмечает, что в дальнейшем при изучении возможных вариантов идентификации монеты не следует исключить вероятность восточного или индо-парфянского происхождения по типу (в письме к Д. Пристли от 25.10.94 г.). Другой исследователь Р. Сеймор также признает, что ничего похожего он не видел раньше. Согласно Сеймору, по стилю монета больше «армянская», чем восточная. Что касается тиары правителя, то она по типу относится ко времени намного позже Тиграна Великого (в письме к Д. Пристли от 07.02.95 г.). Один из экспертов «The British Museum» выдвинул гипотезу, согласно которой монета может принадлежать правителю Эдессы (в письме к Д. Пристли от 15.05.94 г.).

Источники по парфянскому периоду чрезвычайно скудны. Поэтому особое значение приобретают дошедшие до нас в большом количестве монеты как самих парфянских царей, так и царей мелких полунезависимых государств, особенно Элимаиды, Персиды и Харакены. К числу этих государств также можно отнести и армянское государственное образование/царство Тосп. О последнем в нарративных источниках сохранилось минимум сведений. Данные нашей монеты позволяют установить, что перед нами пока единственное материальное свидетельство о существовании, по крайней мере, в I—II вв. н. э. царства Тосп-Ван, входящего в парфяншакидскую конфедерацию полунезависимых государств-сателлитов, и одного из его царей—Митридата. Относительно имени собственного правителя Тосп-Вана можно сказать, что это очень распространенное имя иранского происхождения из др.-ир. Miθra- «(Божество) Митра»+ dāta «данный, созданный»—«Созданный (божеством) Митрой»[11]. Это имя имело очень широкое распространение как в Иране, так и за ее пределами. Например, Митридат Понтийский, Митридат дядя Тиграна II Великого, Митридат Иберийский, Митридат Атропатенский, Михрдат царь Харакены и т. д.

В I в. н.э. самостоятельные царства, слабо подчиненные (иногда чисто традиционно) парфянскому двору, су-

шествовали в Армении[13], Атропатене, Адиабене, Гордуэне, Иберии, Эдессе, Элимаиде, Хатре, Харакене, Парсе в Гиркании и т.д.[13] Владетели этих царств иногда чеканили собственные монеты (часто с весьма громкими титулами)[14], вели независимую политику, поддерживая то интересы Рима, то Ирана. Процесс распада Парфянского царства на самостоятельные царства происходил очень стремительно. Согласно среднеперсидскому источнику «Книга деяний Ардашира, сына Папка», отражающего традицию III века, к концу парфянского периода Иран состоял из 240 независимых владений. По-видимому, одним из этих царств/владений был Тосп, где царем был Митридат.

До 428 года, т. е. до падения династии армянских Аршакидов, эта территория считалась царским владением. Быть может, перед нами один из правителей этого владения в I—II вв., который называл себя царем. В последующем область переходит к роду Рштуни, а затем к Арцрунидам.

Павстос Бузанд в числе разрушенных городов упоминает также Ван и Нахичеван. Ван, находящийся в области Тосп и называвшийся у армянских авторов городом Семирамиды, как известно, был политическим и культурным центром государства Урарту. Его история хорошо известна из клинописных источников. При этом следует отметить, что в урартских надписях страна к востоку от Ванского озера называется Биайной, Тоспом же (Тушпа—ванских надписей) именуется не сама страна, а столица государства Урарту (см.: *Я. Манандян.* Торговля и торговые центры Армении в римско-парфянскую и византийско-сасанидскую эпохи. Труды. IV. 1985, 87).

EDUARD KHURCHUDIAN

THE COIN OF MITRIDAT THE KING OF TOSP

In July 1997, I received the letter from Mr. Priestley, the treasurer of the British «Oriental Numismatic Society». In his letter Mr. Priestley asked me to read the inscription on an unknown bronze coin from his private collection, which he had acquired from Istanbul (Turkey). Also, Mr. Priestley informs (from what he had been told by supplier) that it, supposedly, originated from Van (Western Armenia, Turkey). However, the holder of the coin recognizes, that he can not check up the reliability of this information.

Description of the coin. Small bronze coin (⌀ 20—22 mm). On the adverse side there is a crowned bust of bearded man facing left. On the reverse side there is an Aramaic inscription in 3 lines.

Proceeding from the data of the Aramaic script, we can suggest the following reading of the inscription: line 1) **tsp** (?), line 2) **mtrd[t]**, line 3) **ML[K']-Tosp Mihrd^at-s^ah** «Mitridat—the king of the (royalty/demesne) Tosp (?)».

From the first sight it is very strange to see the name of the royalty mentioned in the legend of the coin. It is rare combination. There is only one example of such coin written on Greek. It belongs to the king of the half-independent royalty of Adiabena. On this coin there are the name, title and country name of the ruler: [ΒΑΣ]ΙΛΕ[ΟΣ] [ΑΒ]ΔΙΣΣΑΡΟΥ [Α]ΔΙΑΒΗΝΟΥ «Abdissares the king of Adiabena». The name of the governor with the title is well known being enough attested in the Parthian onomastics. Thus, for example, the legend on the coin of the Parthian king Mitridat IV (140 AD) states: mtrdt MLK'—**Mihrdatsah**.

The sources concerning the Parthian period are extremely poor. Therefore, a special significance is accredited to the great number of coins, both of Parthian kings, and kings of some small-sized halfindependent states, especially Elimaida, Persida, Characene, etc.

In I AD the half-independent states such as Armenia, Atropatena, Adiabena, Gorduena, Iberia, Edessa, Elimaida, Chatra, Charakena, Pars, Hyrkania etc. were subordinated (sometimes only formally) to the Parthian Empire. The rules of these states sometimes minted their own coins (frequently with rather loud titles). They conducted their own independent policy, sometimes supproted the interests of Rome, and sometimes those of Iran. The disintegration of the Parthian Empire into independent states was very abrupt. According to the Middle Persian source «The Deeds of Ardashir, son of Papak», which reflects the III AD tradition, attests to the fact that by that time the Parthian Empire consisted of 240 independent demesnes. Apparently, Tosp was one of them, with King Mitridat at the head.

From the above mentioned we can conclude that we deal with a unique attestation at least the I—II AD state/demesne Tosp-Van, which seems to be included in the panarsakide confederation of the half-independent states and one of it's ruler bear the name Mitridat.

ПРИМЕЧАНИЯ

[1] С августа 1997 года я являюсь членом британской «Oriental Numismatic Society».

[2] Арм. Tosp (вар. Tosh, Tosb) соответствует засвидетельствованной в клинописных урартских источниках столицы урартского царства Tušpā. Это слово имеет урартское происхождение. Согласно Еремяну, после падения Урарту столицей созданного армянского государства могла быть Тушпа, которая должна была являться престольным центром первых армянских царей династии Оронтидов-Ервандидов (см.: С. Т. Еремян. Армянское государство Ервандидов.—История армянского народа, Ереван 1944, с.250—255). Ниже приводим свидетельства источников, где встречается топоним Тосп.

Греч. [illegible] —как обозначение города упоминается у Птолемея; греч. [illegible]: как название озера и местности (Птолемей); у Страбона упоминается как название озера [illegible] lacus qui Thospites appellatur «озеро, которое называется Тосnитес» (Плиний); в урартских клинописных источниках Tušpā—это столица царства Урарту и страны Биайна. Древнее название Tušpā, таким образом, у армян превратилось в название местности, между тем как город получил другое название—Ван (из урартского Biaina).

Древнеармянские источники область Tosp локализуют на востоке озера Бзнуник-Ван (Aaxarhac'oyc'); согласно другим источникам, «в области Tosp (gavarn Tospay) находится укрепленный город Ван» (Павстос Бузанд); «крепость Ван, которая была городом провинции Tosb (I Tosb gavarin)» (Павстос Бузанд); Vann Tospay «(город) Ван (провинция) Тосп» (Хоренаци); Tosb gavar «провинция Тосб» (История Святой Рипсимэ); Tosb «(провинция) Тосп» (Арцруни; Vantosp gavar «провинция Вантосп» (Арцруни); «в Вантосп—в город Семирамиды» (Арцруни) (см. apud Hübschmann, 1904, 340).

[3] См.: M. Alram. Nomina Propria Iranica in Nummis. Materialgrundlagen zu den iranischen Personennamen auf antiken Münzen. Iranisches Personennamenbuch IV. Wien, 1986, 131.

[4] Об армянской диадеме см.: J. Young. Commagenian Tiaras: Royal and Divine.—AJA 68, 1964, 29—34, pl. 11—12; Y. T. Nercessian. The Evolution of the Armenian Tiara.—Armenian Numismatic Journal XI (1), 1985, 2—12, pls. 1—2.

[5] См.: F. de Callataÿ. Addissarès l'Adiabénien.—Iraq. Vol. LVIII, 1996, 141, no. 42.

[6] См.:Р. Варданян. Аршакидский поворот.—ВДИ, 1994, №4.

[7] См.: D. Sellwood. Parthian Coins.—In: Cambridge History of Iran. Vol. 3(1). The Seleucid, Parthian and Sasanian Periods. Ed. By E. Yarshater. Cambridge, 1983, 316—317.

[8] См.: De Callataÿ, 1996, 135—147.

[9] **М. Зардарян.** Монеты из раскопок Арташата (1970—1988 гг.), табл. IV (рукопись).

[10] Мы бы хотели выразить свою благодарность М. Зардаряну за предоставление в наше распоряжение фото и описание аналогичной монеты из арташатских находок.

[11] См.: **F. Justi.** Iranisches Namenbuch. Marburg, 1895, 213а, 41.

[12] Данные источников практически не содержат сведений об истории области Тосп в парфянское время. Известно только, что Тосп была одной из областей Великой Армении провинции Васпуракан с центром Тоспаван или Ван. Располагалась на левобережном берегу озера Ван.

[13] См., например, **R. Frye.** The Heritage of Persia. L., 1962, 187—190.

[14] См.: **De Morgan J.** Manuel de numismatique orientale de l'Antiquité et du Moyen Age. Publication achevée sous la direction de K. J. Basmadjian. T. I. P., 1923—1936.

ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ

XV ԴԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ

«Բիւզանդիոն» թերթի 1912 թ. հունվարի 31-ի և փետրվարի 2-ի համարներում լույս է տեսել Փոքր Ասիայի արևմտյան գավառներում Հայոց հաստատման սկզբին վերաբերող կարևոր մի հիշատակարան-ժամանակագրություն, որն այնուհետև նույնությամբ վերահրատարակվել է Ա. Գրիգորյանի և Վ. Եղիազարյանի խմբագրությամբ հրատարակված «Պատմագիրք Առափաղաք «Անտառաւանդարեկան» քաղաքին» գրքում։ Որքան էլ անսպասելի է, 1399—1446 թվականների դեպքերությունները ականատեսի գրչով ներկայացնող այդ սկզբնաղբյուրը ժամանակին վրիպել է XV դարի ձեռագրական հիշատակարանների հավաքածուն կազմող Լ. Խաչիկյանի և «Մանր ժամանակագրություններ» երկու հատորով հրատարակած Վ. Հակոբյանի ուշադրությունից և չի ընդգրկվել։

«Բիւզանդիոնի» հրատարակությունը ուղեկցվում է «Ժամանակագրության» բնագրին ու նրա ընդօրինակության պարագաներին վերաբերող Ս. քահ. Գուլամալյանի ծանոթագրությամբ։ Ըստ այդմ՝ բնագիրը գտնվում է եղել ոճեխաւր մասնաւոգրութեանց. ի Մարութէ վարդապետ Հաւաքեալ» խորագիրն ունեցող մագաղաթե ձեռագրում։ Այն պատկանել է տեր Հովհաննես Սեբրեցի քահանային, որի մոտ էլ 1889 թ. նոյեմբերի 20-ին Երուսաղեմում գրչագիրը տեսել և Առաքայպարին ու շրջակա հայկական գյուղերին վերաբերող հիշատակարան-ժամանակագրությունը ընդօրինակել է Սեդրակ Կարապետ Սափրիչյանը։ Ապա երկու տասնամյակ անց ի հածերութեանս 1909 թ., «ձեռքագրելով թեև երինակէն որ առ իս գտանիւր թերթ առ թերթ՝ առանց շեղելով բնականէն», ուսուցիչների հետ այն ուղարկել է Գրիգոր քահ. Գուլամալյանին «իբր յիշատակ գրչաաւ ընծայիւս»։ Այնուհետև ընդօրինակությունը անցել է Ս. քահ. Գուլամալյանին և հրատարակության տրվել[1]։

Ձեռագրի մագաղաթյա լինելն ու խորագրերը հիշատակելուց բացի, Ս. Կ. Մուշեղյանն ունի մեզ համար կարևոր մի տեղեկություն ևս. ըստ նրա ժամանակագրության, ժողովածուն «900 թուականէն մինչև 1500 թուական (Բագրատունի) իշխանութեան բարձմանէն կ'սկսէր, այլեւայլ քաղաքաց այրուելէն ու ջարդուելէն եւ կամ փախելէն 25 տեսակ պատմութիւն կար գրքին մէջ»[2]: Ուրեմն՝ Մարուքի վարդապետը կազմել է եղել X—XV դարերի Հայոց պատմության այսօր գիտությանն անծանոթ մի համահավաք-compendium՝ ընդհանուր միավոր ընդգրկմամբ: Բնական է ենթադրել, թե բացի Հովհաննես Դրասխանակերտցի պատմիչից մինչև Թովմա Մեծոփեցի եղած և այսօր հայագիտությանը հայտնի պատմագրող հեղինակներից, որոնց թիվը 10—15-ի հազիվ հասնի, Մարուքի ժողովածուում ներկայացված են եղել հիշյալ դարերի եղելությունները ներկայացնող այլ հեղինակներ ու երկեր ևս: Նշված 900 և 1500 թվականները, անշուշտ, մասամբ ճշգրտված են, քանի որ «Բագրատունի իշխանութեան բարձմանէն» ասելով ժամանակագրողը նկատի ունի իրոք բարձրացումը և ոչ գրաբարյան «բարձումը» (վերացումը): Ըստ այդմ՝ պատմությունները պիտի սկսվեին 885/7 թվականների իրադարձություններով: Ինչ վերաբերում է ավարտին՝ 1500-ին, ապա այստեղ էլ որոշ պայմանականություն կա. Առավելապես և շրջակայից ընդհանուր պատմությանը վերաբերող հիշատակարան-ժամանակագրությունները, որ կարող էր և ժողովածուի վերջին նյութը լինել, ավարտվում է 1466 թ. (ՄՆԿԶ, Հայոց ԹԺԿ, պիտի լինի՝ ԹԺԵ) արձանագրմամբ:

Ո՞վ էր Մարուքի վարդապետը, գիտական այդ մեծ հետաքրքրություն ու կարևորություն ներկայացնող պատմագրական ժողովածու կազմողը, հայագիտությանը առ այսօր հայտնի չէր էլ. Անտոյանի բառարանի հանված վեց Մարուքի/Մարուքեններից[3] առաջին չորսը XIV դարի գործիչներ են, ուստի ժամանակագրորեն չեն կարող մեզ հետաքրքրող հեղինակը լինել (բացառող մյուս իրողությունները զանց են առնում): Հինգերորդը՝ Հավատավոր անապատի առաջնորդ և ս. Գևորգ տաճարի մի կորդէ կառուցող Մարուքի եղբայրը, թվում է, նույնպես այլ անձնավորություն պիտի լինի, որովհետև վերջինս, հավանաբար, Արծկեի մոտակայքի վանական է և հայտնի սեփականատիրոջ որակմամբ[4], մինչդեռ ժողովածուի կազմողը վարդապետ է, և, թերևս, Երուսաղեմի միաբան: Վերջին պարագան մաքրե-

ում նշված տեղեկությունից, որ առկա է հիշատակարան-ժամանա-
կագրության բնագրում։ Այստեղ ասվում է, թե այն հեղինակող Տեր
Գրիգոր քահանան հաստատվել է Երուսաղեմում («փառք և գոհու-
թիւն առաքյալն մերոց տնօրէնութեան, զի անվնաս հասույց զմեզ եր-
կիր Աստուծոյ իբր զորդիս Աբրահամու») և, ինչպես ասվեց, 1466 թ. ավարտել հիշատակարանը։ Դժվար է պատկերացնել, թե այդ հիշա-
տակարանը՝ գրվելուց շատ չանցած, կարող էր հասնել կամ հայտ-
նի դառնալ Երուսաղեմից հեռու գտնվող մեկ այլ մատենագրի, ասե-
նք Մարուքե վարդապետին որոնելի նրա համարում երուսաղեմյան
գործիչների շարքում[6]։ Ձեռագրական աղբյուրներում այդ անունը
կրող տանձի երիտ հիշատակություն կա. մեկը Երուսաղեմի սուրբ
Փրկչում 1426 թ. ընդօրինակված Սաղմոսարանի թուղթը խաղող
«հողևոր եղբայր Մարուքեն է», մյուսը՝ 1433 թ. ճաշոցն ընդօրինա-
կող Տիրատուր արեղայի հիշած «Մուրբ Յարութեան լուսարար Մա-
րուքէ հոգևորեց արեղան»[7]։ Այս վերջինը պիտի որ արժանավո-
րությամբ օժտված և նկեղեցական շրջանակներում ճանաչում ունե-
ցող անձնավորություն լիներ՝ լուսարարի պատվավոր պարտակա-
նություն ստանձնած լինելու համար։
Ինչևէ, քանի դեռ ուրիշ ավելի հավանական թեկնածություն չու-
նենք, թույլատրելի է կարծել, թե քանուն պատմական երկերի ընդ-
գրկմամբ, «Տնչխար մատենագրութեանց» մագաղաթյա ժողովածու
կազմողը՝ «. Հարությունն տաճարի լուսարարն է, որը մինչև 1466—
ական թվականները կարող էր կենդանի լինել։ Բացառված չէ մեկ
այլ տարբերակ ևս. Գրիգոր քահանայի և նրա հոր՝ Գրիգոր դպրի
հիշատակարան-ժամանակագրությունը կարող էր ձեռագրի վեր-
ջում ավելացվել ոչ անպայման Մարուքե վարդապետի օրոք ու նրա
իսկ ձեռքով։ Դժբախտաբար, ձեռագրի ուր գտնվելն այսօր անհայտ
է, իսկ «Բիւզանդիոնում» նշած նրա նկարագրությունը հնագրական
որևէ տեղեկություն չի բովանդակում։
Հիշատակարան-ժամանակագրության առաջին հրատարակիչն
ու վերահրատարակության խմբագիրները վերահասու են սույն բը-
նագրի հաջորդումների կարևորությանը, բայց նրա վավերականու-
թյան փաստումը թողնում են մասնագետ հետազոտողին։ Մ. քահ.
Գուրմայանը ուղղակի հաստատագրումով ասում է. «Անանց յաւակ-
նելու նկրկալ գործին մասին թէ անիկա անպատճառ վավերականու-
թիւն կրնայ ունենալ բոլորովին, մենք նույնին հրատարակութիւնով
հետևք-բանաւէր, մանաւանդ Արմաշի նախնական պատմութեան

հարցովը զբաղվող Տ. Օրմանեան Սրբազանին խորին ուշադրութեան յանձնելով, կ'փափագինք անոր որոշ կարծիքն ունենալ։ Հաւաքածո-յու համար, թէ որքան նշմարիտ կամ նշմարտանման են Մարութէ վարդապետի մը քաղած տեղեկութիւններն Առաքելոց Հայոց և շրջակայից գաղթականութեան ծագումին մասին[8]։ Մ. Օրմանյա-նը, սակայն, հանգամանքների բերումով այլևս առիթ չի ունեցել անդրադառնալու 1880-ական թվականների ավարտին գրած Արմա-շի պատմության իր ձեռագիր աշխատությանը, ուստի տասնամյակ-ներ հետո Գ. Բամպուքճյանի խմբագրությամբ կատարված հրատա-րակության մեջ այս աղբյուրին վերաբերող խոսք չկա[9]։ «Բիւզան-դիոնի» հրապարակմանը ծանոթ և բնագրի վավերականությանը մասնակիորեն անդրադարձած միակ հայագետը, եթե չենք սխալ-վում, Հայկ Պերպերյանն է[10]։ Սեբաստիայի 1398—1401 թվական-ների պատմության աղբյուրները քննարկելիս նա համառոտակի վերապատմում է հիշատակարան-ժամանակագրության սկզբի հա-ղորդումը՝ Լենկթեմուրի զորքերի կողմից Սեբաստիան պաշարելու և տիրանալուց հետո 4—5 հազար տանջելով ի կենդանույն հողի տակ հեղձելու մասին։ Հայկական աղբյուրներից (հիշատակարաններ, Մեծոփեցի, Նշաթեցի) բացի, այդ իրողության մասին պատմում են ժամանակակից բազմալեզու այլ սկզբնաղբյուրներ, և Հ. Պերպեր-յանը նրանց համադրմամբ ու քննությամբ հավաստում է իրողու-թյունը։ Այսինքն՝ Հայր և որդի Գրիգորների գրառման այդ սկզբնա-կան մասը ընդհանուր առմամբ ճիշտ է, սակայն գրառված պիտի լինի անցուդարձից մի քանի տասնամյակ հետո (այդ մակարդակում է տեքստում եղած մանրամասներից ևս)։ Հեղինակների նպատակը Սեբաստիայի գրավումը մանրամասնելը չէ, այլ Բյութանիայում սեբաստացի 400 ընտանիքի հաստատման պարագաները ներկայաց-նելը. «Ահա թողում զուզնաքեայ չարահարքեալ անցքս ի յետագա-յիցն, որք ընթեռնուն զսա՝ ի միտս առցեն, թէ զինչ նեղութիւն և դիպուածս եկեալ ասա բնակել, կամեցայ և եղաք ընդ քրիստո-նեայս Քրիստոսի ծառայ և ընդ մուսլմանս՝ մուսլման, մինչ անցաք ընդ նեղ պողոտայէն։ Կամէի բազումս գրել, բայց նախ պաշտաւնս ծանր է և երկրորդ՝ ծերացայ յոյժ, ոչ ևս կարող եմ շրջել աստ և անդ...»։

Առանձնակի ուշադրության է արժանի մանավանդ այս վերջին պատճառաբանությունը, թե ծերացել է և աստ և անդ շրջել չի կա-

թող, սակայն սրազումս գրելուցս (ինձ՝ շարադրանքը ծավալելուց) խուսափում է։ Եվ Հերաթի, տեղանքի, գրավումների, բնակության հանգամանքների, երգերի քանակի, երթևեկի, հույներն ու թուրքերի հետ ունեցած առնչությունների, հիշատակվող անձանց ինքնության և այլ գրվածքներում հեղինակները, մանավանդ 1440-ին քահանա ձեռնադրված Տեր Գրիգորը, այնքան փաստացի են, որ առանց հատու և անգամ չորեկոր անկարելի պիտի լինեին ընդարձակել շարադրանքը։ Բայց տեղեկատվության այն զուճարը, որ ներկայացնում է այս հիշատակարան-ժամանակագրությունը, ինքնին ու միայն կարևոր, այլև շատ գրվածքներում եղակի է։ Եթե անգամ մի կողմ թողնենք Ատարագարի (երբեմնի Տոնիկաշենի) և նրա շրջակա հայկական գյուղերի (այդ թվում և Արմաշի) հիմնադրության հանգամանքներին վերաբերող տեղեկությունները, որոնցից անծանոթ էին այլ աղբյուրներից, ապա գոնե երեք դրվագ պիտի առանձնացնել ու մանրամասնորեն քննարկել։

ա) Պրուսայի XV դարի առաջին կեսի Հայոց հոգևոր առաջնորդին հիշատակող մինչև այժմ մեր ունեցած աղբյուրները Հովակիմ եպիսկոպոսից զատ (որը և պատրիարքության հիմնադիրը դարձավ) որևէ անուն չէին տալիս, մինչդեռ, պարզվում է, 1440 թվականին առաջնորդ է եղել Աբրահամ արքեպիսկոպոսը, որից և հիշատակագրողը ու «Տիգրան անուամբ մի ազգային քահանայական ձեռնադրություն են ստացել։ Այժմ մենք հնարավորություն ունենք ստուգելու այն ժամանակագրությունը, որ Հովակիմի կապակցությամբ առաջադրել է Բ. Կյուլեսերյանը[11]: Ըստ այդմ Հովակիմ արքեպիսկոպոսը գոնե 1438 թվականից արդեն Կ. Պոլսի առաջնորդությունն էր ստանձնել, և Պրուսայի առաջնորդական պաշտոնում նրան փոխարինել էր Աբրահամ արքեպիսկոպոսը։ Հետևաբար վերանայելի են այն բոլոր ենթադրությունները, որոնք Հովակիմին 1461-ին են Պրուսայից Կ. Պոլիս բերում։ Միանգամայն իրավացի է Բ. Կյուլեսերյանի եզրահանգումը. թե Պատրիարքության հիմնումից շատ առաջ Կ. Պոլսում Հայոց առաջնորդարան կար։ Աղբյուրներից անծանոթ ու անհայտ էր նաև նշանավոր Արմաշի ուխտատեղին հաստատելու պատմությունը։ Գրիգորի գրառումից հայտնի է դառնում, որ գյուղը նախապես հունաբնակ է եղել՝ Դոսպիթ անունով, բայց 1416-ին թուրքերից նեղված հույները այրել են այն ու փախել։ Նրանց փոխարինել են Մարաշից գաղթած հայերը, ո-

րանք՝ և հիմնել են ս. Աստվածածնի մատուռը (Արմաշի ապագա վանքի տեղում) և սփոփան քահանայի ամեն առ իւրեանց գեղջումն Սրբոյն սրբանեաց անապատական կուսակրօն վարդապետներ։ Ի դէպ, այս վարդապետի մասին ևս այլ աղբյուրներից ցայսօր տեղեկություն չունենք։

բ) Հիշատակարան-ժամանակագրությունը արժեքավոր տեղեկություններ է հաղորդում, թե օսմանյան տիրապետության աստիճանական ծավալումը ինչպես էր անդրադառնում Հույն բնակչության հակատագրի վրա։ Նրանց մի մասը հարկադրված էր լքել գըրավված տարածքները և նոր բնակավայրեր որոնել։ Տեղում մնացածներից շատերը ստիպված էին մահմեդականություն ընդունել։ Տարեգրարի նկատմամբ Բյուզանդական կայսրությունը այլևս անկարող էր պաշտպանել գավառների Հույն բնակչության ներկայությունը, ուստի ռեբաստահալերին բնակատեղի և աշխատանք տվող Թուրք Փեյլի պատն առում է. «Յորժամ բարձի խռովեալ տէրութիւն (նկա՛ Բյուզանդական կայսրությունը) սոքա ամենեքին կամ այրեալք, եւ կամ աքսորեալք, եւ կամ քարդեալք։ Եթէ կամին զանձինս իւրեանց ապրեցուցանել՝ ընդունելով ընդունին զուստր կրանն մեծ ու սուրբ մարգարէին Մուհամմետիս։ ու կոչման Թիթանենուս Հայոց և ռայլազգի մոտումանցս ներգաղթը ուղեկցվում էր Հույների արտագաղթով (տեսն Ցույց մեկնէին ի տեղոյէ իւրեանց. անբնակ բաղաքքս), մինչ ռամանք ի Յունաց ընդունէին զէնն Մուհամմէտի տանեկանքիս։ Ըստ որում՝ Հայերի նկատմամբ ցուցաբերվող հանդուրժողականությունը պայմանավորված էր ոչ թե էթնիկական կամ դավանական պատկանելությամբ, այլ դավանական հողի վրա Հայոց ու Հույների միջև առաջացած փոխադարձ մերժումի պարագայում Թուրքերի կողմնորոշմամբ՝ թշնամու ախոյանին իրենց բարեկամը կամ դաշնակիցը նկատելու ռազմավարությամբ։ Կայսրության տարածքը նվաճելու ճանապարհին, բնականաբար, Թուրքերի հիմնական թշնամին Հույներն էին. «ի թւ. տեառն ՌՆԹ (1420) Միխաւն գիւղն յունաց տարածելով այրեցին այլազգիք (նկա՛ Թուրքերը—Մ. Մ.) ափսոս, զի գիւղն այն յոյժ գեղեցիկ էր՝ յանդէպ Սապանճի գիւղն, որ զհանդպարհաւն տան Աստուածածնայ ի վերայ բարձր բլրոյ անուն աւերակին անուանեցին Ջորթյան, և մօրուման մեծատունք ճ (100) տան չափ տեղ բնակեցան։ Դիլաւհարի սահմանեիս (սառնհնեդ տա-

ընկանից մինչև վաթսունհինգ տարեկան պետք է վճարեին 200 փարա) թուրքերն այլևս հայ ու հույն չէին ցոկում, հարկում էին բոլոր քրիստոնյաներին, միայն այն տարբերությամբ, որ հույն աղքատները ևս պիտի վճարեին, իսկ հարուստների վճարելիքը 250 փարա էր։ Այսինքն, գլխահարկի այս մասամբ տարբերակված գանձումով թուրքերը քաջալերում էին ընչազուրկ հայերի հաստատումը իրենց հողերի վրա և նույնչափ խթանում աղքատացած հույների հեռացումը անփոխան բնօրրանից։ Կ. Պոլսը գրավելուց հինգ տարի անց (1458 թ.) տակաւն հարկս առնել ի նոցունց՝ 10-ական փարա ի մեծաց, իսկ ի փոքունց 8-ական փարա», ըստ որում Ֆաւանց հրամանագրի գենովական թարգմանելոյ հրաման ու գոյս։ Ըստ երևույթին առայսօր հայտնի սկզբնաղբյուրներից ընտրվելով հիշատակարան-ժամանակագրությունը միակն է, որ պահպանվել է գենովեի այդ հրամանագրի տեքստը՝ հայատառ թուրքերենով։

գ) Քաղկեդոնականության դավանող հայերի մասին մեր ունեցած տեղեկությունները չափազանց քիչ են։ Ն. Մառի, Ն. Ակինյանի և այլոց աշխատություններում ամփոփված նյութը հատկանշական է, գերազանցապես նրանց մշակութային գործունեությանը վերաբերող[18]։ Գրիգոր դպրի գրառումը միանգամայն նոր տեղեկություն է հաղորդում քաղկեդոնական հայոց բնակության վայրի, նրանց թվաքանակի ու միջէթնիկական-միջդավանական հարաբերությունների մասին։ Ահա այդ գրվածքն ամբողջությամբ. «ՊԾԸ (1409) թուականին փրկչական եկին առ մեզ Զայթիկ (խմա՛ ծայթեծաթ) Հոռմ. այլազգիք անուանէին տոհնի էյր էրմէնիլէրա։ Նոքա էին ՌԾԶ (1506) ընտանիք. բաժանեալ ի խումբս-խումբս բնակեցան ի լերին Կէլվէտ եւ ի լերինս Սէկիրթլիու՝ ապաստան լերին, մերձ յոզարակին Փեյզի ակալին։ Նոքա եւ[ս] չար ակամբ հայէին առ մեզ։ Իսկ Յոյնք՝ նոքա եւս ատէին, վասն բարբառելոյ ի հայ լեզուի առտասանութեան կոչէին ի Յունաց Արմէնոս էփորիոս, զմեզ կոչէին Արմէնոս Արիոս։ Եւ-ինչ բարուրանս բարդէին ի վերայ ազգին Հայոց, մինչ զի ազգաս[ք] որ մուրացիկ լինէին՝ ոչ գային առ մեզ, եւ զնաց մեր ոչ կամէին ուտել բաղումքս։ Այսպիսով, հայ քաղկեդոնականների այդ սովար զանգվածը դավանական հողի վրա այլևս հեռացել էր իր ընիկ էթնիկ միջավայրից, բայց և չէր նույնացել կամ ձուլվել համադավան հույների հետ և շարունակում էր հայալեզու մնալ։ Որքան գիտենք, Կելվեի և Սեկիրթլիի լեռներում ծաթ հայոց տակայության մասին միջնադարյան այլ աղբյուր հայտնի չէ։

Հայր և որդի Գրիգորների կազմած ժամանակագրություն-հիշատակարանը բազում առումներով կարևոր սկզբնաղբյուր է, արժանի առավել հանգամանալի ուսումնասիրության։ Ստորև անհրաժեշտ սրբագրումներով ու վերականգնումներով հրատարակում ենք այդ ժառանգված բնագիրը։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Ն. վրդ. Պողարյանի մասին տե՛ս «Պատմագիրք Աստվածատուր ...» ... բազմավեպ, Փարիզ, 1960, էջ 151—152։

[2] Նույն, էջ 38։

[3] Հ. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան*, հատ. Դ, Երևան, 1948, էջ 288—289։

[4] «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն երկրորդ (1451—1480 թթ.)։ Կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1958, էջ 140։

[5] Նմանատիպ ենք գտնում նաև 1413 թ. Աղթամարում գրված հիշատակարանի (տե՛ս «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 146) ... բնիկսությունը։

[6] «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Գ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1967, էջ 357։

[7] «Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց», հատ. IX, կազմեց Նորայր Եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1979, էջ 549։

[8] «Բյուզանդիոն», 21 փետրվարի 1912։ Նաև «Պատմագիրք...», էջ 34։

[9] «Հասկ», 1957—1958 թթ.։

[10] Յակոբ Պէրպէրեան, *Ներսէս ... (1350—1401)*, «Armeniaca»: Mélanges d'études arméniennes, Venise, 1969, p. 287—288, *համառոտագրեմ* էջ 277—278։

[11] Բ. Կիւլէսէրեան, Կ. Պոլսի հայ պատրիարքության ... կազմակերպությունը, «Հանդէս Ամսօրեայ», 1924, էջ 433—441։

[12] Н. Марр, Кавказский культурный мир и Армения, Ереван, 1995, ст. 299—308. Ն. Ակինեան, *Սրբեան Գերմանոսեանց և իր Թարգմանութիւնները ...*, Վիեննա, 1951, էջ 285—288։

[ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԲՈՒԹԱՆՈՑ ՀԱՅՈՑ, ՃԱՐԱԿԱՐԳԵԱԼ Ի ԳՐԻԳՈՐԷ ԴՊՐԷ ԵՒ ԳՐԻԳՈՐԷ ՔԱՀԱՆԱՅԷ]

Յամին ՌՅՂԹ (1399)[1] Փրկչին Աստուածեան աստ Հարազատի Թագաւորութեան Սուլթան Պայազիտի Բիթանիոյ մայրաքաղաքին Պըրուսայու երեւցաւ արիւնառուշտ նենն ի Հիւսիսոյ Հայաստան աշխարհէն։ Անգութ ճիւաղն եւ անհաւատն Լէնկթիմուր[2] արքայանակն ստանայի, իբր զմարախ հատուցեալ Չաղաթի զզաւրս իւր, վարեաց ի վերայ Փոքուն Հայոց, զոն գործեաց նման Նեռին՝ առնել զաւարս եւ կոտորածս ի բազմաց քաղաքաց։ Եւ բազմիցս արեան հեղութեամբ եկն ի վերայ քաղաքին Արծրունեաց Սենեքերիմայ արքային Հայոց՝ տապալել եւ գերեվարել առնել։ Ի վերջինքեալ Թուականէ փրկչական յամսեանն Ահեկանայ Ժ-ին, յաւուր Յարութեան Փրկչին ի միաշաբաթոյ եկն պաշարեաց զգաւառական քաղաքն մեր Սեբաստիոյ, յետ բազմիցս անվեհերաբար զոյով զէմ եդեալ զիշխանի Սեբաստացէ մեր Սուլէյմանի, որ ի սուլթան Պայազիտայ որդայն Թուրքաց էր եղեալ։ Հուսկ յետոյ անճարացեալ կռուականքն, հաստատեալ զզաչեւս ընդ անգութ վայրենի ճիւաղին Լէնկթիմուրայ՝ առանց արեան հեղլոյ յանձն առնել զքաղաքս ՌՅՂԹ յամսեանն Մարերի յութ զգալուծս քաղաքին յանձնեցին։ Բայց յետ մի ինչ յաւուրցն անցանելոյ անողորմ ճիւաղն զրժեալ յուխտի իւրում, հրամանս խիստս եհան զաւրաց իւրոց պեղել զուբս մեծամեծս մինչ Տ-Ր (4000—5000) անձինս ի կենդանոյն ծածկեալ հեղեալ ի ներքս հողոյ, զատն ատնջանաւք առանց արեան հեղլոյ մատնեաց ի մահ, զոր մեղաւոր զըրիչս ոչ կարեմ ի գիր զրուցեալ ի յիշողութիւն[3] յետագայ Արամազնեայց։ Ո՛հ, ո՛վ քաղաքիդ փառաւորելոյ, նոխացեալդ Սեբաստ, մայր ամենայն քաղաքաց, ո՞ր այդ աւերացան եկեղեցիքդ ի քեզ, ո՛հ, ո՞ւր իմաստասէր քահանայք, ո՞ւր ընչեղք[4] վաճառականքդ, ո՞ր եղեւ բնակութիւն քաղաքիդ՝ ոչ խնայեալ ծերոց եւ տղայոց։ Ո՞ր մերկացար ի զարդուցդ։ Անհնար է ինձ հանդուրժել առանց կական բառնալոյ, զայս ամենայն նեղութիւն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց։

Ո՜վ կանխագուշակդ Երեմիա, ո՞ւր ես, առ զքնարդ եկ առ մեզ հեծել եւ ողբալ ընդ մեզ՝ զդառնաղէտ անցս անցուցոց...։

Բ. Չուիդ-պանդխտութիւն

Զայս ամենայն տառապանաց եւ կոտորածոց լեալ էր մեզ իբր անհնազանդ աղանդս Արամեանց զաւակ եւ զպայծառութիւն։ Սուղ ինչ ժամու գիշերոյ ի խորհուրդ մտեալ ի տան Ջոյ Տանիկի յաղագս գաղթելոյ ի տար աշխարհ, լաւ համարեցաք ողջառութեամբ եւ ի տառապանս կրել յերկիր օտար, քան աստ ի յլկումն ընտանեաց մերոց ի ձեռս անաւրէն բռնաւորաց։ Բայց ո՞ւր՝ ոչ էր մեզ գիտել, այլ կամք Տեառն եղիցի. յաւ իմն համարեցաք ի կողմանս Բիթանիոյ ընդ հովանեաւ Աւսմանեանց ապրել, քան աստ։ Ի թուին փրկչական ՌՆ (1400) յամսեանն Մարտի յուղի անկեալ ասմի ընտանեաւք ի Բիւթանիոյ [հասաք] զատորոս լերինն Սաղափէնեայ՝ մերձ ի զղուղաքաղաքին Սարիու Տողանիս կոչեցեալ աւանին Յունաց ի մէջ գետոց Սաղանէրու եւ Սաքարիս կոչեցելոց։ Առաջնորդութեամբ ի Յունաց զգետ Սաղանէրու, թէ աստ, ասեն, էր ամարանոց Թագաւորին Յունաց։ Եթէ կամիս տեսանել ինչ՝ յառաւօտեան պահուն նստ ի նաւակ, երթ ի մէջ գետոյ ակաւն, հայեա ի խորութիւն ջրոյ սպասնել [զ]քարինս մարմարեայ եւ զբեկորս բաղանիս եւ կենեայ սիւնս՝ զի էր ի հնումն բաղանիս արքայական Յունաց։ Տէր կարծանեաց սա վասն սրբանալոյն որդւոյն Աստուծոյ. այն մնացորդ մասն քանից ոչ է իմ ընծայեալ զհաւատս անբիծս։

Իսկ գալով զխատոր մեր զՋոյ Տանիկ եւ մարդկաց քահանայք Տէր Կարապետ, Տէր Նշիկ, Տէր Գաբրիէլ եւ ՆԾ (400) ընտանեաւք գալով, կազմեցաք զկրանս մեր ի նոր հայրենիս մեր անտառապատ եւ անուանեցաք Տանիկապատ, զի յոյժ գեղեցիկ էր, եւ ընդ մեզ ունէաք մասն Սրբոյ Կարապետի ոսկերց եւ մասն Սրբոյ Նշանի Հաղբատեայ[8], կազմեալ էր մեզ ձեռամբ մերով փոքրիկ մատուռ, անուանեցաք զմատուռն սուրբ։ Ուստի ոչ գալով մեզ զօրավիզ, ձեռն ետուն մեզ մաուցմանց՝ հաւատով մահմէտական Թուրքք, զի սիրէին զմեզ յոյժ։ Կապադոկ Յոյնք եւ[ս] էին մեզ հարեւան, նոքա եւս խոնարհ ակամբ հայէին մեզ, եւ մեք անուանէաք զնոսա զեղբարս ի Քրիստոս, եւ նոքա՝ այսինքն Սարիուղանցի Յոյնք, կամէին հաւատացանել մեզ վճարս բաղանիս, բայց երկնչէին ի Տանիկաց, մանաւանդ ի Փէյզի էֆէնտիոյ։ Իսկ գալով՝ Սաղանէրարեակ Յոյնք

խումբ հայքն ի մեծատանց Տաճկաց. նոքա ոչ կարէին վճարել, զի Հեռի էր ի բնակութեանց մերոց՝ Սալոնիկ ասի, [զի] ամբողջովին արքունական աւետարանօք էին, այլազգիք կոչէին Սալոնիկցիք։ Էր անուն քաղաքին Մաքսիմինեայ՝ յանուն զօրաց Մաքսիմիանոսի արքային ի Հռոմ։

ՊԾԳ (1404) Թուին աշխարհական եղեւ տարափ խիստ փոթորիկ, զկրակս մեր մաղաղտօք զերծաւ, Հաստատեալ անկար ի չու[9] առաժամանակեայս, զի եղեւ գլխովին յաղագս Հորդելոյ Սաբաքիս զետոյն ի նոյն ամի քաղաքս վճարեցաք ի յանդեայց, եղեն ազգական մեզ այլազգիք, մանաւանդ Փէյզի ակայն։

ՊՆԹ (1409) Թուականին փրկչական եկին առ մեզ Զայթէնի Հայք. այլազգիք անուանէին ոտինի էյրի էրմէնիլէրս[8]։ Նոքա էին ՌԵԶ (1506) ընտանիք, բաժանեալ ի խումբս խումբս բնակեցան ի լերին Կէյմէռ եւ ի լերինս Սէկիրթիլու՝ ապառաժուտ լերին, մերձ յապարակին Փէյզի ակայրն։ Նոքա եւ[ս] չար ակամբ Հայքին առ մեզ։ Իսկ Ցոյնք՝ նոքա եւս ասէին. վասն բաղբաներոյ ի Հայ լեզուի ուղղադաւանութեան կոչէին ի Ցունաց Արմէնոս էֆտիրոս, զմեզ կոչէին Արմէնոս Արիոս։ Ինչ-ինչ բարուցանս բարգէին ի վերայ ազգին Հայոց, մինչ զի ասցաւ[ք], որ մոռացեալ լինէին՝ ոչ գային առ մեզ, եւ զհոգս մեր ոչ կամէին ուսել բազումք։

Տէր է որ չինէ զառն անանկի. սոյն Փէյզի ական էր կարի յոյժ մեծատուն, զաղցր Արամեան, մանաւանդ զտանուտէր Զօզ Տամիկն՝ Հայքն մեր սիրեաց ի սրտէ, կամէր ամբողջովին Հայանալ, զիւրսն եւ մերայինան ոչ որոշիւր։ Ծա՝ մեղաւոր գրիչ Գրիգորս, բազմիցս երթայի յապարանս նորա ուսուցութեան, եւ ոչ զոյր թիւ անտանց՝ կով, ոչխար, արջառ եւ այլն։ Պիտոյ ժամու զոյր ակին յապարանէ իւրմէ էր ախոռատեղի, անուանիւր Թամ, տարածութիւն արտօրէից Հասանէր Դ (4) ժամու տարածութեամբ զետի լերինն Դռարթ, մերձ առ ծերունազարդի Աճմատայ, որ յորջորջիւր Փիրի Աճմատ։ Սա էր եւս մեծատուն, բայց յաչխարհի անզաւակ եւ անժառանգ զոլով, պատգամեաց Փէյզի ակայի որդւոյ[10] Ապտիւլ Քէրիմայ մինչեւ զմահ զամենայն Հոգս տան իւրոյ Հոգայցէ եւ յետ այնու իւր անուամբ կոչեսցի զապարանքն, ոչ լինէսցի Պըն[11] Փէյզի, այլ Պըն Աճմատ Ապտիւլ Քէրիմ։ Սոյն եղեւ ի Յունաց յափշտակեալ էր Փիրի Աճմատ, երկիր ըստ կարի էր ընդարձակագոյն, Փէյզի ակայն էառ Խ (40) ընտանիք եւ Զ (6) ընտանիք ընդ իւր։ Եւ Փիրի Աճմատի ի Հայոց աղ-

դէն էին մշակք Հոյ Տանիկի ժողովրդէնէ Զ[12] (6) ընտանիք, եւ որդ-ւոց իւրեանց։ Նոքա ժողովէին ցորեան եւ զամենայն ընդեղէնս հաւաքէին ի միում վայրի, ամէնքին կալս. [եւ] անդէն յորջորջեցաւ Խասկալ։ Իսկ Փէյզի աղան յոյժ սիրէր զմշակս եւ վասն սիրոյ նոցա զՏէր Նշիկ քահանայն եւ[ս] էառ ընդ մշակացն հանգերձ՝ զի մատակարարեսցէ զհոգեւոր պիտոյս նոցա, յառաջագոյն ոռնիկս քահանային։ Նախս ապարանիկ վճարմամբ՝ յաղագս ի հոգեւոր մխիթարութիւն մշակաց եւ հաստատութիւն նոցա, անդ շինեաց փայտակերտ մատուռ, անուանեցաք Սբ. Նշան եւ կատարեցաք յանունն Տրէ Ա.։

Ի բանակէ Հոյ Տանիկի տարեալ էր Խ (40) տուն, ուստի ի Յունաց էր որ կատարէին զգործս երկրագործութեան նախ քան առ ի պանդխտութեան մերում։ Յորժամ եւես զմեզ ի հեզութեան մերում՝ զկիրս նոցա յարեցաւ ի մեզ, տարեալ զչատատունն քահանային հանգերձ բնակեցոյց կեցցեն յագարակի իւրում։ Իսկ գալով Յունաց՝ յոյժ խուշէր, զի էին ապերախտ ու գող էին։

Ի Յունաց բազումք էին, որ բնակէին ի լերինն Բանայիկու Դոսպիթ, որ Թարգմանի ի լեզուի մերում Տուն Աստուածածնայ։ Նոքա յոյժ վնասակար էին մեզ եւ աւազակաց, հոգեւոր հայրն մեր Տէր Կարապետ բազմիցս Թախանձէր իշխանն մեր Փէյզի աղան հալածել զնոսա յաստի եւ զկնաւն հանձնել Հայոց։ Զինչիր քահանայքն խուլ ջիւն ինչ երեւէր, զի ի նոյն միջոցի խարխուլ սէրութիւն կայր յերկրմանն. անհնարին երեւէր մատալուն կարծանումն։ [Փէյզի աղան ասէր]. Յորժամ բարձցի խուճապս սէրութիւնն՝ տուք ամենեքին ձայն այրենց եւ կամ պարսիկս, եւ կամ չարքեմք։ Եթէ կամին զանձինս իւրեանց ապրեցուցանել՝ ընդունելով ընդունին զսուրբ կրօնն մեր եւ սուրբ մարգարէին Մուհամմէդի։

ՌՆԺ (1410) ամին ի պանդխտութեան մերում ի Սա[րա]չ կոչեցեալ քաղաքէն Կիլիկիոյ, չհանդուրժեալ[13] տառապանաց Արաբացւոց, ութսուն ընտանիք գաղթեալ դիմեցին առ մեզ։ Նոքա յոյժ խուռնէին ի Յունաց, կամէին ի կենդանեացն յօշոտեալ այրել։ Իսկ բարձեալն Հայոց Փէյզի աղան յոյժ ուրախացաւ՝ որժամ եւես զռուսս, զի էին բաշ պատերազմիկք։ Տարեալ բնակեցոյց առ ի լերինն կոչեցեալ Դուրիթ՝ յաղագս պահպանելոյ զեղալուած որդւոյն իւրոյ Աւգաիւ Թէքիմայ, եւ միշտ խրախուսէր զՀայս աներկիւղաբար մարտնչիլ ընդ Յոյնս։

Յամին ՌՆԺԵ (1415) Հայք եւ այլազգի մուսլման[ք] յԱնատո-

յետ խումբ-խումբ գաղթէին ի կողմանս Բիւթանիոյ, իսկ Յոյնք մեկնէին ի անկողնէ իւրեանց։ Աւերեցան քաղաք[ք], եւ ի տեղի Յունաց բնակէին Հայք, իսկ այլազգի մասնաւանք կազմէին բնակելոյ իւրեանց յատուկ գիւղս։ Ոմանք ի Յունաց ընդունէին զէնն Մուհամմէտի[14] աւանդանայեն։ Ի սոյն ամի ի Նեղս արկին ի Մարաշէ գաղթեալ Հայք Դուալիթարեան։ Հայք ի զօրամանէ Փէյզի ակայրն երկու աշխետս տունտանեցին, Հայք գալով առ Տէր Նշին, բառ Հայաստանեայց միոյ աստուածաբանութեամբ պատմեցան։ Ի սոյն գիտակալէ յարուցան Յոյնք եւ կամէին զնասել, բայց իւ իւրք ոյինչ էին ձեռնհաս, զի բաշ եւս տեղեակ էին յայլազգաց ձեռնտուու լեալ առ Հայս։

ՌՆԿԶ (1416) ամին փախեան Դուալիթարեան Յոյնք, այրելով գաւառն եւ գիւղն ամբողջովին, ոչ մի ինչ զերծաւ ի հրոյ։ Անց գնտեցեցան եւ կազմեցին բնակարանս Հայք՝ գաղթեալ ի Մարաշէ և կազմեցին մատուռ Սբ. Աստուածածնայ եւ կատարեցին նաւակատիք[15] նաւասարդի Դ. Յետ կատարելոյ զնաւակատիս մատրանն խնդրեցին առ իւրեանս քահանայս՝ վասն կատարելոյ զծէսս[16] Հայաստանեայց եկեղեցւոյ, փոխան քահանայի ամին առ իւրեանս զ ծերունի Սրապիոն արքայեաց անապատական կուսակրան վարդապետն։ Նա բաղում գուրգուրանաւք չարչէր[17] զհաստատեալ ժողովուրդն իւր եւ առ մատրանն կազմեաց իւր ժախիւք ԺԸ (18) խուցս, եւ բաղումք յայլազգեաց այց եղանէին առ Տիրամայր փայտեայ պատկերին, եղեւ անդ ուխտատեղի Հայոց ազգին։ Փայտեայ պատկերն գտին անդ առ ի փլատակաց հրկիզեալ յակերակաց։ Դուալիթի Բանտային քառն փոխեցաւ Տուն Աստուածածնայ։

Յամի ՌՆԹ (1420) Սարիս Տաւղանցի Յոյնք ի Ե Հրոսից ամոոյ յասուր պարծաստահերութեան Տեառն զնացեալ զարսարայս Քոյ Տանիկի ուխաններն վառել[18] վասն հակառակութեան։ Ի սպառաուրացն[19] Քոյին, մանաւանդ Զէյլան Կարոն, բաղում աշխատանաւք բնրանեալ յերից ի Յունաց, ամին պաշտպանեալ ի Տանիկաշէն, իսկ Քոյն մեր յանձնեաց Փէյզի ակայրին։ Նա կապանաւք բանտարկեաց ի տան իւրում, յետ միոյ ամաց զերկուսն յաշտակեաց զլխատեաց, իսկ միւն յարիցունց[20] յանդէպ յասանի իւրեանց ի Սարիս Տաւղանի ի վերայ բլրոյ խաչեաց, որ կոչիւր Եղիաս։ Ի վերայ գագաթան բլրոյս զոյ ահն ջրոյ ցուրտ եւ քաղցրահամ։ Իսկ մենք սատրին տխրեալ ցաւեցաք ի սոյն եղելութեան։ Նա եւս տեսեալ մերս են-

զօրութիւն՝ սաստիկ յանդիմանեաց զնոսա, ասելով. «Դու փութիփա-րատայոյս պոյյա նախանձուրս»[21]։ Նշուցեալ Յունաց անդ Թագաւորն

Ի թիւ. Տեառն ՌՆԼ (1430) Սիսեան գիւղն Յունաց աւարելով ա-ռեցին այլազգիք, ասպատ, զի գիւղն այն յոյժ գեղեցիկ էր՝ յանդէպ Սապատնիի գիւղն, որ զնանապարհաւն տան Աստուածածնայ ի գե-րայ բարձր բլրոյ, անուն յաւերակի անուանեցին Ձորթյան եւ մայու-ման մեծատունք Ճ (100) տան չափ անդ բնակեցան։ Եւ առեալ նո-ցա, ի Հայոցս քաղաք եղելոց առին ի մէջ իւրեանց, իսկ Փէյզի ա-կայն զարհուր առ մեզ եւ սաստիկ յանդիմանեաց զՃոյ Տանիկի Հայրն մեր, ասելով. «Առանց գիտութեան իմոյ ոչ որ մեկնեսցի յաշ-խարհս, զի եղեա ոչ բարեմտութեամբ տարին սոցա յառաջեա»։

ՌՆԽ (1440) թուին Տէր Կարապետ եւ Հայրն իմ գալիք Գրիգոր վախճանեցան, իսկ ես՝ մեզպայից Սեւաստա, Ճոյ Տանիկի եւ ընդ-հանուր ազգայնոց ընտրութեամբ, եւ Տիգրան անուամբ մի ազգա-յին յերցարդ գնացաք ի քաղաքն Պրուսա, առաջ զնարդ քահանա-յութեան։ Ես անարժանս կոչեցայ Տէր Գրիգոր, իսկ Պարտամեան Տիգրանն՝ Տէր Կարապետ։ Ի տան Աստուածածնայ զձեռնադրող հո-գևոր հայրն մեր էր Աբրահամ սրբազան արքեպիսկոպոսս։ Տէր Կա-րապետ Հոգեւոր եղբայրն իմ գնաց ի տեղի իւր առ Մարաշցի եղբարս մեր ի տան Ս. Աստուածածնայ։ Յաւուր յայնմիկ ուխտեցի ես զթու-թիւն հայր իմոյ շարունակել։

Թուին ՌՆԵԴ (1453) Տեառն Փրկչին մերոյ, իսկ յԱբրահամականս թուին ՌՆՆ հարիւր Բ յամսեանն Մարերի ԻԱ, Յունաց ամսոյ Մայիս բատն եւ ուր Սուլթան Մահմէտն քաղաք մայրաքաղաքն Յունաց Կ. Պոլիսն... Զենի աերենոյ ՌՃԻԱ (1121)[22] Յունաց անդ կացաւ ի ձեռս Տաճկաց։ Յետ երկուց ամաց եղեւ մարդահամար ի կողմանս յայս-միկ եւ ըստ հրաման կազմել բնակարանս փայտեայ կամ քարէ։ Ի միջի ԾԵ (55) ամաց եղաք Ո (600) տուն, բացի Փէյզի ակայի կալուածա-կան ծառայից, զի Խ (40) ընտանիք վասն իւր եւ Զ (6) ընտանիք որդւոյ իւր Աբտիւլ Ճէլիլ[23] Փիրի Անհատ. Զ (6) ընտանիք եղին Ծ (50) ընտանիք, իսկ Զ (6) ընտանիք Փէյզի ակայի որդւոյ եղին Ժ (10) ընտանիք։

Ամենեքինքս կազմեցաք բնակարանս փայտեայ։ Եթէ որ ան-սաստեսցէ հրամանաց արքային՝ յաջորդ մատնեսցի անձն այն։ Եւ եղեւ գլխահարկ. տասնեւհինգ տարեկանէ վեր պարտի վճարել առ տէրութիւն Մ (200) փարա մինչ ի ԿԵ (65) ամս։ Ոչ թէ միայն առ

Հայս, նոյն եւ ի Ծունեաց ամենեցունցն եղեւ գլխաւորս, իսկ ազգա-
տաց կամ պանդխտաց տուրս ոչ գոյ. եթէ գիրն առաւելացէ թէ ազ-
գատ է Հայ՝ եւ տուրս[24] ոչ առնեն. Իսկ ի Ծունեաց աղքատաց Մ (200)
փարա, Հարուստաց երկու հարիւր Ծ (50) փարայ պարտին վճարել առ
ոստիկանն, իսկ քահանայք եւ վարժապետք ոչ վճարեն տուրս մեք
եւ Ցոյնք։ Ի տանց եւ յինքնեցնեաց եւս առնեն. 2 փարայ տանց, իսկ
յինքնեցնեաց եթէ քարուղիք իցէ՝ ՃԿ (160) փարայ։ Եւ եկն առ մեզ
մատգիր Մուսայլիմ աղայն [եւ] Նազիֆ Մահմուտ ազէն, նոքա դա-
տակոյց են զմեզ մանրամասն բոլոր կանանձի, իսկ Նիկոմիդիա էր
Ղալմախեան ազէն։ Իսկ Սարիու Ցողանիցիք եւ Սապանճեիացի Ծու-
նաց մեծամեծաց մեկնեցան դէպի Վրաց տուն, եւ ոմանք՝ ի կող-
մանս Ատրնայի եւ Փիլիպէու կողմն։ Ըզկնի երից ամաց՝ ՌՆԾԵ
(1455) սկսան հարկս առնել ի ննջեցելոց Ժ-Ժ փարա (10) ի մեծաց,
իսկ ի փոքունց Զ-Զ փարա (6)։ Առանց հրամանագրի գնդակաւոն
թաղելոյ հրաման ոչ գոյր։ Հրամանագիր զննարկին.

Ժամագրին յիշատակ բաժնայն համիչի թանի չայթանի մահրամի
տարիներին քոքու փաշաու։ Փուլանի քուփարանին ալլի փոլյան
քոփարայ մուրու ալմուշ ալտուողունտան լեզայի մահրուքէնի սի-
զա բինհան ուլունիր թոփրաք տախի քափուլ էթմէզ խոա նէ չարէ նէ
չարէ գէյիին ափչարինինտա պիր խանտան ալիյ բինլա աթիյ թոփ-
րախ տաւրտուրից չղանալիղ չինկալից կէլէնին ղոշա փափա. չէն
Հասան Մահարրամալինա[25]:

Առաջ խիստ լաւ էին ընդ մեզ, իսկ յետոյ աւերեցան ընդ քրիս-
տոնէից, մինչ զի էջ կամ ծի հեծանելոյ հրաման ոչ եռուն քրիստո-
նէից, այլ միայն ջորի։ Նախա չեղաւէի կարմիր սիէէ կամ գեղին,
կանայ ընաւ երբէք ոչ թէ զգենլոյ, այլեւ բանելոյ եւս հրաման ոչ
գոյ։ Ննջեցեալք յորժամ[26] տանին յինքնեցին՝ առանց երգեցողու-
թեան, ննջեցելոյ ժամուն զանգակի եւս հրաման ոչ գոյ, այլ տախ-
տակահար կամ ժամակոչ այլն պարտի ցած ձայնով կոչել։

Ի թուին ԹԺԺ (910/1461), ի թիւ փրկչական ՌՆԿԱ (1461) տեարք
Սամսոնոյ ի խորհուրդ ժամն յերկուց զեաւաց միացման՝ ի յարեւ-
մտակողմանէ գիւղիս զգետն Սապանճեիու թափել ի Սաքարիոյ գե-
տոյն... Առատուած ամբարտաւանից հակառակ կայ... եւ ցրուէ զխոր-
հուրդս նոցա, եւ յաւրէ յայնմանէ կոչեցաւ աւանս Ատա կամ Ատա-
ծոյ ի Տանկաց բարբառ, իսկ մեք յորջորջէաք Տանիկաշէն, իսկ
Սարիու Տաւղանիս գիւղն Ծունեաց Սարը Տաւղան՝ յաղագս չէկ ծնա-

նելոյ կանանց։ Իսկ Փէյզի ախայր երկրպագուեաց որ չինեցին զտա-
նըս իւրեանց տեղին հոչեցաւ Փէյզի ախայրին անուամբ Փէյզիլի։ Յա-
ղագս անասնաբոյծ ժողովրդոց կարգեաց տասն Ժ (10), անուանեաց
Թամլըզ՝ Փէյզինին Թամլըզը վէ ատըն գուլլարի։ Եւ ի սահմանացս
արտաքինից արտաքոյ մի տեղեաց չինեաց իւր պահապանաց բնա-
կարանս Լ (30) տուն, յաղագս խնձորենեաց հոչեցին Փէյզինին էլ-
մալըը, էլմալըք։ Իսկ անդ զտանիւր ի Տաճկաց Ե (5) տուն Փէյզի
որդւոյ Այսափէլ Փերիմայ[27] տեղւոյն, հոչեցին յանուն Ահմատայ ծե-
րոյն Փիրի Ահմատ։ Անդ եւս կարգեցին մատուռ խմն Սբ. Ստեփան-
նոս անուամբ։ Դուրիթ գիւղն Յունաց անուանեցին Մարաշ[28] Գա-
բիպլէրի[29]։

Ի Թուին Հայոց Ծժբ[30] (912/1463), իսկ փրկչական Թուի ՌՆԿԲ
(1462) եկն նոր միւսէլլիմն։ Սա եւ արգելոյր խաւսիլ Յունաց իւ-
րեանց բարբառով, այլ Թուրքերէն պարտին խաւսիլ։ Բազմիցս ընդ-
դիմացան Յոյնք՝ բնաւին ոչինչ, զի դպրոցս նոցա միշտ խուզար-
կէին ի Յունաց աղթարմայք, որք ընդունակ կային զգէնս Տաճկաց։
Սոքա էին զենիլք[31] Յունաց, իսկ մեք պահեցաք զմայրէնի լեզուս
մեր շնորհիւ Փէյզի ախայրին, նա զմեզ յանդորրու պահէր։ Իսկ Մարիոս
Տօղանցիք կային յամառ վիճակաւ, բայց ի նոցանէ եւս զաղթեցին
ի տար աշխարհ յերկիւղէ այլազգեաց, ոմանք նահատակեցան ի
հաւատոյն[32] Քրիստոսի, մնացին անդ իբր անձշան անձինս՝ նոքա
եւս աղքատ վիճակաւ, սահմանք[33] արտաքինցն նոցին՝ մինչ ի հա-
մուրջն Խ (40) կամար, իսկ այլազգիք զբազումս յափշտակեցին եւ
յանդէպ կամրջին արարին հրաձատեղի իւրեանց։ Բնակէին անդ
հուսակրաւն զառնիչաց յաղագս աղաւթելոյ կենաց արքային եւ
պահել անբիծ զհլւյամուԹիւն, եւ արեւելակողմն ասանիս զոյ զար-
ձեալ բնակարանս զառնիչաց առ փոքրիկ յնակաւն։ Ասա ի Յունաց
բազումս կոտորէին կամ Թլփատէին, եւ զբազումս աղջկունս իւրա-
ցուցեալ կամ վաճառէին եւ կամ ամուսնանային ընդ նոսա, վասնզի
անհովիւ եւ անտէր մնացին[34] Յոյնք։ Եւ զմեզ սիրէին իբր եղբայրս
իւրեանց, ասելով. «Էրմէնի մահանըըլար պիզիմ գարտաշլարը[35],
իսկ զալով Յունաց՝ «Ենեզիր ռում կեաւուր խըյանէթ խինոսիլարը[36]։

Ահա Թողում զուգնաբեալ շարակարգեալ անցքս ի յետագայիցն.
որք ընԹեռնում զսա՝ ի միտս ածցին Թէ զինչ նեղուԹիւն եւ զիպու-
ծակ եկաք առ բնակել, կամեցաք եւ եղաք ընդ քրիստոնեայս
Քրիստոսի ծառայ [եւ] ընդ մասլմանս՝ մասլման, մինչ անցաք

ընդ նեղ պատասխանէն։ Կամէի բազում գրել, բայց նախ պաշտաման ծանր է եւ երկրորդ՝ ծերացայ յոյժ, ոչ եւս կարող եմ շրջել աստ եւ անդ... Փառք եւ գոհութիւն Արարչին մերոյ անսպառելութեան, զի ամե-նայն հասոյց զձեզ Եղիեր ամենայն իբր զորդին Աբրահամու Աւրհ-նեալ է կամք նորա յաւիտեան, ամէն։ ՌՆԺԶ (1466) թուին փրկչա-կան, իսկ թուին Հայոց ՊԺԴ (914/1465)։

SAMVEL MOURADIAN

THE XV CENTURY HISTORICAL SOURCE

A historical source concerning the period of organizing the Armenian settlements in western Asia Minor was published in January 31 and February 2, 1912, in the newspaper «Byzandion» and later on in A. Piperian's and V. Eghishian's book «History of Adapazar Deified City» (Paris, 1960). However, it wasn't included in the «XV Century Manuscript Colophons» compiled by L. Khachikian and «Small Chronicles» by V. Hakobian.

The source witten by clergyman Maruke, according to S. Purmayan's commentary in «Byzandion», initially belonged to clergyman Hovhannes Sgherdtsi and was copied by S. Saprichian in 1889. Two decades later it was sent to G. Chuvanchian and then published by S. Purmayan. S. Saprichian evidenced that the «Chronicle» «...starts from year of 900 and goes up to year of 1500 consisting of 28 stories».

Until now, the clergyman Maruke is unknown in Armenology. H. Acharian mentions five clergymen with the name Maruke but none of them is the source compiler. Several circumstances allow to look for him in Jerusalem. Two clergymen named Maruke are mentioned in the XV century manuscripts. It is quite possible that one of them, the priest of St. Harutyun church, is the compiler of our source.

The main purpose of father and son Grigors, the authors of the text under investigation, is to present the history of 400 families, their relations with Greeks, etc., who, as a result of Tamerlane campaign, were forced to leave their homeland (Sebastia) and settle in Adapazar.

Three main episodes must be marked in this text.

1. Until the recent times only name of bishop Hovakim was known as the ecclesiastical leader of Bursa diocese. The source mentions another name of Bursa's ecclesiastical leader in 1440 bishop Abraham. It confirms that mishop Hovakim (later on the

first Armenian Patriarch in Constantinople) alreaby had left Bursa before 1440.

2. The text reveals how the extension of the Ottoman Empire reflected on the Greeks, who were partly forced to lave their homeland, while others were converted into Mohammedanism.

3. The source contains new facts on settlement of Kalkedonian-Armenians (diophysites), their interconfessional, interethnic relations, etc.

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 [illegible]
2 [illegible]
3 [illegible]
4 [illegible]
5 [illegible]
6 [illegible]
7 [illegible]
8 [illegible]
9 Իմա՛ «[illegible] [illegible]»
10 [illegible]
11 Իմա՛ [illegible] ([illegible]).
12 Ջ (900)
13 [illegible]
14 [illegible]
15 [illegible]
16 [illegible]
17 [illegible]
18 [illegible]
19 [illegible]
20 [illegible]
21 Իմա՛ [illegible] [illegible] [illegible] է [illegible].
22 + [illegible]
23 [illegible]
24 [illegible]
25 [illegible]
26 [illegible]

17 Նկրինէայ
18 Մասաց
19 Տե՛ս «Պանդուխտները»
20 Բթն
21 դզննիր
22 Հասաարի
23 գասՀմաս
24 Մնացին
25 Տե՛ս «Ներաշխարհիկորժամ Հայերը մեր Արդյունքների մեջ»
26 Տե՛ս «Մասր Հայերի ամենախոսս Նենք Քաղաքներին մեջ»
27 Բթն

ՊՈՂՈՍ ՉՈԲԱՆՅԱՆ

ՀԱՅ-ՋԵՆՈՎԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (ՆՈՐ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ)

Արևելք-Արևմուտք առևտրին և մասնավորապես, Պարսկաստանի և Եվրոպայի միջև առևտրական հարաբերությունների զարգացմանը մեծ չափով իր մասնակցությունն ու նպաստն է բերել Սպահան տեղափոխված հայ վաճառականությունը։ Նոր Ջուղայում XVII դարի կեսերին առանձնապես բարձր դիրք գրավող հայ առևտրական գերդաստաններից էին Սաֆրազյանները, որոնց գերդաստանի հիմնադիր են համարվում խոջա Խաչիկն ու նրա որդիները՝ խոջա Սաֆարն ու խոջա Նազարը[1], որոնք շահ Աբասի բռնագաղթի ժամանակ Հին Ջուղայից տեղափոխվել էին Սպահան։ Գերդաստանը իր հզորության գագաթնակետին հասավ խոջա Սարֆրազի ժամանակ։ Նա Նոր Ջուղայի քալանթարն էր, տիրացել էր մեծ հարստության, հսկայական ազդեցություն ձեռք բերել շահի արքունիքում և բարձր հեղինակություն՝ հայ ժողովրդի մեջ։ Խոջա Սարֆրազը մահացել է 1658 թ.[2]։ Նրա տապանագիրը, որ բերված է Տեր-Հովհանյանցի աշխատության մեջ, խոսուն փաստ է նրա վայելած հռչակի մասին։

«Ա՜հ իմ անման խոջայ, որ էիր նայող քաղաքոր,
անուամբ Սարֆրազ կոչի՝ որպէս զօրեղ դատաւոր,
խելօք, քո ճարտար լեզուէդ զարմանայր ամէն թագաւոր,
շատ բէկեան քո տեսոյդ փափագ, անհամար բէկեան
փառաւոր...»։

Ըստ Հարություն Տեր-Հովհանյանցի, խոջայ Սաֆրազը Ջուղայի քալանթարի պաշտոնը ստանձնել է 1636 թ. հոր՝ խոջայ Նազարի[3], մահից հետո։ Եվ իրոք, 1640 թվականից սկսած խոջա Սաֆրազի (Սարֆրազի) քաղաքապետ լինելը դիտվում է «Իշխանութեան գաւազանագիրք Ջուղայոյ», «Յառաջնորդութեան մերոյ Ջուղայիս», որ

պարոնութեան Հայոց խօճայ Սաֆրազին», իսկ ինքը ստորագրություններում հիշատակվում է որպես «իշխան մեծի ազգիս հայոց», «իշխանաց պարոն, իմաստուն և բարեպաշտ», «պարոն խօճայ» և այլ տիտղոսներով[4]: 1658 թվականից սկսվում են Սաֆրազի եղբոր՝ խոջա Հովհանի, քաղաքային պաշտոնում գտնվելու մասին հիշատակությունները[5]:

1996 թ. Ջենովայի պետական արխիվում աշխատելու ժամանակ[6] հայտնաբերվեցին հայ ժողովրդի պատմության վերաբերյալ մի շարք փաստաթղթեր, որոնցից երկուսը կարևոր են ինչպես խոջա Սաֆրազի, այնպես էլ հայկական առևտրի պատմության մի շարք հարցերի լուսաբանման համար:

Նամակները գրված են իտալերեն և ուղարկվել են 1652 թ. Սպահանից՝ Ջենովայի Հանրապետության հասցեով: Դրանցից մեկը գրված է խոջա Սաֆրազի անունից և ստորագրված է նրա կողմից հայերեն, իսկ մյուսը ուղեկցող նամակ է, որի հեղինակն է Սպահանում իտալերենի թարգմանիչ ֆրա Գրեգորիո Օրզենիգո Օրմանոն՝ Ս. Ֆրանչեսկոյի միաբանությունից: Նամակները վերաբերում են նույն խնդրին, այն է՝ Միջերկրական ծովում ֆրանսիական ծովահենների կողմից բռնագրավված հայկական «Լեվոնտ» նավից հափշտակված բեռների քանակից 14 կապոց մետաքս հայտնաբերելու և այդ բեռը Ջենովայի Հանրապետության կողմից հայերին վերադարձնելու հարցին: Խոջա Սաֆրազի կողմից Ջենովային շնորհակալություն հայտնելու փաստը, և այն, որ նշվում է թե Պարսից թագավորը ևս շատ ուրախացել էր՝ լսելով բեռների մի մասի փրկվելու մասին, ցույց է տալիս, որ հայ վաճառականները եղել են Նոր Ջուղայից, իսկ հայկական նավը գուցե և պատկանում էր հենց իրենց: Ուշագրավ է նամակում եղած այն նշումը, որ հայկական նավը բռնագրավվել էր ֆրանսիացի ծովահենների կողմից: Հայտնի է, որ 1649 թ. ևս ֆրանսիական ծովահեն Անրի դը Ննդլյուր դը Բուլյեմոն բռնագրավել էր հայկական մեկ ուրիշ՝ Անտոն Պողոսին պատկանող «Մերիանոս Արմենոս» նավը[7], իսկ 1650 թ. հայ վաճառականների նկատմամբ գրվել էր բարձր տոկոսի չափով մաքսատուրք, ստիպելու նրանց այլևս չայցելել Մարսել[8]:

Ստորև հրապարակվում են վավերագրերի ինչպես իտալերեն բնագրերը, այնպես էլ նրանց հայերեն թարգմանությունները: Ցուցաբերած սիրալիր օժանդակության համար շնորհակալություն ենք

հայտնում Ջենովայի Պետական արխիվի վարիչ և կոնսուլտանտ պ. Ասերիին՝ արխիվում աշխատելու, ինչ պրոֆ. Գ. Ուլուհոջյանին ու իտալացի երիտասարդ հայագետ Մարկո Բայսին՝ իտալերենից փաստաթղթերի թարգմանության ժամանակ ցուցաբերած օժանդակության համար։

62r//Ser^mo Prencipe é signóre

